

ISSN 2579-2741

№ 1 2019

ԵՐԿՐԱՆ **ՓԻՏՆԻԿԱՆ**

ECONOMICS Scientific

*«Առանց դրակրթիկայի շտաբթյունն անտունէ է,
առանց շտաբթյան՝ դրակրթիկան կոյր է»:*

Էմմանուէլ Կանս

Գիտական հանդես

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԳԻՏԱԿԱՆ» գիտական պարբերականը հրատարակվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ /Հիմքը՝ քաղվածք 2019թ. հունիսի 17-ի որոշումից/:

Գլխավոր խմբագիր՝
Աշոտ Մարկոսյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Խաչատրյան

Թողարկման
պատասխանատու խմբագիր՝
Լուսյա Մեհրաբյան

Խմբագրական խորհուրդ՝

Հրանտ Բագրատյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ նախկին վարչապետ

Բաբկեն Թունյան
տնտեսագետ

Աշոտ Մարդոյան
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

Հայկ Սարգսյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Արկադի Խաչատրյան
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

Միքայել Մելքումյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Սամվել Ավետիսյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Վիլեն Խաչատրյան
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

Միքայել Միքայելյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Սամսոն Դավոյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Հրայա Ծայնեցյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Կարեն Ներսիսյան
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ,
Արցախի Հանրապետություն

Արարատ Չաքարյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Վլադիմիր Հարությունյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Ամալյա Սարիբեկյան
տնտեսագիտության թեկնածու,
պրոֆեսոր

Երվանդ Զորեան
դոկտոր, գյուտարար, ԱՄՆ,
Միլիտոն յան հովիտ, Մինոսիսիս
ընկ. գլխավոր ճարտարագետ,
Մինոսիսիս Արմենիա ընկ.
պրեզիդենտ

Էդուարդ Ղազարյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Վահագն Վարդանյան
Հոնկոնգի Հան (չինական)
սկադեմիայի փոխտնօրեն և
Միջազգային բակալավրիատի (IB)
Դիպլոմային ծրագրի ղեկավար,
«Աշխարհաքաղաքականություն և
քաղաքական աշխարհագրություն»
մասնագիտության դոկտոր

Թորոս Թորոսյան
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Ատոմ Մարգարյան
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

Էլյանորա Մաթևոսյան
տնտեսագիտության թեկնածու

Գլխավոր գործընկերներ՝



**Հայաստանի արդյունաբերողների
և գործարարների միություն**
Արսեն Ղազարյան
նախագահ



**ԵՊՀ տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի
գիտական խորհուրդ**
Հայկ Սարգսյան
ֆակուլտետի ղեկավար

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԳԻՏԱԿԱՆ»
պարբերականի հիմնական
խորագրերը



- տնտեսագիտության տեսություն
- կառավարում
- նորարարությունների տնտեսագիտություն
- արտաքին առևտուր և միջազգային տնտեսական հարաբերություններ
- ֆինանսներ, բյուջետային գործընթաց և հարկային քաղաքականություն
- տնտեսության ոլորտների տնտեսագիտություն
- բնօգտագործման տնտեսագիտություն

• ԷԿՈՆՈՄԻԿԱ-ԳԻՏԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՆԱՐԻ ԱՌՅԻԿ

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հետ գործընկերությամբ տասնհինգ տարի լրատվական գործունեություն իրականացնող «ԷԿՈՆՈՄԻԿԱ» պարբերականի հեղինակակազմը ուշադրության կենտրոնում է պահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բոլոր ոլորտները՝ ներառելով թե բիզնեսը, թե տեսական, հետազոտական և կիրառական տնտեսագիտությունը, կրթությունը և մշակույթը՝ որպես երկրի առջև դրված խնդիրների լուծման կարևորագույն բաղկացուցիչ և լույսնուրծիչ: Պարբերականի էջերում վավերագրվել է մի շարք ոլորտների հիմքից զարգացման և երկրի տնտեսական կյանքում կարևորագույն դերակատարում ձեռք բերելու պատմությունը, մասնավորապես, առաջին անգամ հիմնավորապես և հրնջացս ներկայացվել է տեղեկատվական տեխնոլոգիաների և զուգահեռ կազմակերպվող նորարարական բուհական կրթության ողջ պատմությունը՝ մինչև բացառիկ նվաճումներն ու ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար սահմանված ՀՀ նախագահի բարձրագույն պարգևին արժանացած անվանի մարդկանց Հայաստան այցելություններն ու նրանց հաջողության պատմությունները հանրայնացնելը: Վավերագրված է նաև հանրապետությունում ապահովագրական ոլորտի զարգացման ճանապարհը: Բոլոր ոլորտներում ուշադրության կենտրոնում է պահվել բիզնեսի զարգացումը, խոչընդոտների վերհանումն ու մասնագիտական վերլուծություններով դրանց հաղթահարման ուղիները մատնանշելը: ՀԱԳ միության հետ համատեղ ամփոփ վերլուծականներով հինգ թողարկում է հրատարակվել միության հերթական համագումարին ընդառաջ: Ամսագրի գործընկերներ դարձած Մինոփսիս Արմենիա և Ինգո Արմենիա ընկերությունների հետ նույնպես համատեղ թեմատիկ ամփոփ թողարկումներ են հրատարակվել ՏՏ և ապահովագրության ոլորտների համար: Խմբագրական խորհրդի անդամները ակտիվ ներգրավվածություն ունեն ընտրվող թեմաների և ներկայացվող նյութի բովանդակության հրատարակության և խորքային վերլուծությամբ ներկայացվելու հարցում: Ակտիվ աջակցություն է ցուցաբերվել տնտեսության վիճակի և անհրաժեշտ քայլերի վերաբերյալ հրապարակումներին, ինչպես նաև հետխորհրդային իրողություններին նախկին հանրապետություններում:

Պարբերականի իր առջև դրված ուներ տարբեր ոլորտների զարգացման պատկերի շուրջ վերլուծական անդրադարձներով, քննարկումներով, գրույցներով, ակնարկներով հանրային իրազեկում ապահովելն ու հատկապես մարզային ընթերցողին այն հասցնելը: Մասնավորապես, որպես թիրախային ընթերցողական միջավայր ընտրվել են տեղական ինքնակառավարման մարմինները, կրթօջախները, այն նկատառումով, որ այս համակարգերում շարունակական կրթությունը, նոր մտեցումները, գիտելիքը, փորձի փոխանակումն ու տարբեր ոլորտներում տեղի ունեցող զարգացման պատմությունների մասին իրազեկված լինելը օրախնդիր անհրաժեշտություն է: Իրազեկման շրջանակն ընդլայնելու նպատակով մշտապես բազմաքանակ օրինակների նվիրատվություն է արվել ՀՀ պաշտպանության նախարարությանը և Արցախի հանրապետությանը:

Բոլոր տասնհինգ տարիներին պարբերականի հոդվածագիրների առջև դրված է եղել բարձր նշանող: Հատկապես կարևորվել են նոր մտածելակերպը, կիրառական նշանակության հետազոտական աշխատանքները, լուրջ և վերլուծական մտեցումը ներկայացվող թեմայի կամ խնդրի հանդեպ: Բարձր նշանող է սահմանվել նաև լեզվի, նյութը շարադրելու մակարդակի վրա:

Յուրաքանչյուր համարում արդեն հայտնի, կայացած մասնագետների հետ միասին պարտադիր հրատարակվել են նաև երիտասարդ գիտնականները: Նրանց հոդվածները տպագրվել են միայն մասնագետ խմբագրի կողմից տրված երաշխավորությամբ: Մերժվել են ոչինչ չատող, նույնիսկ գրագողությամբ հոդվածներ:

Տասնհինգ տարիների ձեռքբերումների իրավունքով ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակություններ» ցանկում ընդգրկվելու հայտ է ներկայացվել:

«ԷԿՈՆՈՄԻԿԱ» պարբերականի գիտական գործընկերը Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետն է: Մշտական գործընկերը՝ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը: Այս համագործակցության արդյունքում հրատարակվել են նաև ԻՆՉ ԱՆԵԼ գիտագործնական խորհրդաժողովներին ընդառաջ հոդվածների ժողովածուները Գիտական հոդվածները հրապարակվելու են ԷԿՈՆՈՄԻԿԱ մայր պարբերականին կից ԷԿՈՆՈՄԻԿԱ ԳԻՏԱԿԱՆ առանձին ամսագրում: Երկու ամսագրերն էլ կիրառարակվեն տարեկան առնվազն 2 անգամ պարբերականությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

► ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վահագն Խաչատրյան Պետություն և շուկա նոր մարտահրավերներ.....	5
Հայկ Սարգսյան, Ռուբեն Գևորգյան Ներկառուցված ոչ ֆորմալ ինստիտուտների գործառնումը սահմանադրականության համատեքստում.....	15
Սամսոն Դավոյան, Լուսյա Գալոյան Հարավկովկասյան հանրապետություններում իրականացված բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետության գնահատման հիմնահարցերը.....	29
Վահագն Վարդանյան Փոքր երկրի զարգացման փիլիսոփայություն. Սինգապուրի օրինակը.....	40

► ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աշոտ Մարկոսյան, Աշոտ Չալինյան Պետական կառավարման համակարգի բարեփոխումների և գործունեության ծրագրա- նպատակային փուլերի իրականացման մեթոդական առանձնահատկությունները.....	59
Միքայել Միքայելյան ՀՀ պետական ինքնավար մարմինների գործունեության անկախության ապահովման հրամայականը.....	69
Ашот Маркосян, Марине Каграманян Специфика разработки типового проекта по оптимизации бизнес процессов.....	76

► ՆՈՐԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Каджик Оганян Теория и практика формирования и реализации управления человеческими ресурсами в условиях инновационной экономики.....	86
---	----

► ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լիդա Աղաջանյան Արդյունաբերական կազմակերպությունների լոգիստիկական գործունեության կանխատեսումը.....	97
Левон Асатрян Территориальные споры в Северо-Восточной Азии.....	103

► ՖԻՆԱՆՍՆԵՐ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հախվերդյան Ուղղակի հարկերի ներդաշնակեցման հիմնախնդիրները ԵԱՏՄ շրջանակներում.....	109
Լևոն Քոչարյան ՀՀ-ին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը. ապահովագրությունը որպես այդ ռիսկերի զսպման մեխանիզմ.....	119

► ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մոնա Կարավարդանյան Ազգային փոխադրողը որպես ՀՀ քաղաքացիական ավիացիայի շարժիչ ուժ.....	124
Նունե Պետրոսյան, Արմեն Նուրիջանյան, Աշոտ Սարգսյան Արցախի Հանրապետության էներգետիկ անվտանգության համակարգը.....	129
Ամալյա Սարիբեկյան Սպառողական գներ-ծախս-եկամուտ կապը. դրսևորումները և զարգացումները Հայաստանում.....	135

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐՈՎ

2018թ.-ի ապրիլ-մայիսին տեղի ունեցած ժողովրդական, խաղաղ, թավշյա հեղափոխությունը նոր էջ բացեց Հայաստանի երրորդ հանրապետության պատմության մեջ, իսկ այդ հեղափոխության առաջին փուլն ավարտվեց 2018թ.-ի դեկտեմբերի 6-ի խորհրդարանական ընտրություններով, որի արդյունքում իշխող քաղաքական ուժը խորհրդարանում ստացավ ժողովրդի բացարձակ քվեն՝ ապահովելով խորհրդարանի անդամների ձայների ավելի քան 70%-ը: Դրանով իսկ քաղաքական իշխանությունն անցավ նոր ուժին:

Թավշյա հեղափոխության երկրորդ փուլն սկսվեց 2019թ.-ի փետրվարի 14-ին՝ Ազգային ժողովի կողմից ՀՀ կառավարության գործունեության 2019-2013 թվականների ծրագրի ընդունմամբ, որը կոչված է ՀՀ-ում իրականացնել տնտեսական հեղափոխություն: Նշված փաստաթուղթը, որպես երկարաժամկետ հեռանկարային զարգացման ծրագիր, կարևորում է ՀՀ կառավարության գործունեության հիմնարար ուղենիշերը. արտաքին և ներքին անվտանգության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի, ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացու վերաբերյալ, մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսության, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիաների, թվայնացման ու ռազմարդյունաբերության, պետական ֆինանսների կառավարման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

Հանդեսի հիմնական նպատակն է լինելու օգնել, աջակցել, օժանդակել կառավարությանը՝ ստանձնելով ծրագրային առանձին ուղղությունների մշակման և խորհրդատվական ապահովման առաքելությունը: Դրանով իսկ գիտակրթական համալիրը, դրա մասնագիտական ներուժը կծառայի հանուն տնտեսության և նրա առանձին ոլորտների կառավարման ու արդյունավետության բարձրացմանը:

Անհրաժեշտ է նկատել, որ տնտեսական հեղափոխության իրականացման հիմնադրույթների մշակումը և գործնական բնույթի ու նշանակության առաջարկությունների և հանձնարարականների ներկայացումը հողվածների հեղինակներից պահանջելու է ուժերի և ստեղծագործական մտքի լարում: Պետք է հիշել տնտեսության պետական կարգավորման հիմնադրի, բոլոր ժամանակների ականավոր տնտեսագետներից մեկի՝ Ջոն Մեյնարդ Բեյնսի միտքն այն մասին, որ. «Տնտեսագիտությունն անմիջապես տնտեսական քաղաքականության մեջ կիրառվող արդեն պատրաստի եզրակացությունների հավաքածու չէ: Այն, ավելի շուտ, մեթոդ է, քան ուսմունք, ինտելեկտուալ գործիք, տեխնիկա՝ օգնելու նրան, ով տիրապետում է դրան, հանգելու ճիշտ եզրակացությունների»:

Հանդեսում տեղ են գտնելու այն հեղինակները, որոնց հողվածները կունենան թե՛ տեսական և թե՛ գործնական նշանակություն, և դրանք կծառայեն հանրապետության սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, արտաքին առևտրաշրջանառության ու բազմաթիվ այլ հիմնախնդիրների լուծմանը: Այս առումով, ցանկանում եմ մեջբերել գերմանացի հայտնի իմաստասեր և մտածող Էմմանուել Կանտի խոսքերը. «Առանց պրակտիկայի տեսությունն անշունչ է, առանց տեսության՝ պրակտիկան կույր է»:

Ցանկանում եմ հիշել նաև իմ լավագույն ուսուցիչներից մեկի՝ ակադեմիկոս Միքայել Զոթանյանի խոսքն այն մասին, որն ասվել է մեզ տարիներ առաջ, երբ մենք ավելի երիտասարդ էինք. «Ով էլ որ լինեք, որտեղ էլ որ գտնվելիս լինեք, միշտ հիշեք, որ Դուք հայ տնտեսագետներ եք և Ձեր գիտելիքներն ու մտավոր ներուժը պետք է օգտագործեք Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորացման և բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման համար»:

Այս խորհրդով և կարգախոսով են առաջնորդվելու «ԷԿՈ նոմիկա ԳԻՏԱԿԱՆ» հանդեսը և նրա հեղինակները:

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

գլխավոր խմբագիր

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վահագն Խաչատուրյան

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՈՒԿԱՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Համառոտագիր. Պետություն-շուկա հարաբերությունների քննարկումը կարծես հավերժ է դառնում: Մի կողմից կարող է թվալ, որ ամեն ինչ ասված է, սակայն իրականում նոր իրավիճակներում, որում հայտնվել է մարդկությունը, այն կրկին արդիական է դարձել: Այսպես կոչված՝ չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը փոխում է նաև պետության կամ շուկայի մասին մարդկանց պատկերացումները, դերակատարումները: Հիմա, առավել, քան երբևէ, անհրաժեշտություն կա կրկին անգամ անդրադառնալ բոլոր ժամանակներում գրեթե բոլորին հետաքրքրող պետություն-շուկա հարաբերություններին:

Բանալի բառեր. պետություն, շուկա, ինստիտուտներ, պատասխանատվություն, վարքագիծ:

Իրականում մարդկանց մեծ մասը ազատություն չի ուզում, որովհետև այն ենթադրում է պատասխանատվություն, իսկ պատասխանատվությունը մարդկանց մեծ մասին վախեցնում է:

Չիզմունդ Ֆրոյդ

Չնայած տարածված այն տեսակետի, թե տնտեսագետների շրջանում չկա ոչ մի համաձայնություն, իրականում շատ քիչ են այն հարցերը, որոնց վերաբերյալ տնտեսագետները համաձայնության չեն գալիս: Շատ հարցերի առումով տարիների ընթացքում ընդհանուր համաձայնություն է հաստատվել, և դա առաջին հերթին այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում որպես գիտություն տնտեսագիտությունը, աշխատելով որոշակի մեթոդներով, սահմանել է ընդհանուր, ընդունելի կանոններ:

Համաձայնություն է ձեռք բերվել մի քանի առանցքային խնդիրների շուրջ: Առաջին հերթին դա մակրոտնտեսագիտությունն է: Բոլոր մակրո տնտեսագետները գիտեն, որ բյուջեի պակասուրդը, ինֆլյացիան վատ է, և հասկանալի է, գիտեն ինչպես ինֆլյացիան նվազեցնել:

Կա համաձայնություն ինստիտուցիոնալ առաջնային հարցերի վերաբերյալ: Տնտեսագետները գտնում են, որ մրցակցությունը լավ է, սեփականության իրավունքները պետք է պաշտպանվեն, բաց առևտուրը լավ է, և մասնավոր սեփականությունը նույնպես լավ է: Ոչ ոք չի վիճում մասնավոր սեփականության կամ մրցակցության լավ կամ վատ լինելու խնդրի շուրջ: Պարզապես, պարզ չէ, թե ինչպես ստեղծել խթաններ, ինչպես պաշտպանել սեփականության կամ գույքային իրավունքները, ինչպես պարտադրել կատարել պայմանագրերը: Այս հարցերի պահով տնտեսագետները խնդիրներ ունեն: Եթե նույնիսկ անդրադառնանք այնպիսի տնտեսագետների, ինչպիսիք են Ջոզեֆ Սթիգլիցը¹ կամ Դաննի Ռոդրիկը², որոնք համարվում են տնտեսության զարգացման հիմնական ուղղության վերաբերյալ տեսակետների հակառակորդներ, ակնհայտ է, որ նրանք համաձայն են, որ տնտեսության հիմնական սկզբունքները՝ սեփականության կամ գույքային իրավունքների պաշտպանություն, պայմանագրային պարտավորությունների կատարում, մրցակցություն, պետք է կատարվեն: Ինչպես

1. Joseph E. Stiglitz (2006). Making Globalization Work. Norton, 358 p
 2. Rodrik, Dani (2011). The Globalization Paradox. Norton & Company, Inc. ISBN 978-0-393-07161-0.

մակրոտնտեսական կայունությունը, դրանք նույնպես շատ կարևոր են տնտեսական կայուն աճի համար: Սակայն դրա իրականացման ճանապարհներն այնքան էլ հասկանալի չեն:

Ժամանակակից տնտեսության վերաբերյալ հիմնական վեճը այն մասին չէ, թե ինչ պիսի՞ն է տնտեսության կառուցվածքը, ո՞րն է իդեալականը, այլ նրա մասին է, թե ինչպես է տնտեսությունն աշխատում: Ո՞րն է ավելի վատ. պետության միջամտությունը, որն ուղեկցվում է լուրջ անարդյունավետությամբ, թե՞ պետության չմիջամտությունը, և այն, ինչը կոչվում է շուկայի ճախողում՝ իր հետ բերելով մեծ խնդիրներ. այնպիսի խնդիրներ, որոնք կապված են նրա հետ, որ ընդհանրապես սեփականության իրավունքները ինչ-որ մեկը պետք է պաշտպանի, պայմանագրերը, պայմանավորվածությունները ինչ-որ մեկը պետք է կատարի, մրցակցությունը ինչ-որ մեկը պետք է պահպանի և, մակրո տնտեսական քաղաքականությունը ինչ-որ մեկը պետք է իրականացնի: Այսինքն, պետական ծառայությունների պահանջարկ կա, բայց պետությունը, իր հերթին, չի կարողանում կառավարել սեփականությունը, բյուրոկրատների համար խթաններ ստեղծել, միշտ փորձում է ոչ թե պաշտպանել մրցակցությունը, այլ սահմանափակում է այն:

Շուկայի ճախողման և պետության ճախողման միջև ընտրությունը հենց ժամանակակից տնտեսագիտության հիմնական խնդիրն է:

Հիմնական խնդիրը, ինչպես հայեցակարգային, այնպես էլ գործնական հարթության մեջ, այն է, որ կա անհրաժեշտություն հստակեցնել հանրային բարիքների սահմանները և պետական պատասխանատվության գոտիները, այսինքն, այն խնդիրները և գործառույթները, որոնք, ոչ ոք, բացի պետությունից, արդյունավետ չի կարող իրականացնել: Մնացածը պետք է փոխանցվի մասնավոր հատվածին:

Մարդիկ սկսում են ավելի շատ կարիք զգալ պետության, երբ շուկան իր գործունեության ինչ որ մի շրջանում ճախողվում է, օրինակ, ճգնաժամերի ժամանակ, և դա ներկայացվում է որպես շուկայական տնտեսության կամ շուկայի և ոչ թե պետության ճախողում: Օրինակ, վերջին ճգնաժամը, որ կոչվեց համաշխարհային ֆինանսական և տեղի ունեցավ 2008 թվականին, հիմնականում պետության կամ պետական համապատասխան կառույցների բացթողումն էր, քաղաքական գործիչների անպատասխանատու գործունեության արդյունք էր, իսկ շուկան այս դեպքում այլևս չկարողանալով դիմանալ քաղաքականություն իրականացնողների ճնշումներին, անտեղի և անհարկի միջամտություններին, պարզապես պատասխանեց իրեն բնորոշ ձևով՝ ճգնաժամով: Սակայն, ամենահետաքրքիրը և կարևորը ոչ թե ինքը՝ ճգնաժամի պատճառն էր, այլ իրավիճակից դուրս գալու մեթոդները: Արդյունքում, պետության միջամտության անհրաժեշտությունը բերեց նրան, որ պետության դերը շատ երկրների տնտեսական կյանքում մեծացավ: Կարգավորիչի դերակատարումից գատ՝ պետությունը մեծացրեց իր սեփականությունը, դարձավ խոշոր սեփականատեր: Այս ամենի արդյունքում մարդիկ՝ անհատներ-քաղաքացիներ և իրավաբանական անձինք, շատ դեպքերում ինքնակամ հրաժարվեցին իրենց սեփականությունից՝ հանուն իրենց բիզնեսի առողջացման, ֆինանսական վիճակի վերականգնման, և, ի վերջո, հանուն ապագայի:

Այս ամենի ականատեսը եղանք մենք, այս ամենը տեղի ունեցավ կայացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բննարկվող հարցի շրջանակներում մեզ համար կարևոր է արձանագրել, որ ճգնաժամը և դրանից դուրս գալու վերը նշվածն այն ճանապարհներից մեկն է, որը և՛ քաղաքական, և՛ տնտեսական ոչ ճշգրիտ, ավելի շուտ՝ չկանխամտածված քայլերի և գործողությունների հետևանք էր, որը բերեց պետության դերի արհեստական մեծացման³:

Կա նաև այլ ճանապարհ, որը նույնպես մարդկանց կամ հասարակությունների մոտ

առաջացնում է պետության դերի, մեր տեսանկյունից՝ չհիմնավորված պահանջ: Ամենատիպիկ և ամենացայտուն օրինակները վերաբերում են նախկին Խորհրդային Միության շատ երկրների, որոնց թվում կարելի է ընդգրկել նաև Հայաստանի Հանրապետությունը՝ իր կառավարման մինչ 2018թ. մոդելով: Խոսքը վերաբերում է բոլոր այն երկրներին, որոնք իրենց զարգացման ճանապարհին նախընտրեցին ավտորիտար կամ կիսավտորիտար կառավարման համակարգը: Այդ երկրներում իշխանությունները, գործելով պետության անունից, արհեստական խոչընդոտներ ստեղծելով սեփական երկրի քաղաքացիների համար՝ առօրյա կենցաղում, տնտեսական դաշտում, սոցիալական բնագավառում և հանրային կյանքի այլ բնագավառներում, մարդկանց առաջարկեցին այնպիսի կառավարման համակարգ, որտեղ բոլոր հարցերի, խնդիրների լուծողը պետությունը պետք է լիներ:

Մարդկանց դրանով գրկեցին հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքից, որն էլ հետագայում մեծ անջրպետի պատճառ դարձավ պետություն - քաղաքացի հարաբերություններում: Սա էլ իր հերթին անվստահության մի այնպիսի մթնոլորտ ձևավորեց հասարակության մեջ, որը վերածվեց պետության անվտանգության սպառնալիքի: Այդպիսի վարքագծի դրսևորումը, օրինակ, պատճառ դարձավ մարդկանց զանգվածային արտագաղթի, դրա արդյունքում պետական կարևորագույն ինստիտուտների նկատմամբ վստահությունը հասավ շատ ցածր մակարդակի, որն էլ իր հերթին արգելակ է դառնում ցանկացած բարեփոխման⁴:

Ըստ էության, այդպիսի մոտեցումը բերում է իշխանության անհավասար բաշխման, իշխանության ասիմետրիայի: Իհարկե, իշխանությունը անհավասարաչափ է բաշխվում ցանկացած հասարակությունում, միևնույն ժամանակ, իշխանության ասիմետրիան միշտ չէ, որ կործանարար է: Մասնավորապես, այն կարող է ապահովել արդյունավետություն, օրինակ՝ իշխանության պատվիրակման միջոցով: Սակայն, եթե ազդեցիկ գործող անձինք վախենում են, որ բնակչության բարեկեցության բարձրացմանն ուղղված քաղաքականության այս կամ այն նախաձեռնությունը կարող է թուլացնել իրենց ազդեցությունը (այժմ կամ ապագայում), ապա կարող են փորձել արգելափակել դրանց ընդունումը կամ խոչընդոտել իրականացմանը: Օրինակ, շատ հեռու պետք չէ գնալ, մեր երկիրը երկար տարիներ այդ սկզբունքով է կառավարվել: Այս միտումը զգալի բացասական հետևանքներ ունի հատկապես ամենաաղքատ և մարզինալացված խմբերի համար, որոնք իրենց շահերը պաշտպանելու սահմանափակ հնարավորություններ ունեն: Իշխանության ասիմետրիկությունը կարող է վնասակար հետևանքներ ունենալ և վտանգել ինստիտուտների հիմնական գործառնությունները՝ կապված այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են մեկուսացումը, յուրացումը և հաճախորդների մոլորեցումը/ կլիենտելիզմը (clientelism): Մարդիկ, մեծամասամբ, չցանկանալով իրենց վրա պատասխանատվություն վերցնել, պայքարել իրենց ազատությունների համար, ընդունեցին խաղի առաջարկված կանոնները: Ծուկան այդ երկրներում դարձավ ընդամենը համակարգն սպասարկող, կորցրեց իր կարգավորիչ և զարգացում ապահովող դերը: Նշված երկրները չեն փայլում իրենց զարգացածությամբ, քաղաքացիների բարձր կենսամակարդակով: Ընդհակառակը, նրանք սովորաբար հայտնի են որպես ամենակոռուսայացված, ցածր մրցունակություն և բարեկեցություն ունեցող երկրներ:

3. Տե՛ս

ա /Ջ. Գորթլի, Ռ. Սթրուփ, Դ. Լի, Թ.Ֆերարինի. «Ընդհանուր տնտեսագիտություն», Եր., Տիգրան Մեծ, 2013, 288 էջ.;

p/ Joseph E. Stiglitz «Capitalist Fools»//Vanity Fair, New York, 9 Dec,2008, <http://www.yoism.org/?q=node/386>;

գ /Гуиен С. «Мифы экономики»-М.:Манн, Иванов и Фербер, 2014-320 с.;

դ/ Пол Кругман «Почему экономическая наука бессильна», <https://republic.ru/posts/1/130856>

4. Տե՛ս՝ Кудрин: Старая модель экономики не работает, новой модели нет, <https://www.finanz.ru/novosti/aktsii/kudrin-staraya-model-ekonomiki-ne-rabotaet-novoy-modeli-net-1001664688>

Վերը նկարագրված իրավիճակները ապացույց են այն բանի, որ պետության և շուկայի դերի մասին պատկերացումները ձևավորվում են հիմնականում տեղի ունեցող կամ ունեցած իրադարձությունների և՛ ոչ ամբողջական ներկայացման, և՛ շատ դեպքերում խեղաթյուրման արդյունքում: Դա միշտ էլ եղել է, երբ իշխանություններն իրենց ձախողումները ներկայացրել են որպես շուկայի ձախողումներ, սակայն մարդկության պատմությունն այլ կերպ է մեզ ներկայացնում իրավիճակը, որը փաստում է շուկայական տնտեսության, ազատ շուկայի կենսունակությունը, այն համարում է մարդկության առաջընթացի գրավական:

Պետություն

Շուկայական տնտեսության պայմաններում ամենաբարդ խնդիրը պետության և շուկայի մասնակցության չափն է: Պետության բնութագրերը տարբեր ժամանակներում, տարբեր գիտնականների կամ քաղաքական-հասարակական գործիչների կողմից տրամագծորեն տարբերվել են իրարից:

19-րդ դարի հանրահայտ ֆրանսիացի հրապարակախոս, հասարակական և քաղաքական գործիչ Ֆրեդերիկ Բաստիան բնութագրելով պետությանը, գրում է. «Ի՞նչ գիտենք նրա մասին - այն խորհրդավոր անձնավորություն է, ով, ամենայն հավանականությամբ, բոլորից շատ է անհանգստանում, բոլորից շատ է արգելակում, բոլորից շատ է ծանրաբեռնված աշխատանքով, ում հետ բոլորից շատ են խորհրդակցում, ում բոլորից շատ են մեղադրում, ում առավել հաճախ են դիմում և օգնություն խնդրում...Պետությունը հսկայական ֆիկցիա է, որի միջոցով բոլորն աշխատում են ապրել բոլորի հաշվին»⁵, իսկ Հենրի Լյուիս Մենկեն իր «Կրկին դրա մասին» էսսեյում, որը հրատարակվել է 1925 թվականին, գրում է. «Ինչքան էլ սովորական մարդը թերություններ ունենա, նա բոլոր դեպքերում հիանալի հասկանում է, որ պետությունը դուրս է նրա շահերից և շատ այլ մարդկանց շահերից, որ այն հանդիսանում է առանձին, անկախ և հաճախ թշնամի ուժ, որը մասամբ է իրեն կողմից վերահսկելի և ի վիճակի է իրեն մեծ վնաս հասցնել»⁶:

Կառլ Պոպերը այսպիսի բնորոշում է տալիս. «Պետությունն անհրաժեշտ չարիք է: Նրա իշխանական լիազորությունները չպետք է գերազանցեն անհրաժեշտ չարիք: Այս սկզբունքը կարելի է կոչել «ազատական աժելի» (հետևելով Օքհամի աժելիին, այսինքն՝ այն հոչակավոր սկզբունքին, որ մետաֆիզիկական էությունների թիվը չպետք է շատացվի անհրաժեշտ չարիքից ավելի): ...Սակայն դժվար չէ նաև ցույց տալ, որ պետությունը մշտական վտանգ է և, այդպիսով, նաև չարիք, թեև անհրաժեշտ չարիք: Քանի որ, եթե պետությունը պիտի կատարի իր խնդիրը, ապա պիտի ավելի շատ իշխանություն ունենա, քան յուրաքանչյուր առանձին քաղաքացին: Անգամ, եթե հաստատություններ հորինենք, որոնք հնարավորինս կսահմանափակեն այդ իշխանության չարաշահման վտանգը, միևնույն է, այդ վտանգը երբեք չենք կարողանա ամբողջությամբ վերացնել: Հակառակը, թվում է, թե միշտ ստիպված ենք լինելու վճարել պետության իրավական պաշտպանության գինը, այն էլ ոչ միայն հարկերի ձևով, այլև նույնիսկ նվաստացման ձևով, որի հետ ստիպված ենք հաշվի նստել («պաշտոնյաների ամբարտավանությունը»): Բայց այդ ամենը չափի հարց է: Ամենակարևորը իրավական պաշտպանության համար չափազանց բարձր գին չվճարելն է»⁷:

Ժամանակակիցներից Մերգել Գուրիևը, ով մինչ վերջերս հանդիսանում էր Վերակա-

5. Стену` Бастиа Ф., Экономические гармонии.избранное-М.: Эксмо, 2007.- 1200с.

6. Стену` Генри Льюис Менкен, Вновь о том же, <http://old.inliberty.ru/library/117-vnov-o-tom-zhe>,

7. Стену` Կարլ Ռ. Պոպեր, «Ազատականությունը. մի քանի թեզեր», «Ազատականության հիմունքները», Եր., Էդիտ Պրինթ, 2008թ., 90 էջ:

ռուցման և Չարգացման Եվրոպական Բանկի գլխավոր տնտեսագետը, անդրադառնալով վերջին ֆինանսական ճգնաժամից հետո աշխարհում ամբոխավարության տարածման դրդապատճառներին, պայմանավորված նաև անհավասարության չափերի մեծացմամբ, ընդգծում է ստեղծված իրավիճակում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Մասնավորապես, անդրադառնալով պետության դերին, նա նշում է. «...Մենք ասում էինք այն մասին, որ իրականացնելով բարեփոխումներ, պետք չէ փորձել պետության դերը հասցնել զրոյի: «Ինչքան փոքր պետություն, այնքան լավ շուկային» մոտեցումը սխալ է: Ճիշտը. «Ինչքան լավն է պետությունը, այնքան դա լավ է շուկայի համար»⁸: Հետո, որպես ապացույց ներկայացնում է հետևյալ հիմնավորումը. «Օրինակ, մասնավորեցում իրականացնելիս հնարավոր չէ բավարարվել միայն նրանով, որ սեփականության անցումը մասնավորին կրերի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը տվյալ ձեռնարկությունում: Վաղ թե ուշ դա լինելու է, տարբեր երկրների փորձն է դա ասում: Մակայն խնդիրն այն է, որ անհրաժեշտ է նոր հնարավորություններ տալ այն մարդկանց, ովքեր մասնավորեցման արդյունքում ազատվել են աշխատանքից: Դա ձեռնարկության դեկավարության խնդիրը չէ, դա հասարակության և պետության խնդիրն է: Եթե այդ խնդիրը լուծում չի ստանում, ապա սպասվում է հակառակ արդյունքը, որը խանգարում է բարեփոխումներին»⁹:

Այսօր էլ պետություն-շուկա հարաբերությունները քննարկման կարիք ունեն: Մի կողմից կարող է թվալ, որ ամեն ինչ ասված է, սակայն իրականում նոր իրավիճակներում, որում հայտնվել է մարդկությունը, այն կրկին արդիական է դարձել: Տեխնոլոգիական դարաշրջանը, այսպես կոչված՝ չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը, փոխում է նաև պետության կամ շուկայի մասին մարդկանց պատկերացումները, դերակատարումները: Հիմա, առավել քան երբևէ, անհրաժեշտություն կա նորից և նորից անդրադառնալ հավերժություն թվացող, բանավեճի առարկա հանդիսացող թեմային՝ պետություն-շուկա հարաբերությանը:

Բայց, մինչ այդ, ըստ մեզ, կարիք կա մեկ անգամ ևս անդրադառնալ նաև «շուկայական տնտեսություն» եզրույթին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատկապես վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված և մեր երկրում, և աշխարհում դժգոհությունների մեծ ալիքի հետ, շատ դեպքերում և հիմնականում առանց հիմնավորումների կապում են շուկայի, շուկայական տնտեսության հետ:

Շուկա, Շուկայական տնտեսություն

Քաղաքականապես ոչ կոռեկտ համարվելու մտավախությունից դրդված՝ շատերը «շուկայական տնտեսություն» եզրույթը գործածում են բացառապես «սոցիալական» աճականի հետ միասին: Ազատական մոտեցումը այս հարցին հետևյալն է. որևէ պատճառ չկա տեղի տալու մի մոտեցման, որը սխալմամբ համարվում է քաղաքական կոռեկտություն, քանի որ պետության կամ սոցիալական պետության ջատագովների և գործազանցման հակառակորդների քարոզչությանը հակառակ՝ շուկայական տնտեսությունը կարիք չունի այլևայլ որոշիչների՝ հանրոքեն ընդունելի համարվելու համար: Նա միշտ է *սոցիալական*: Մեկ այլ, ոչ պակաս կարևոր, հանգամանք. լիարժեք շուկայական տնտեսություն առանց ազատական ժողովրդավարության չի լինում, քանզի շուկայական տնտեսությունը պահանջում է հաշվետվության և հակակշռության համակարգ, օրենքի շրջանակներ և թափանցիկություն, որն անհրաժեշտ է բաց շուկայում ազնիվ մրցակցության համար, անկախ նրանից՝ մեծամասնության, թե փոքրամասնության անդամ եք, արտասահմանցի, թե տեղացի, կին, թե տղամարդ,

8. Տե՛ս Մերգել Գուրիև. «Բոլոր երջանիկ երկրները միանման են երջանիկ», slon.ru, 09.11.2016, <https://republic.ru/posts/75917>
9. Տե՛ս՝ նույն տեղում:

աղքատ, թե հարուստ, իշխանություններից, թե ընդդիմությունից: Այդ հարցը սկզբունքային է, քանի որ շուկայական տնտեսությունը չի կարող գոյություն ունենալ, եթե պետությունը և բնակչությունը չեն հարգում իրավունքը և օրենքների համակարգը: Չլինելով հավասար՝ մարդիկ կիրառում են միանման իրավունքներ, հակառակ դեպքում կվարկաբեկվեն խաղաղ համագործակցության սկզբունքները, առանց որի չկա շուկայական տնտեսություն: Մյուս կողմից, շատ կարևոր է, որ ընկալվի, ընդունվի, որ շուկան կարիք չունի գերկարգավորման – ինքը՝ շուկան, ինքնակարգավորվող է և ունակ է իրավիճակը կարգավորել տնտեսության բոլոր բնագավառներում: «...Պետությունը չի միջամտում շուկայի գործունեության մեջ: Պետությունն ստեղծում և ապահովագրում է շուկայի գործունեության շրջանակներն այնպես, որ տնտեսությունը ի վիճակի լինի անվտանգ գործելու¹⁰»:

Շուկայի մասին խոսելիս հնարավոր չէ չանդրադառնալ Նոբելյան մրցանակակիր Միլտոն Ֆրիդմանին: Խոսելով շուկայի մասին՝ նա, մասնավորապես, այսպես է այն բնութագրում. «Շուկան կով չէ, որ կարելի է կթել: Այն նաև բոլոր ենթադրելի հիվանդությունների համար հրաշագործ սպեղանի չէ: Բառացիորեն շուկա հասկացությունը պարզապես մարդկանց միջև շփումներ է հատուկ վայրում և որոշակի ժամի, իսկ այդ շփումների նպատակը գործարքներ կատարելն է: ...Կախված այն բանից, թե ինչպես է շուկան օգտագործվում, այն կարող է դրական ներդրում ունենալ տնտեսական և սոցիալական զարգացման մեջ, կարող է և խանգարել: Ցանկացած հասարակարգ օգտագործում է շուկան: Այստեղ իսկապես կարևոր ընտրություն է ընտրությունը մասնավոր սեփականության առկայության և դրա բացակայության միջև: Իրական տնտեսության մեջ ազատ շուկան և մասնավոր սեփականությունը հենց «անվճար պանիր»-ն են»¹¹:

Պատասխանատվություն

Այսօրվա Հայաստանում, ըստ ՀՀ կառավարության ծրագրային դրույթների, ամբողջությամբ այլ մոտեցումներ է վերագրվելու թե պետությանը, թե շուկային, թե քաղաքացուն: Այդ մոտեցումների նոր բովանդակությունն այն է, որ, մի կողմից պետությունը, մյուս կողմից շուկայի մասնակիցները և քաղաքացիները, ունենալով իրավունքներ իրենց վերապահած լիազորությունները կատարելու համար, դառնալու են նաև լիարժեք պատասխանատուներ իրենց գործունեության, վարվելաձևի, վարքագծային դրսևորումների համար և ս¹²: Մինչ օրս, նախկին համակարգի օրոք, մարդկանց, անհատի պատասխանատվության աստիճանը, սահմանները որոշում էր պետությունը, ըստ իր պատկերացումների, քմահանույքների, շատ հաճախ օրենքների խախտմամբ կամ ընդունված ավանդույթների հակառակ: Արդյունքում, ՀՀ քաղաքացիներն աստիճանաբար զրկվում էին ՀՀ Սահմանադրությամբ իրենց վերապահած հիմնական իրավունքներից՝ իշխանության ձևավորում, սեփականության, ազատ արտահայտվելու, շուկայում ազատ տնտեսական գործունեություն ծավալելու, ընդհանրապես սեփական իրավունքները պաշտպանելու: Այսօր նոր իշխանությունը ցանկություն է հայտնել վերականգնել արդարությունը, մարդկանց տալ անսահման ազատություն, միաժամանակ սկսել կալվելով նրանց կողմից պատասխանատվության ստանձնում և ս: Սա ենթադրում է նոր հարաբերություններ, մարդկանց, պետության նոր վարքագծի դրսևորման պահանջ:

Մի քանի դիտարկում պատասխանատվության ինստիտուտի մասին: Այս առումով շատ յուրօրինակ և ուսանելի են ազատական գաղափարախոսության մոտեցումները: Մար-

10. Мизес Людвиг фон. Либерализм; «Экономика», 2001.-239с.

11. Stiu` Фридман Милтон, Рынок как средство развития общества, Cato Journal. Vol. 8. № 3 (Winter 1989). P. 567–579.

12. Տես՝ ՀՀ Կառավարության Ծրագիր, փետրվար 2019թ., <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

դիկ պատասխանատու են իրենց քայլերի համար: Նրանք են կրում հետևանքները, իսկ իրենց քայլերը չափում են գլխավորապես ըստ սեփական գիտակցության ու չափանիշների, որոնք կարելի է բացատրել բազմաթիվ եղանակներով: Հասարակությունում ապրելիս ի հայտ է գալիս մեկ այլ չափանիշ՝ օրենքների և կանոնների այն ամբողջությունը, որը հասարակությունը սահմանել է իր համար: Արդի պետություններում այդ օրենքները կողիֆիկացվել են օրենսդրական համակարգում և հավասարապես վերաբերում են բոլոր քաղաքացիներին: Եթե մեկը խախտում է օրենքը, պատժվում է, իսկ եթե վնասում է ուրիշի ունեցվածքը, տուգանվում է քաղաքացիական օրենսգրքի համաձայն: Դատական մարմինն անօրինական վարքը իրավասու է պատժելու ըստ համապատասխան օրենսգրքի: Խիստ սահմանամերձ միայն անհատը կարող է պատասխանատվություն ստանձնել, քանի որ միայն անհատն է, որ կարող է պատասխանատվության ենթարկվել իր քայլերի համար: Ուստի՝ սեփական պատասխանատվությունը և ինքնապատասխանատվությունն իրականում նույնն են: Հավաքական պատասխանատվության բոլոր ձևերի արմատները հասնում են ընդհուպ մինչև անհատական պատասխանատվություն: Միացյալ պատասխանատվության շուրջ գրույցների նպատակը սովորաբար իրական պատասխանատվությունը թաքցնելն է: Քաղաքական պատասխանատվության տեսանկյունից լուրջ խնդիր է պատասխանատվության պատվիրակումը, քանի որ դրա «կրողները» չեն կրում սեփական որոշումների ողջ պատասխանատվությունը: Նրանց համար խոշորագույն ռիսկը քվե չհավաքելն ու ժամանակից շուտ պաշտոնից հեռանալն է: Ուստի, ստացվում է, որ պատասխանատվությունը պետք է կրի հարկատուն: Սա է պատճառը, որ ազատական տնտեսագիտությունն առաջ է քաշում լրացուցչության սկզբունքը՝ հավատացած, որ որոշումներն ըստ կարելվույն պետք է ընդունվեն քաղաքացիների կողմից, քանի որ նրանք են, որ կրելու են հետևանքները:

Ազատությունն ու պատասխանատվությունն անբաժան են: Սեփական քայլերի համար պատասխանատու լինել կամ պատասխանատվություն կրել կարող են միայն նրանք, ովքեր ազատ են որոշում կայացնելու հարցում: Ազատականությունը ձգտում է ձևավորել այնպիսի հասարակություն, որում մարդիկ կարող են իրենց տեղը որոշում ընդունել: Ուստի, ազատական հասարակությունում սկզբունքային դեր ունի անհատական պատասխանատվության պահանջը: Սոցիալիստական հայեցակարգերին հակառակ՝ միայն բացարձակ անհրաժեշտության պարագայում է նվազագույն պատասխանատվությունը պատվիրակվում հասարակությանը կամ պետությանը:

Ինստիտուտներ

Պետություն-շուկա հարաբերությունները քննարկելիս հնարավոր չէ շրջանցել ինստիտուտներին վերաբերող հարցադրումները: Այլևս անվիճարկելի է այն հանգամանքը, որ տնտեսական քաղաքականության արդյունավետությունը կախված է ինստիտուտների կայացվածությունից և հանրային կյանքում դրանց մասնակցության աստիճանից¹³:

Տնտեսագիտությունն ասում է, որ հաջողությունը և բարեկեցությունը կախված են ինստիտուտների որակից, այսինքն՝ հասարակության մեջ ընդունված խաղի կանոնների որակից - պայմանագրերի կատարում, իրավունքի գերակայություն մարդ-պետություն, կորպորացիա և մարդ հարաբերություններում: Սակայն, եթե նախկինում այս եզրակացությունների մասին խոսում էին որպես զարգացման «ճանապարհային քարտեզ», ապա վերջին տարի-

13. Տե՛ս

u/Дуглас Норт /North D. Structure and Change in Economic History. N. Y.:W.W. Norton & Co, 1981:p/ DaronAcemoglu(Author), James A. Robinson(Author) Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and PovertyDeckle Edge, March 20, 2012:

ներին միասնական խաղի կանոնների մասին քննարկումները այլ ուղղությամբ են գնում: Ավելի առաջնային կամ պակաս կարևոր չէ այդ սահմանված նորմերի կատարումը: Մեզ մոտ և մեր նմանատիպ երկրներում կան շատ օրենքներ և կանոնակարգեր տարբեր բնագավառների կարգավորումների վերաբերյալ, սակայն ոչ բոլորն են կատարում դրանք: Կան մարդիկ, ովքեր ընդհանրապես կարող են չենթարկվել օրենքների պահանջներին, կան նաև մարդիկ, որոնք կարող են մասամբ հետևել դրանց: Օրենքները շատ հաճախ են փոփոխվում, ոչ մի ընտրություն չի անցնում նույն օրենքներով, բիզնեսի գործունեության պայմանները անկանխատեսելի են, մասնավոր սեփականության իրավունքը սահմանափակվում է բազմաթիվ վերապահումներով: Ներկայում այլևս կասկածի տակ չի դրվում ինստիտուտների կարևորության և նշանակության հարցը, ավելին, կա արդեն ընդհանուր ձևավորված տեսակետ ինչու ոչ բոլոր երկրներն են փորձում լավ ինստիտուտներ ստեղծել: Բանն այն է, որ իշխող քաղաքական գործիչներին ու էլիտաներին ձեռնտու է ոչ թե այն քաղաքականությունը, որն աճ է ապահովում, օգուտ է բերում, այլ այն քաղաքականությունը, որը թույլ է տալիս նրանց մնալ պահպանել իշխանությունը, իսկ դա միշտ չէ, որ նույնն է:

Մեզ մոտ չեն եղել անձի և քաղաքացու ինստիտուտներ: Սրանք անընդունելի և վտանգավոր են եղել իշխող քաղաքական ուժի համար, որը հանձինս ՀՀ քաղաքացիների տեսնում էր միայն հպատակների: ՀՀ քաղաքացիները միայն հպատակներ և հարկատուներ պետք է լինեին: Մեզ մոտ իրավունքն եղել է ոչ թե ազատական, այլ, ավելի շուտ, ֆեոդալական: Փորձը ցույց է տալիս, որ շատ երկրների նման, Հայաստանում էլ նման իրավիճակը երկար չէր կարող շարունակվել: Սովորաբար, աստիճանաբար նման մոտեցումները բերում են իշխանության և ժողովրդական զանգվածների օտարման: Սա բնորոշ է ոչ միայն ոչ ժողովրդավարական, ավտորիտար երկրներին: Պատահական չեն այսօր շատ տնտեսապես զարգացած, արմատական ժողովրդավարական երկրներում տեղի ունեցող զանգվածային դժգոհությունները, որոնք առանձին դեպքերում ծայրահեղ դրսևորումներ են ունենում: Խնդիրն այն է, որ այդ երկրներում էլ տարիների ընթացքում իշխանությունը կենտրոնացել է առանձին քաղաքական կամ տնտեսական խմբերի ձեռքում, որն էլ աստիճանաբար մարդկանց հեռացնելով իշխանությունից՝ դարձել էր միայն իր համախոհներին սպասարկող իշխանություն:

Այս առումով հետաքրքիր և ուշադրության արժանի դիտարկում է արել հանրահայտ Իցհակ Ադգիզեը: Ռուսական pro.rbc.ru կայքին վերջերս տված իր հարցազրույցում, անդրադառնալով դեմոկրատիայի ուժին, այսպիսի մի բացահայտում է կատարել. «Պետությունը, նույնիսկ զարգացած երկրներում, ուժեղանում է, քանի որ պետությունների առջև ծառայած խնդիրները դառնում են ավելի բարդ, խճճված և շփոթեցնող, հիմնականում պայմանավորված փոփոխությունների արագացմամբ: Այս խճճվածքի քանդումը, թվում է, ի գորու է իրականացնել միայն իշխանությունը, և այդ պատճառով էլ նա ավելի շատ իշխանություն է վերցնում: Սա սպանում է ժողովրդավարությունը»:

...Ժողովրդավարության մահվան մեկ այլ պատճառ էլ այն է, որ կուսակցությունները չափից ավել են տարված իշխանության պայքարով: Նրանք մեղադրում են միմյանց կոռուպցիայի մեջ, և սովորական քաղաքացին դադարում է հասկանալ, թե ով է լավը և ով է վատը: Եվ իր մոտ ցանկություն է առաջանում, որ իրեն ղեկավարի այսպես կոչված մի «հայրիկ», որը կարգ ու կանոն կհաստատի: Կենտրոնացումը բերում է նոր ֆեոդալիզմին»¹⁴:

Ընդգծենք, որ ճշմարտությունն այն է, որ ոչ մի ինստիտուտ կամ ինստիտուտներ չեն կա-

14. Стів Іщак Адизес — РБК: «Если пресечь коррупцию, все перестанет работать», https://pro.rbc.ru/news/5c9c9b819a79471ca9843366?from=column_11

րող գոյատևել երկար և գործել հանուն ժողովրդի առանց ժողովրդական լայն զանգվածների աջակցության-լեգիտիմության: Այսօր օրակարգում վերը նշված հանգամանքներից ելնելով դրված է հետևյալ հարցը՝ ինչպիսի՞ հասարակություն այսօր ստեղծել, որ մարդիկ այն պարտադրված չհամարեն: Ինչպե՞ս ինստիտուտներին շունչ տալ և նրանց վերադարձնել լեգիտիմությունը: Մա վերաբերում է բոլոր այն հասարակարգերին կամ երկրներին, որոնց համար ազատությունը, ազատ խոսքի իրավունքը, մարդը, տնտեսական և քաղաքական ազատությունները առաջնային են: Այսօրվա Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է վերը նշված սկզբունքները և փորձում է դրանք իրականություն դարձնել: Այդ գործընթացի հաջողությունը կախված կլինի նրանից, թե ինչքանով իշխանությունը կկարողանա ՀՀ քաղաքացիներին մասնակից դարձնել երկրի կառավարմանը, նրանց պատասխանատու դարձնել և անհատական, և հասարակական, և պետական խնդիրների որոշման ընդունման և կայացման գործում: Այս խնդրի հետ կապված Իցհակ Ադգիգեսը վերը նշված հարցազրույցում անդրադառնալով ժողովրդավարության ուժին՝ մի այսպիսի օրինակ է բերում. «Բոլոր նախկին գաղութատիրական երկրներում, բոլոր ավտորիտար երկրներում կարող եք ականատես լինել հետևյալ պատկերին - հրապարակային տարածքները՝ փողոցներ, կանգառներ, սպորտային տարածքներ, ահավոր կեղտոտ են, բայց ժողովրդավարականում՝ դրանք մաքուր են: Մտեք ցանկացած շենք, և դուք կտեսնեք, որ աստիճանները կեղտոտ են, պատերը ճաքերով լի: Մտեք որևէ բնակարան՝ այնտեղ ամեն ինչ մաքուր է և կոկիկ: Ինչո՞վ է պայմանավորված այդ ամենը: Որովհետև մարդիկ այդպիսի երկրներում մտածում են հետևյալ կերպ. «Մա իմն է, սա քոնն է, և ամենը, որ իմի և քոնի միջև է, ոչ մեկինն է, ուրեմն թող դրա մասին հոգ տանի պետությունը, մեզ հետ այն որևէ առնչություն չունի»:

Այդպիսի երկրներում ժողովուրդն իրեն հակադրում է կառավարությանը: Իսկ դեմոկրատական երկրներում նա այլ ձևով է մտածում. Կառավարությունը - դա մենք ենք, և ուրեմն բոլոր հանրային տարածքները մերն են, ու մենք բոլորս պատասխանատու ենք այդ տարածքների մաքրության, պատշաճ տեսքի համար»¹⁵: Մա է իրական ազատ և պատասխանատու քաղաքացիների պահվածքը, որը պետք է դառնա առօրյա կյանքի նորմ:

Անդրադառնալով այսօրվա մարտահրավերներին, որի առջև կանգնած է ժամանակակից աշխարհը և որը ինչ որ առումով պատճառ է դարձել մարդկանց հավատի կորստի, դրանք պահանջ են առաջացրել աշխարհի համար կերտելու «նոր պատմություն»: Ինչպես արդյունաբերական հեղափոխության շրջանում նոր գաղափարներ ի հայտ եկան քսաներորդ դարի համար, այնպես էլ ընթացիկ հեղափոխությունը բիոտեխնոլոգիաներում և ինֆորմատիկայում պահանջում է թարմ, նոր տեսլական: Նրանք, ովքեր կարող են դա առաջարկել, իրենք էլ մարդկանց, ովքեր կորցրել են հավատը «ազատական պատմության» հանդեպ, կտան նոր նշագիծ: Այս հանգամանքը նաև հաշվի առնելով և մեկ անգամ ևս կարևորելով պետություն-շուկա ժամանակակից մարտահրավերների առկայությունը՝ գտնում ենք, որ ստեղծված իրավիճակում Հայաստանի համար խիստ կարևոր է փոքր, բայց ուժեղ և արդյունավետ պետություն ունենալու տեսլականը: Մրա ընկալումը և ընդունումը պահանջում է նախ և առաջ պետական ինստիտուտների համակարգային փոփոխություն, ազատ շուկայական տնտեսության պահանջների կատարում, նոր որակի փոխհարաբերությունների հաստատում՝ պետություն-քաղաքացի, պետություն-շուկա հարթությունում: Մա նաև նշանակում է պատասխանատվության բարձր աստիճան հանրային, հասարակական կյանքի խնդիրների լուծմանը վերաբերող որոշումների ընդունման և իրականացման գործընթացներում:

15. <https://pro.rbc.ru/news/5c9c9b819a79471ca9843366>

Ваагн Хачатурян

ГОСУДАРСТВО И РЫНОК: НОВЫЕ ВЫЗОВЫ

Аннотация: Дискуссия об отношениях между рынком и государством кажется вечной. С одной стороны, может показаться, что об этой проблеме все сказано, но в действительности в новых ситуациях, в которых оказывается человечество, она становится более актуальной. Так называемая четвертая промышленная революция также меняет восприятие людей о роли, об отношениях государства или рынка. Сейчас, как никогда, необходимо вновь обратиться к отношениям между рынком и государством, которые всегда интересуют очень многих.

Ключевые слова: государство, рынок, институты, ответственность, поведение.

Vahagn Khachaturyan

THE STATE AND MARKET: THE NEW CHALLENGES

Abstract: The state and market relationships seem to be eternal. On the one hand, it may seem that everything is said about this problem, but in reality, in the new situations in which humanity has appeared, it has become more relevant. The so-called fourth industrial revolution also changes people's perceptions about the state and markets relations. Now, more than ever, there is an importance to re-refer to the state and market relations that interest almost everyone at all times.

Keywords: state, market, institutions, responsibility, behavior.

Հայկ Սարգսյան

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
sargsyan.yasu@gmail.com*

Ռուբեն Գևորգյան

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ,
Ֆ.մ.գ.թ., տ.գ.դ., պրոֆեսոր
rubengevorgyan@ysu.am*

**ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒՄԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Համառոտագիր. Ամենատարբեր խնդիրները, որոնք առաջանում են հասարակական ու տնտեսական համակարգերում, բավարար լուծումներ չեն ստանում հիմնականում ինստիտուցիոնալ ռեֆորմների անբավարար գործարկման պատճառով: Անցումային (տրանզիտիվ) տնտեսություններում հաճախակի են դարձել տնտեսվարող սուբյեկտների և մարդկանց վարքագծային շեղումները (անոմալիաները), որոնք առաջադրում են ոչ միայն ճշգրիտ ախտորոշման, այլև լուծումներ «չաշխատող» ինստիտուտների փոխարացման առումով: Աշխատանքում՝ որպես օպերացիոն հասկացություն, գործառնում է ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտ եզրը: Ինստիտուտների ֆունկցիաների խաթարման (դիսֆունկցիայի) պարագայում ներկառուցված ինստիտուտները դառնում են յուրօրինակ փոխարինիչներ: Առանձին քննարկման առարկա են դառնում «ինստիտուտների դիսֆունկցիա», «պետության զավթում» և ներկառուցված *օպորտունիստական* ոչ ֆորմալ ինստիտուտները: Ցույց է տրված, որ այդ հասկացությունների միջև գոյություն ունեն կապեր: Սոցիոմետրիկ տվյալների էմպիրիկ վերլուծության միջոցով բացահայտվել են այդ կապերը: Կիրառված մեթոդաբանությունը թույլ է տվել բացահայտել այն երկրները, որտեղ վերը նշված երևույթների առկայության հավանականությունը բարձր է:

Հոդվածում քննարկվել է նաև ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտների վերացման հնարավոր ուղիները:

Բանալի բառեր. ինստիտուտներ, ինստիտուտների դիսֆունկցիա, պետության զավթում, ներկառուցված ինստիտուտներ, օպորտունիստիկ վարք:

Ներածություն: Խոսելով ոչ ֆորմալ սոցիալական ինստիտուտների մասին՝ սովորաբար հասկանում են մարդկանց այս կամ այն հանրույթին բնորոշ արժեքներ և սովորույթներ: Մարդկային գործունեության մեջ արդյունավետության ձգտումը առաջ է բերում մասնագիտացում, ինչն էլ իր հերթին բերում է գործունեության արդյունքների փոխանակման և այդ փոխանակումը կարգավորող ինստիտուտների՝ շուկաների անհրաժեշտության: Նորբյան մրցանակի դափնեկիր Դագլաս Նորթը Ինստիտուտները բնութագրում է որպես «հասարակությունում խաղի կանոններ» կամ «մարդկանց կողմից հնարված՝ իրենց իսկ փոխգործունեությունը ձևավորող սահմանափակումներ»: Բնականաբար, հասարակությունը սահմանափակումներ մտցնում է միայն այն ժամանակ, երբ դրանցով ձևավորված փոխ-

գործունեությունը կլինի ավելի օգտավետ: Արդյունքում գոյատևում են միայն արդյունավետ ինստիտուտները: Քանի որ ինստիտուտները ոչ թե փոխարինում են մարդկային որոշակի փոխհարաբերությանը, այլ կարգավորում կամ ձևավորում են այն, ապա դրանց արդյունավետությունը, իր հերթին, պետք է պայմանավորվի փոխհարաբերությունների խթանումով: Հասարակությունը, սակայն, ավելի բարդ փոխհարաբերությունների ամբողջություն է [Վ. Գաբրիելյան, Հ. Սարգսյան, 2009]:

Տնտեսական գործակալի օպորտունիզմը [O. Williamson, 1985] սահմանվում է որպես իր շահին հետամուտ երևույթ, որն իրագործվում է ամեն գնով, չխորշելով խաբեությունից, խարդավաններից, հանրային կյանքին խորթ ու անընդունելի այլ բարքերից, որոնք ունենում են ex ante և ex post դրսևորումներ:

Հողվածում կներդնենք ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտներ հասկացությունը, որոնք առաջանում են ֆորմալ ինստիտուտների ներսում՝ հաճախ գործնականում փոխարինելով դրանց:

Սոցիոլոգիայի և տնտեսագիտության մեջ գոյություն ունի ինստիտուտների ֆունկցիայի խաթարում (դիսֆունկցիա) հասկացությունը: Յուրաքանչյուր ֆորմալ ինստիտուտ ունի գրավոր փաստաթղթերով իրեն վերապահված գործողությունների որոշակի համախումբ: Սակայն լինում են դեպքեր, երբ ֆորմալ ինստիտուտը ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարում է կատարել իր գործառույթները [Silvestrov, 2015]: Երբեմն դիսֆունկցիան բնորոշում են որպես մի իրավիճակ, երբ ինստիտուտը սկսում է վնասել հասարակությանը [Zeldner, 2013]: Հաճախ ինստիտուտների դիսֆունկցիան կապում են հասարակության ներսում տնտեսական և սոցիալական գործընթացների զարգացման հետ, երբ որոշ ինստիտուտներ չեն հասցնում հարմարվել հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացմանը [Krisnawati et al. 2014]: Նման իրավիճակներում ինստիտուտները կամ պետք է փոխեն կառավարման գոյություն ունեցող մեթոդները, կամ ընտրեն ինստիտուտի կազմակերպման նոր համարժեք մեխանիզմներ: Դիսֆունկցիան առաջանում է այն դեպքերում, երբ կառավարման մեխանիզմների փոփոխման գործընթացը բավարար դինամիկ և ադեկվատ չէ:

Համարվում է, որ ինստիտուտների դիսֆունկցիան կոռուպցիայի առկայության կարևորագույն պատճառներից մեկն է: Այն ոչ թե ինստիտուտի ներսում նպատակաուղղված գործունեության հետևանք է, այլ, որոշ առումով՝ ինստիտուտի ոչ ադեկվատ էվոլյուցիայի: Այն երևույթը, որը մենք բնորոշում ենք որպես ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտներ, ինստիտուտի ներսում ձևավորվող մտածված մարտավարության հետևանք է:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի նաև «պետության զավթում» հասկացությունը: Այն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել Համաշխարհային բանկի փորձագետների կողմից, որի բովանդակությունը հանգում է նրան, որ «առավելություններ ստանալու նպատակով անհատների, խմբերի կամ կազմակերպությունների գործունեությունը ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտում ուղղվում են օրենքների, որոշումների, հրամանագրերի ընդունման վրա ազդելուն՝ անձնական օգուտի ակնկալիքով» [World Bank]: Ավելի ուշ Աճեմօղլուն և Ռոբինսոնը [Achemoglu and Robinson] ներդրեցին «զավթված ժողովրդավարություն» հասկացությունը, որը կարելի է ներկայացնել որպես մի իրավիճակ, երբ «պետության զավթումը» տեղի է ունենում ֆորմալ ժողովրդավարական ինստիտուտների գոյության և «հաջող» աշխատանքի պայմաններում: Բոլոր այս դեպքերում ենթադրվում է ինստիտուտների «կողմնակի» զավթում որոշակի խմբերի կողմից, որոնց սովորաբար կոչում են օլիգարխներ: Մեր նկարագրած ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտների պարագայում, ինչպես արդեն նշվեց, արտաքին ազդեցությունը բացակայում է:

Այդուհանդերձ, նշված բոլոր երեք հասկացությունները՝ «ինստիտուտների դիսֆունկցիա», «պետության զավթում» և «ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտներ», սերտորեն փոխկապակցված են:

Հաջորդիվ հոդվածում կնկարագրվեն ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտները և դրանց կապը վերը հիշատակված երևույթների հետ:

Երևույթի նկարագրություն: Ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտները մարդկանց կազմակերպված խմբեր են ինստիտուտի ներսում, որոնք համատեղ օգուտ (շահ) ստանալուն պատակով ստեղծում են ինստիտուտների ֆորմալ կանոնների վրա մակարածող չգրված կանոններ, որոշ դերեր, դրամական և տեղեկատվական հոսքեր: Ընդ որում, «օգուտը» ոչ միշտ կարող է ունենալ դրամական արտահայտություն: Այդ ինստիտուտները կարող են ստեղծել միայն մարդիկ, որոնք անմիջականորեն ներգրավված են ֆորմալ ինստիտուտների գործունեության մեջ:

Ցանկացած ֆորմալ ինստիտուտ ունի որոշակի նպատակ: Սովորաբար այդ նպատակը ձևակերպվում է ինստիտուտի գործունեությունը կարգավորող փաստաթղթում: Յուրաքանչյուր մարդու բնորոշ է օգուտ ստանալու ցանկությունը: Սովորական պայմաններում ինստիտուտի ներքին ընթացակարգերը կարգավորում են ինստիտուտի անդամների օգուտ ստանալու գործընթացը: Որոշ պայմանների առկայության պարագայում ի հայտ է գալիս աշխատանքային հարաբերություններով չնախատեսված լրացուցիչ օգուտ ստանալու հնարավորություն: Այդ հնարավորությունների համակարգման և ինստիտուտացման գործընթացն էլ հանգեցնում է ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների առաջացմանը: Դրանց ստեղծման համար պահանջվում է որոշակի նախաձեռնություն և «ձեռներեցություն»: Եվ, ընդհանրապես, ինչպես բոլոր ոչ ֆորմալ ինստիտուտները, այս ինստիտուտների ստեղծումն էլ բավական տարբերակված է ըստ երկրների և համայնքների և մեծապես կախված է այս կամ այն հասարակությունում ընդունված վարքագծային նախադրյալներից: Արդյունքում, ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտները կարող են լինել շատ տարբեր և ունենալ տարբեր դրսևորումներ: Առանձնացնենք այդ ինստիտուտների հիմնական բնութագրիչները.

▶ Ֆորմալ ինստիտուտի նպատակադրման փոփոխություն: Ձևական հայտարարված նպատակը կորսվում է՝ վերածվելով գործառույթի:

▶ Գոյություն չունեցող կոորդինացվող շուկայի ստեղծում (օրինակ՝ բուժհաստատությունը բոլոր այցելուներին տալիս է «հիվանդ է» նախնական ախտորոշում, ինչից բխում է ախտորոշման հետագա թանկարժեք գործընթացը): Գոյություն ունի նաև միջինստիտուցիոնալ կեղծ շուկաների ստեղծման հնարավորություն (օրինակ՝ բուժհաստատությունները շուկա են ստեղծում ոչ միայն իրենց, այլև համագործակցող հաստատությունների (ախտորոշման կենտրոնների, դեղատների) համար՝ հետագա փոխադարձ հաշվարկի կատարմամբ):

▶ Ֆինանսական հոսքերի և/կամ «օգուտի» հոսքերի ստեղծում, քանի որ փոխադարձ հաշվարկը ոչ միշտ է ունենում դրամական կամ այլ նյութական արտահայտություն, այլ հաճախ դրսևորվում է ոչ նյութական ծառայությունների, ազդեցության և օգուտների փոխանակման ձևով: Գրականության մեջ գոյություն ունի նմանատիպ, այսպես կոչված, «փափուկ դոլարներ» (soft dollars) հասկացությունը: Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտը ապահովում է այդպիսի ոչ նյութական արժեքների համապատասխան գնահատականը, յուրաքանչյուր գործարքի (տրանսակցիայի) համապատասխան գինը և «ազնիվ» փոխանակում էրաշխավորող պայմաններ:

▶ Տեղեկատվական հոսքերի ստեղծում: Նախ և առաջ խոսքը վերաբերում է «շուկայի»

մասին տեղեկությանը և մեթոդական ցուցումների օգնությամբ դրա ընդլայնման հնարավորություններին, առ այն, թե ինչպես ստեղծել շուկաներ և կառավարել պահանջարկը՝ կիրառելով ֆորմալ ինստիտուտի կանոնները, որում ներկատուցված է օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտը, ինչպես նաև, նոր «հաճախորդների» վերաբերյալ տեղեկությանը՝ ըստ մի շահառուից մյուսին ուղեկցման շղթայի, և օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտի բոլոր մասնակիցների կողմից իրենց պարտականությունները «բարեխղճորեն» կատարելու վերաբերյալ տեղեկությանը:

► Ոչ ֆորմալ ինստիտուտների ներսում չգրված կանոնների և պատիժների ժողովածուի ստեղծում: Խախտումների վերաբերյալ տեղեկության անցումը նրանց, ովքեր իրավասու են պատիժ նշանակել և այն ի կատար ածել: Ընդ որում, ինչը շատ կարևոր է, պատիժներն առավել հաճախ լինում են ֆորմալ ինստիտուտի զինանոցից: Նույն կերպ է նաև խրախուսանքների պարագայում: «Արժանիքների» վերաբերյալ տեղեկությունը փոխանցվում է նրանց, ովքեր իրավասու են խրախուսման համար: Այս դեպքում ևս, չնայած ավելի հազվադեպ, կարող է օգտագործվել ֆորմալ ինստիտուտի խրախուսանքների զինանոցը (օրինակ՝ մասնագիտական առաջխաղացում): Այս դեպքում, սակայն, տվյալ գործիքակազմին դիմում են ավելի հազվադեպ, քանի որ խրախուսման համար առավել հաճախ օգտագործվում է օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտի ներսում ստեղծված «ավելացված արժեքը»: Որոշ ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներ կիրառում են տեղեկատվության հավաստիության ստուգման և հոսքերի հսկման մեխանիզմ:

► Աշխատանքի արտոնագրերի վաճառք: Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի շրջանակներում կարող են տրվել աշխատանքի «թույլտվություններ»: Օրինակ՝ բժիշկը բուժհաստատությունում աշխատելու հնարավորություն է ստանում որոշակի «վարձավճարի» դիմաց:

► Ինստիտուտի մասնակիցների դերերի և պարտականությունների սահմանում: Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի շրջանակներում հիմնականում առկա է դերերի, իրավունքների և պարտականությունների հստակ տարբերակում: Ընդ որում, դերերը կոռելացված են ֆորմալ ինստիտուտի դերերի հետ: Սովորաբար օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտի ղեկավարումն իրականացվում է մի մարդու կամ մարդկանց խմբի կողմից, որոնք ֆորմալ ինստիտուտում զբաղեցնում են ղեկավար պաշտոն: Ոչ ֆորմալ ինստիտուտի ներսում կարելի է առանձնացնել հետևյալ մասնագիտացումները.

ա. Ղեկավարներ, որոնք իրականացնում են գործընթացների անմիջական կառավարում,

բ. Գաղափարակիրներ, որոնք ստեղծում են փոփոխվող իրավիճակներին, մասնավորապես, ֆորմալ ինստիտուտի կանոնների փոփոխություններին հարմարվելու սխեմաներ: Հաճախ գաղափարակիրն ու ղեկավարը մեկտեղված են մեկ անձի մեջ: Այստեղ հարկ է նկատել, որ ի տարբերություն «պետության զավթման» իրավիճակի, երբ առաջնային խնդիր է դառնում օլիգարխիկ միջավայրի համար բարենպաստ նոր օրենսդրական ակտերի ընդունման լոբբինգը, այս դեպքում բարենպաստ ֆորմալ կանոնների ստեղծումը առաջնային խնդիր չէ, քանի որ օպորտունիստական սխեմաների ստեղծման համար կարող են օգտագործվել ցանկացած կանոններ: Ավելին, օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտը շահագրգռված է կանոնների հաճախակի փոփոխմամբ (ընդ որում, այնքան էլ կարևոր չէ՝ որոնց), քանի որ այն կարող է հարմարվել դրանց շատ ավելի արագ, քան «պոտենցիալ այցելուները», ինչը կարող է հանգեցնել «ավելացված արժեքի» մեծացման: Ինստիտուտի ներքին կանոնների փոփոխման հաճախականությունը կարող է լինել ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի գոյության անուղղակի ցուցիչ:

գ. Շուկաներ ստեղծողներ: Նրանք ինստիտուտի անդամներ են, որոնք մասնագիտա-

ցած են «հիվանդ է» ախտորոշում տալու մեջ՝ ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի ներքում գործող մեթոդաբանության համաձայն, և օժտված են այցելուներին դրանում «համոզելու» հմտություններով:

Հարկ է նկատել, որ այստեղ օգտագործում ենք ախտորոշումը՝ «հիվանդ է» եզրույթը բավական լայն իմաստով՝ նկատի չունենալով միայն բուժհաստատություններին: Նկատի ունենք, օրինակ.

I. պաշտոնյայի, որը համոզում է դիմողին, որ իր ծրագիրը չի կարող ֆինանսավորվել,

II. դասախոսի, որն ուսանողին անբավարար գնահատական է նշանակում,

III. պաշտոնյայի, որը տալիս է վիզաներ, թույլտվություններ, հավաստագրեր, արտոնագրեր և այլն:


Այս ցանկը կարելի է երկար շարունակել: Ակնհայտ է, որ օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտները կարող են ի հայտ գալ ամենատարբեր իրավիճակներում, ընդ որում, պահպանելով ընդհանուր գծերը և գործելու տրամաբանությունը:

դ. Տեղեկատվություն փոխանցողներ: Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակումն ու տարածումը շատ կարևոր են: Դեկավարությունը պետք է իմանա շուկա ստեղծողների և անմիջական «օգուտ» ստացողների վարքագծի մասին, որպեսզի հետագայում հնարավորություն ունենա «ազնվորեն» բաշխելու «օգուտները» և պատժելու նրանց, ովքեր փորձում են աշխատել անբարեխղճորեն կամ, ինչը շատ ավելի կարևոր է, փորձում են ստանալ նույն «օգուտները» օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտի շրջանակներից դուրս: Յուրաքանչյուր այդպիսի ինստիտուտ մշակում է «չսանկցավորված» մուտքից պաշտպանվելու մեխանիզմներ: Գրեթե բոլոր ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներն ունեն իրազեկողների անկախ համակարգ: Եվ այս դեպքում կարող են օգտագործվել ֆորմալ ինստիտուտի տեղեկատվության փոխանակման համակարգերը, որում ներկառուցված է ոչ ֆորմալ ինստիտուտը: Տեղեկատվության տարածման այս ուղին առավել հաճախ օգտագործվում է տեղեկատվությունը գաղափարակիրներից «շուկա ստեղծողներին» փոխանցելու համար:

ե. Սպասարկող անձնակազմ: Հաճախ ֆորմալ ինստիտուտի սպասարկող անձնակազմն (վարորդներ, փոստատարներ, քարտուղարներ և այլն) ամբողջ ծավալով օգտագործվում է ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի կարիքների համար:

Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի որոշ մասնակիցներ կարող են մասնակցել դրա գործունեությանը միանգամայն չգիտակցված: Ավելին՝ առանձին ինստիտուտները կարող են լինել այնքան «ոչ ֆորմալ» և այնքան սերտաճած ֆորմալ ինստիտուտներին, որ դրանց մասնակիցները կարող են չպատկերացնել, որ իրենց միջև առկա փոխհարաբերությունները հնարավոր է մեկնաբանվեն վերը նկարագրված երանգավորմամբ: Դա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ օգուտի և ազդեցության փոխանակումը չի նյութականացվում և չի ստանում հստակ չափելի դրամական արտահայտություն:

Ինչպես ինստիտուտների դիսֆունկցիայի պարագայում, ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի գոյության հետևանքներից մեկը ֆորմալ ինստիտուտի անձնավորումն է, երբ կանոնները և ֆորմալ փոխհարաբերությունները փոխարինվում են որոշումներով, իսկ երբեմն նաև՝ առանձին անձանց քմահաճույքներով: Սակայն ոչ բոլոր ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներն են հակված անձնավորման: Ավելին՝ անձնավորված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների դեմ պայքարը շատ ավելի հեշտ է, քանի որ ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտը մարմնավորող անձանց հեռացումը կարող է լուծել խնդիրը: Մինչդեռ այն դեպքերում, երբ ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտը գործում է որոշակի կանոնների հիման վրա, դրա դեմ պայքարը կարող է շատ



Նկար 1. Ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի գործելու մոտավոր սխեմա

ղծվար լինել: Կարծում ենք, որ անցումային տնտեսությամբ երկրներում այսպես կոչված համակարգային կոռուպցիայի գոյության գլխավոր պատճառ են հանդիսանում հենց նման իրավիճակները, երբ ղեկավար կառույցներում անձանց բազմաթիվ փոփոխությունները գործնականում չեն փոխում իրավիճակը:

Ստորև ներկայացված նկարում բերված է ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտի ղեկավարման մոտավոր սխեման:

Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներում կառավարման գործընթացի բնորոշ գիծը իրավասությունների պատվիրակման ցածր մակարդակն է: Գրեթե բոլոր գործընթացներն ամփոփված են ղեկավարության ձեռքում:

Մակրոտնտեսական հետևանքներ: Ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների գոյությունն այս կամ այն չափով բնորոշ է շատ երկրների: Կարելի է առանձնացնել այդպիսի ոչ ֆորմալ ինստիտուտների առաջացման մի քանի հիմնական պատճառներ:

1. Տվյալ հասարակության մեջ ընդունված վարքագծային նախադրյալները կարևոր են ընդհանուր ինստիտուցիոնալ զարգացման համար [Դ. Саргсян, Բ. Геворгян, 2019]: Ընդգծենք, որ վարքագծային նախադրյալները կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն ներկառուցված ոչ ֆորմալ ինստիտուտների ձևավորման գործում, այլև, թե ինչպես են դրանք փոփոխվում ըստ երկրի:

2. Թույլ ֆորմալ ինստիտուտներ: Որքան թույլ և չկշռադատված են զսպումների և հակակշիռների, ինչպես նաև ընդունված նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության համակարգերը, այնքան բարձր է ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների ստեղծման հնարավորությունը:

3. Այս հիպոթեզը կարող է թվալ անսպասելի, բայց այն երկրներում, որոնցում բարձր է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հակվածությունը, նույնքան բարձր է ներկառուցված օպորտունիստական ինստիտուտներ ստանալու հավանականությունը, քանի որ դրանց ստեղծման համար պահանջվում է որոշակի նախաձեռնություն և ռիսկի հակում:

4. Ներկառուցված օպորտունիստական ինստիտուտների առաջացման պատճառ կարող են լինել նաև արտաքին գործոնները՝ հեղափոխություն, պատերազմ և այլն:

Շատ վտանգավոր կարող է լինել ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների հակվածությունը փոխգործակցման և՛ հորիզոնական, և՛ աստիճանական կարգային (հիերար-

խիկ) կապեր ստեղծելուն, ինչը թույլ կտա նրանց մեծացնել այցելուների բազան «խաչվող վաճառքի» և փոխկապակցված ու շարունակական «շուկաների» ստեղծման օգնությամբ: Օրինակ, երբ արտոնագրի ստացման համար անհրաժեշտ է ձևակերպել որոշ փաստաթղթեր մեկ այլ հաստատությունում:

Առավել հաճախ ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտները գործում են՝ ընդհանրապես չհախտելով օրենքներ և չկրելով որևէ քրեական տարր: Ֆորմալ ինստիտուտի կանոններին հարմարվելու կարողությունը օրենքի տեսանկյունից նրանց գործնականում դարձնում է անխոցելի: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, դրամական հոսքերի փոխանակումը փոխարինվում է օգուտների և ծառայությունների փոխանակմամբ: Ծատ հաճախ առկա է մի երևույթ, որը կարելի է կոչել որպես «ոչ պետքական ծառայությունների ստացման պարտադրանք»: Ընդ որում, «ծառայությունները» միանգամայն օրինական են: Օրինակ, երբ ախտորոշման համար ոչ անհրաժեշտ ստուգումներ է անցնում լրիվ առողջ մեկը, մարդը կազմում է թանկարժեք բիզնես ծրագիր, որպեսզի ստանա ֆինանսավորում մի խորհրդատվական ընկերությունում, որը կապված է ֆինանսավորման թույլտվություն սովոր պաշտոնյայի հետ, կամ ուսանողը վճարվող կարճաժամկետ թրեյնինգ պետք է անցնի մի ընկերությունում, որը կապված է դասախոսի հետ, ում մոտ նա անբավարար գնահատական է ստացել: Այս ցուցակը կարելի է երկար շարունակել: Բոլոր այս դեպքերում ավելանում է օրինական ավելացված արժեք, որն, ըստ էության, վնասաբեր է ընդհանուր տնտեսության համար: «Տնտեսական աճը» նման իրավիճակներում չի ապահովում զարգացում:

Փաստորեն, նկարագրվեց մի իրավիճակ, երբ ներկառուցված օպորտունիստական ինստիտուտները կարող են գործել օրինական հիմունքներով՝ չհախտելով որևէ ֆորմալ կանոն: Միևնույն ժամանակ առկա են բազմաթիվ հնարավորություններ, քանի որ այդ ոչ ֆորմալ ինստիտուտներն ըստ էության կոռուպցիայի օջախներ են, իսկ երբեմն էլ համագործակցում են միանգամայն բացահայտ քրեական խմբավորումների հետ: Անհրաժեշտ է ընդգծել, որ նկատի ունենք այնպիսի իրավիճակներ, երբ ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտը նման համագործակցության նախաձեռնող է, ինչն էլ տարբերում է այս իրավիճակը «պետության զավթում» երևույթից:

Ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներով ֆորմալ ինստիտուտները կարող են «զավթվել» շատ ավելի հեշտ, ավելին՝ գոյություն ունեն նաև սխեմաներ, երբ ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտն ինքն է առաջարկում «զավթել» իրեն:

Փորձառական հետազոտություններ: Հիշատակված բոլոր երեք երևույթները՝ «պետության զավթումը», «ինստիտուտների դիսֆունկցիան» և «ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտները», փոխկապակցված են և պետք է հանգեցնեն միևնույն հետևանքին, այն է՝ երկրի բնակչության կողմից անվստահության: Միևնույն ժամանակ ինստիտուտների նկատմամբ անվստահության մակարդակը կարող է պայմանավորված լինել վերը հիշատակված երևույթների հետ որևէ կապ չունեցող բազմաթիվ այլ գործոններով: Այդ պատճառով այդ երևույթների գոյության փաստի (օպերացիոնալ) փորձառական սահմանումը բավական դժվար է:


Գոյություն ունեն տվյալների մի քանի շտեմարաններ, որոնցում ուսումնասիրվում է ինստիտուտների հանդեպ բնակչության վստահության մակարդակը: Դրանցից առավել լայն և ամբողջական է WorldValueIndicators տվյալների շտեմարանը:

Հոդվածի այս հատվածում բերված են ինստիտուտների հանդեպ բնակչության վստահության մակարդակի վերլուծության արդյունքները՝ վերը հիշատակված երևույթների համատեքստում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հասկանալ, որ այդ վերլուծությունը չի կարող հավակնել «պետության զավթում», «ինստիտուտների դիսֆունկցիա» և «ներկա-

1.	Confidence: The Churches	10.	Confidence: Parliament
2.	Confidence: The armed forces	11.	Confidence: The Civil service
3.	Confidence: The press	12.	Confidence: Universities
4.	Confidence: Television	13.	Confidence: Major Companies
5.	Confidence: Labour Unions	14.	Confidence: Banks
6.	Confidence: The police	15.	Confidence: Environmental organizations
7.	Confidence: The courts	16.	Confidence: Women's organizations
8.	Confidence: The government (in your nation's capital)	17.	Confidence: Charitable or humanitarian organizations
9.	Confidence: Political Parties		

ռուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներ» երևույթների փոխկապակցված խնդիրների փորձառական բնորոշման ամփոփ պատկերի ներկայացմանը: Նման վերլուծության համար անհրաժեշտ է տվյալների մասնագիտացված շտեմարանների ստեղծում: Այդուհանդերձ, անցկացված համեմատական վերլուծությունը կարող է արդյունավետ լինել հասկանալու համար այն իրավիճակները, երբ ինստիտուտները դադարում են գործել համաձայն այն կանոնների, որոնք դրվել էին դրա հիմքում:

WorldValueIndicators (WVI) տվյալների շտեմարանում ներկայացված են այս կամ այն ֆորմալ ինստիտուտի նկատմամբ հասարակության վերաբերմունքը՝ **վստահելիության ցուցիչով** բնորոշող 17 փոփոխականները:



Նկար 2. Ուսումնասիրվող բոլոր ինստիտուտներին չվստահող մարդկանց թվաքանակի միջին արժեքները՝ ըստ յուրաքանչյուր երկրի

WVI-ի հարցումների 6-րդ փուլն անցկացվել է 56 երկրներում: Յուրաքանչյուր երկրում ձևավորվել է հարցվողների ներկայացուցչական ընտրանք, որոնց տրվել է հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ վերը նշվածները: Հարցման մասնակիցները յուրաքանչյուր հարցին ի պատասխան պետք է ընտրեին ստորև բերված չորս պատասխաններից մեկը:

1. A great deal, 2. Quite a lot, 3. Not very much, 4. None at all.


1-ին և 2-րդ պատասխանները միավորել ենք մի խմբում, իսկ 3-րդն ու 4-րդը՝ մեկ այլում: 3-րդ և 4-րդ պատասխանների խմբում այն մարդիկ են, որոնք այս կամ այն չափով չեն վստահում ինստիտուտներին: Հավելված 1-ում ըստ երկրների և ինստիտուտների ներկայացված է, թե ինչ մաս են կազմում այդ մարդիկ:

Հաջորդ նկարում բերված են ուսումնասիրվող բոլոր ինստիտուտներին չվստահող մարդկանց թվի միջին արժեքները՝ ըստ յուրաքանչյուր երկրի:

Նկարից հասկանալի է դառնում, որ երկրների ուսումնասիրվող ընտրանքի մեջ միջինում ինստիտուտների հանդեպ անվստահության ամենացածր մակարդակն առկա է Ուգրեկստանում, իսկ ամենաբարձրը՝ Մյուլենիայում: Այդ նկարի հիման վրա դժվար է վերջնական եզրահանգումներ անել այս հոդվածում ուսումնասիրվող երևույթների վերաբերյալ: Նկար 1-ում բերված գնահատականները մեծապես կանխորոշվում են այս կամ այն երկրում ինստիտուտների ընկալման առանձնահատկություններով: Անհրաժեշտ է իմանալ, որ այդ առանձնահատկությունները կարող են լինել երկրների միջև սոցիալ-մշակութային, էթնիկ, տնտեսական, կրոնական և այլ սուբյեկտիվ տարբերությունների հետևանք:

Այդ խնդրի լուծման համար մենք կուսումնասիրենք ինստիտուտների հարաբերական գնահատականները՝ ըստ յուրաքանչյուր երկրի: Այդ նպատակով յուրաքանչյուր երկրի դեպքում ուսումնասիրվող 17 ինստիտուտների համար հաշվարկել ենք վստահության մակարդակի գնահատականների միջին արժեքները և ստանդարտ շեղումները: Այդ ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է նաև վստահության մակարդակի նորմալացված գնահատականը:

$$z = (\mu - \mu_m) / \sigma$$




Նկար 3. Դատարանների հանդեպ վստահության մակարդակի նորմալացված գնահատականը

z- նորմալացված գնահատական,
 μ- վստահության մակարդակի գնահատական,
 μ_m - անվստահության մակարդակի գնահատականի միջին արժեքն ըստ երկրների,
 σ- անվստահության մակարդակի գնահատականների ստանդարտ շեղումն ըստ երկրների:

Այդ ցուցանիշի հիման վրա առանձնացնում ենք այն ինստիտուտները, որոնք ունեն միջին արժեքից առավել մեծ շեղումը դեպի անվստահության ավելի բարձր մակարդակ: Կենտրոնանանք երկու ինստիտուտների՝ դատարանների և հասարակական ծառայություններ տրամադրող ինստիտուտների վրա: Սրանք այն ինստիտուտներն են, որոնցում այս հոդվածում ուսումնասիրվող «պետության զավթում», «ինստիտուտների դիսֆունկցիա» և «ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտներ» երևույթները ունեն գոյության ամենամեծ հավանականությունը:

Հաջորդ երկու նկարներում բերված են այն երկրները, որոնցում համապատասխանաբար դատարանների և հասարակական ծառայություններ մատուցող ինստիտուտների հանդեպ անվստահության մակարդակի նորմալացված գնահատականի արժեքը դրական է: Դրանք այն երկրներն են, որոնցում դատարանների և հասարակական ծառայություններ տրամադրող ինստիտուտների նկատմամբ անվստահությունը միջինից բարձր է:

Նկար 3-ից երևում է, որ դատարանների հանդեպ անվստահության միջինից բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում զարգացած երկրները բացակայում են: Իսկ Նկար 4-ում ներկայացված երկրներից միայն երեքն են զարգացած՝ Նոր Զելանդիան, Ավստրալիան և Նիդերլանդները: Ստորև ներկայացված է երկրների աղյուսակ, որոնցում դատարանների և հասարակական ծառայություններ տրամադրող ինստիտուտների համար անվստահության մակարդակի նորմալացված գնահատականի արժեքը դրական է:



Նկար 4. Հասարակական ծառայություններ տրամադրող ինստիտուտների հանդեպ վստահության մակարդակի նորմալացված գնահատականը

1.	Argentina	6.	Ghana	11.	Philippines	16.	Yemen
2.	Armenia	7.	India	12.	Romania	17.	Zimbabwe
3.	Chile	8.	Mexico	13.	Slovenia		
4.	Colombia	9.	Mexico	14.	South Africa		
5.	Ecuador	10.	Peru	15.	Trinidad and Tobago		

Աղյուսակ 1. Երկրներ, որոնցում դատարանների և հասարակական ծառայություններ տրամադրող ինստիտուտների համար անվստահության մակարդակի նորմալացված գնահատականի արժեքը դրական է:

Մեր կարծիքով սրանք այն երկրներն են, որոնցում բարձր է այս հոդվածում ուսումնասիրվող երևույթներից որևէ մեկի առկայության հավանականությունը.

1. «ինստիտուտների դիսֆունկցիայի»,
2. «պետության զավթման»,
3. «ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների»:

Հավելված 1.

	Confidence: The Churches, (%)	Confidence: The armed forces, (%)	Confidence: The press, (%)	Confidence: Television, (%)	Confidence: Labour Unions, (%)	Confidence: The police, (%)	Confidence: The courts, (%)	Confidence: The government (in your nation's capital), (%)	Confidence: Political Parties, (%)	Confidence: Parliament, (%)	Confidence: The Civil service, (%)	Confidence: Universities, (%)	Confidence: Major Companies, (%)	Confidence: Banks, (%)	Confidence: Environmental organizations, (%)	Confidence: Women's organizations, (%)	Confidence: Charitable or humanitarian organizations, (%)	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Uzbekistan	16	4	17	12	22	15	13	3	16	5	8	10	23	19	14	9	18	
Qatar	13	4	28	22	0	4	8	16	0	14	0	21	30	42	27	41	13	
Malaysia	9	20	31	29	22	26	20	25	38	31	22	16	26	19	22	23	22	
China	74	8	30	28	35	27	20	8	16	13	23	11	33	13	21	19	29	
Bahrain	25	-	27	28	-	29	28	27	-	28	27	27	27	26	27	29	30	
Singapore	30	23	43	42	42	21	17	21	32	26	24	17	29	24	31	34	38	
Philippines	6	30	33	25	50	34	35	43	53	43	35	21	36	24	19	15	20	
Ghana	11	21	41	28	42	45	43	41	61	46	33	15	25	21	31	28	24	
India	11	15	29	26	36	46	34	48	61	41	37	24	45	16	30	27	33	
Estonia	36	27	55	34	41	22	34	47	72	58	28	8	39	34	24	28	25	
Thailand	25	29	55	47	55	52	24	46	62	53	40	13	38	15	32	27	36	
Cyprus	32	27	51	47	50	35	27	53	70	52	47	16	39	35	26	27	28	
Azerbaijan	55	24	49	37	55	38	41	19	56	36	34	29	40	39	51	49	52	
Kuwait	20	26	68	60	-	28	24	37	-	51	47	38	48	40	50	58	34	
Kyrgyzstan	48	36	44	32	47	45	50	42	49	45	38	36	43	33	45	42	37	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Zimbabwe	14	43	65	54	56	48	44	53	66	55	47	19	28	30	34	36	26
Rwanda	40	35	48	52	50	37	40	36	49	35	39	42	48	33	52	46	42
Morocco	9	22	51	53	68	35	38	52	72	61	49	28	46	41	38	40	34
Belarus	27	26	61	54	56	46	45	44	65	51	34	24	44	48	34	42	38
Nigeria	8	37	38	29	53	72	54	64	6	61	41	30	34	29	44	43	38
Turkey	27	25	59	55	58	26	32	42	65	45	41	31	50	60	46	41	44
South Korea	48	37	39	39	62	42	33	50	74	73	51	33	44	28	33	38	32
South Africa	22	49	44	35	54	53	47	52	62	55	55	40	48	42	47	45	48
Germany	67	35	57	54	49	17	31	56	77	58	45	14	75	76	35	30	24
New Zealand	54	18	73	63	70	18	35	51	83	61	50	19	55	37	41	49	32
Uruguay	59	62	54	57	68	43	47	39	67	58	74	25	52	44	27	24	23
Brazil	29	39	54	59	60	55	49	58	84	79	49	25	40	50	37	35	38
Jordan	25	9	66	59	67	18	26	44	89	78	54	45	61	57	59	63	54
Japan	91	24	26	30	60	28	18	73	83	77	63	34	46	34	56	64	71
Australia	66	13	84	82	73	15	38	68	87	69	55	18	51	58	41	33	27
Pakistan	2	17	58	46	55	79	54	63	68	73	63	40	51	37	61	56	60
Colombia	25	43	63	63	79	54	66	60	83	79	77	27	38	49	28	27	28
Chile	42	44	46	43	55	35	73	66	83	75	67	38	67	64	33	28	30
Georgia	12	21	77	72	77	49	64	66	79	69	51	39	59	64	41	39	34
Ecuador	22	42	54	55	71	53	67	49	77	70	76	33	47	52	49	46	51
Russia	33	33	66	58	67	67	65	50	72	66	49	36	62	59	42	46	48
Armenia	18	11	71	65	81	60	67	59	76	72	63	40	57	39	52	56	44
Ukraine	23	41	46	43	60	68	75	75	78	80	55	34	59	67	44	45	42
Egypt	24	-	58	41	71	46	40	56	78	72	65	43	57	44	74	71	42
Iraq	23	39	72	51	73	42	42	60	89	78	76	35	64	41	58	58	40
United States	40	16	77	77	75	28	44	68	88	81	53	36	66	60	51	47	37
Mexico	36	41	70	66	76	72	69	61	78	75	79	25	46	54	34	33	40
Netherlands	76	44	65	59	58	32	35	65	81	65	64	22	59	73	51	53	55
Trinidad and Tobago	33	57	70	65	76	71	66	63	77	72	64	22	61	49	46	40	37
Poland	41	33	72	70	76	46	57	82	92	87	77	24	55	55	41	39	29
Algeria	27	43	68	57	69	45	55	61	77	72	61	52	62	58	65	67	55
Spain	72	48	68	70	78	40	59	79	85	65	60	23	65	84	41	50	34
Lebanon	57	53	65	64	66	56	56	72	73	68	65	50	56	50	56	60	57
Romania	26	32	72	66	80	57	66	81	88	84	73	33	56	62	52	50	53
Argentina	52	72	64	67	84	76	82	67	85	74	84	27	66	69	44	54	37
Peru	33	66	69	65	82	72	82	77	89	88	85	37	61	60	49	45	47
Yemen	19	58	89	81	78	68	76	70	90	88	88	49	65	59	68	68	48
Slovenia	75	65	77	67	81	57	74	92	97	94	90	38	69	62	51	54	65

Գրականության ցանկ

1. Silvestrov S. N., Zeldner A., G., Osipov V., S. Introduction to the Theory of Economic Dysfunction, Mediterranean Journal of Social Sciences, Vol 6 No 3., 2015, Rome.
2. Zeldner A.G. Destructive Tendencies and Constructive Opportunities to overcome them in the Economic System of Russia., Moscow, Ekonomika.
3. Krisnawati, A., Yudoko, G., Bangun, Y.R. Development path of corporate social responsibility theories // World Applied Sciences, Journal, 30 (Innovation Challenges in Multidisciplinary Research & Practice): 110-120. DOI: 10.5829/idosi.wasj.2014.30., 2014.
4. «Anticorruption in Transition. A Contribution to the Policy Debate» (The World Bank, Washington, D.C., 2000).
5. Acemoglu D., Robinson J. Persistence of Power, Elites, and Institutions. American Economic Review 2008, 267-293, <http://www.aeaweb.org/articles.php?doi=10.1257/aer.98.1.267>
6. Г. Л. Саргсян, Р. А. Геворгян, Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран; Вестник Московского университета, Серия 6. Экономика, N1, 2019.
7. Վ. Գարրիելյան, Հ. Սարգսյան, Տնտեսության հանրային հատվածի ընդհանուր բնութագիրը, Հանրային կառավարում (գիտական հանդես), N2, 2009

Гайк Саргсян

*Декан факультета Экономики и управления ЕрГУ,
доктор экономических наук, профессор
sargsyan.yusu@gmail.com*

Рубен Геворгян

*Факультет Экономики и управления ЕрГУ
к.ф-м.н, д.э.н, профессор*

ФУНКЦИОНИРОВАНИЕ НЕФОРМАЛЬНЫХ ВСТРОЕННЫХ ИНСТИТУТОВ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОНАЛИЗМА.

Аннотация: Различные проблемы, возникающие в социальных и экономических системах, решены не в полной мере из-за неудовлетворительных институциональных реформ. Страны с переходной экономикой стали чаще сталкиваться с ситуациями, когда поведенческими аномалиями людей и предприятий предполагают точный диагноз и решения для "неработающих" институтов. В работе, в качестве новой концепции предлагается понятие неформального встроенного оппортунистического института. В случае дисфункции институтов функции встроенные институты становятся уникальными заменителями. «Дисфункция институтов», «захват государства» и встроенные оппортунистические неформальные институты являются основным предметом обсуждения данной статьи. Было показано, что между этими понятиями существуют определенные связи. Эмпирический анализ социометрических данных позволил выявить эти связи. Используемая методология позволила выявить те страны, где вероятность вышеупомянутых явлений высока.

В статье также обсуждаются возможные способы устранения последствий существования встроенных неформальных оппортунистических институтов.

Ключевые слова: государство, рынок, институты, ответственность, поведение.

Hayk Sargsyan

Dean, Faculty of Economics and Management, YSU.

Ph.D, Professor.

sargsyan.yasu@gmail.com

Ruben Gevorgyan

Faculty of Economics and Management, YSU.

Ph.D, Professor.

rubengevorgyan@ysu.am

THE FUNCTIONING OF INFORMAL EMBEDDED INSTITUTIONS IN THE CONTEXT OF CONSTITUTIONALISM.

Abstract: Various problems arising in social and economic systems have not been fully resolved due to unsatisfactory institutional reforms. Transition economies have become more likely to encounter situations where behavioral abnormalities of people and enterprises imply accurate diagnosis and solutions for "non-performing" institutions. In this paper the new concept of an informal integrated opportunistic institution is proposed. In the case of dysfunction of institutions, embedded institutions become unique substitutes. "Dysfunction of institutions", "capture of state" and informal integrated opportunistic institution are the main subject of discussion of this article. It was shown that there are certain connections between these concepts. An empirical analysis of sociometric data revealed these links. The methodology used made it possible to identify those countries where the likelihood of the above phenomena is high.

The article also discusses possible ways to eliminate the consequences of the existence of embedded informal opportunistic institutions.

Keywords: informal integrated opportunistic institution, opportunistic behaviour.

Սամսոն Դավոյան

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մագիստրոսական ծրագրի ղեկավար, տնտ. դոկտոր, պրոֆեսոր
samsondavoyan2014@gmail.com*

Լուսյա Գալոյան

*ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի տնտ. թեկն., դոցենտ
lusya.galoyan@gmail.com*

**ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Համառոտագիր. Հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է եղել մշակել նոր մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի ձևավորել վերափոխումների ընդհանրական համաթիվ՝ քանակապես գնահատելու այն ընդհանուր վերափոխումները, որոնք 2012-2017թթ. իրականացվել են աշխարհի ավելի քան 66 երկրներում: Վերափոխումների ընդհանրական համաթիվի մեջ մտնող 20 մասնակի համաթիվերի միջոցով գնահատվել և վերլուծվել են նաև 2012-2017թթ. հարավկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բազմաբնույթ վերափոխումները և պանելային տվյալների ռեգրեսիայի միջոցով գնահատվել է դիտարկված ժամանակահատվածում այդ համաթիվում արձանագրված փոփոխությունների նպաստումները:


Բանալի բառեր. Վերափոխում, համեմատական արդյունավետություն, համաթիվ, վերափոխումների ընդհանրական համաթիվ, նպաստում:

Տարբեր երկրների իշխանությունները, ելնելով իրենց տնտեսական զարգացմանը նպատակամղված բազմաբնույթ ռազմավարական, հեռանկարային, կարճաժամկետ ծրագրերի մշակման և իրագործման հնարավորություններից, իրականացնում են քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի վերափոխումներ: Այդ ընթացքում առաջ են գալիս մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝ ինչքանով են արդյունավետ, փոխկապակցված և փոխհիմնավորված այդ համալիր վերափոխումները, և դրանք ինչպիսի համեմատական արդյունավետություն են ապահովում մյուս երկրների նկատմամբ: Վերոնշյալ հիմնախնդիրներին լուծում տալու, վերափոխումների իրականացման հետ կապված մարտահրավերները հաղթահարելու, ինչպես նաև վերափոխումների համահունչ ծրագրերի մշակման և կատարման համար մեծ կարևորություն է ստանում իրականացրած բազմաբնույթ վերափոխումների գնահատումը: Ինչպես միջազգային, այնպես էլ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվում են մեծ թվով առանձին համաթիվեր, որոնք ներկայացնում են տարբեր երկրներում իրականացված վերափոխումների առանձին ուղղությունները:


Ներկայացնենք այդպիսի վերափոխումների տարբեր ուղղություններ գնահատող և միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հաշվարկված շուրջ քսան համաթիվերով հարավկովկասյան երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի

վարկանիշային միավորների դինամիկան 2014-2018թթ.: Վերջինս կրնույթագրի, թե նշված երկրները դիտարկված ուղղություններում ինչպիսի առաջընթաց կամ հետընթաց են արձանագրել, այլ կերպ ասած՝ որքանով են արդյունավետ իրականացրել բարեփոխումները համապատասխան ոլորտներում:

Այսպես, Պետության զգայունության, Լոգիստիկայի արդյունավետության համաթվերով 2018թ-ին առաջատարը եղել է Հայաստանը:




Քձանկար 1. Պետության զգայունության համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹




Քձանկար 2. Լոգիստիկայի արդյունավետության համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.²


2018թ-ին դիտարկված համաթվերից Համաշխարհային խաղաղասիրության, Մարդկային զարգացման, Ծրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության, Մոցիալական առաջընթացի, Համաշխարհային նորարարության, Ժողովրդավարության, Վերափոխումների, Մամուլի ազատության, Կոռուպցիայի ընկալման, Գործարար ակտիվության, Բարգավաճման համաթվերով հարավկովկասյան երեք հանրապետությունների շարքում առաջատար է եղել Վրաստանը:




Քճանկար 3. Համաշխարհային խաղաղասիրության համայնքով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.³




Քճանկար 4. Մարդկային զարգացման համայնքով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2017թթ.⁴




Քճանկար 5. Ծրագրայությունների և զբոսաշրջության մրցունակության համայնքով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2013-2017թթ.⁵




Պձանկար 6. Սոցիալական առաջընթացի համայնվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.⁶




Պձանկար 7. Համաշխարհային նորարարության համայնվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.⁷




Պձանկար 8. Բողոլրդավարության համայնվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.⁸




Քճանկար 9. Վերափոխումների համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.⁹




Քճանկար 10. Մամուլի ազատության համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2017թթ.¹⁰



Քճանկար 11. Կոռուպցիայի ընկալման համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2017թթ.¹¹



Քճանկար 12. Գործարար ակտիվության համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹²




Քճանկար 13. Բարգավաճման համաթվով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹³


Ադրբեջանը դիտարկված ժամանակահատվածի վերջում՝ 2018թ.-ին, առաջատար է եղել **Բնապահպանության արդյունավետության, Տաղանդների համաշխարհային մրցունակության, Համաշխարհային ձեռներեցության, Համաշխարհային մրցունակության, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համաթվերով:**

Ինչպես կարելի է նկատել, տարբեր վերազգային և ոչ պետական կազմակերպությունների կողմից մշակվող համաթվերը, ըստ ժամանակի և տարածության, արտահայտում են տարբեր երկրներում իրականացվող համալիր վերափոխումների այս կամ այն ոլորտների քանակական և որակական առանձնահատկությունները: Սակայն վերոնշյալ համաթվերով տարբեր երկրների համար կատարված գնահատումների արդյունքների նույնիսկ մակերեսային վերլուծությունը բացահայտում է նրանց մեջ ներառված ցուցանիշների ձևավորման մեթոդաբանական թերությունները:


Նման հիմնահարցերի առկայությունը և առավել արդյունավետ լուծման ուղիների առաջարկը օրակարգային է դարձնում վերոնշյալ թերությունները բացառող նոր մեթոդաբանության մշակումը, որի հիման վրա կձևավորվի մեկ ընդհանրական համաթիվ, որը կներառի հնարավորինս շատ բազմաբնույթ համաթվեր, ինչը հնարավորություն կտա առավել բազմա-




Պձանկար 14. Բնասպահականության արդյունավետության համայնօլով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹⁴




Պձանկար 15. Տաղանդների համաշխարհային մրցունակության համայնօլով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹⁵



Պձանկար 16. Համաշխարհային ձեռներեցության համայնօլով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի վարկանիշային միավորները, 2017-2018թթ.¹⁶



Գծանկար 17. Համաշխարհային մրցունակության համաթվով Հայաստանի, Վրաստանի, Աղբբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹⁷



Գծանկար 18. Փողերի ընդհանուր և անարբեկության ֆինանսավորման համաթվով Հայաստանի, Վրաստանի, Աղբբեջանի վարկանիշային միավորները, 2014-2018թթ.¹⁸

կողմանիորեն գնահատել տարբեր ուղղություններով իրականացվող վերափոխումները:

Մեր կողմից փորձ է արվել վերոնշյալ 20 մասնակի համաթվերի օգնությամբ 2012-2017թթ. համար աշխարհի շուրջ 66 (ընտրվել են 25 մասնակի համաթվեր, սակայն դրանցից հինգի վիճակագրական տվյալների շտեմարանում դիտարկված երկրների բացակայության պատճառով հետագա հաշվարկներում այդ մասնակի համաթվերը չեն ընդգրկվել) երկրների համար մշակել և գնահատել վերափոխումների ընդհանրական համաթիվ, որի ձևավորման մեթոդաբանությունը ներկայացված է ստորև:

Վերափոխումների ընդհանրական համաթվի կառուցումը կատարվել է համաձայն (1) բանաձևի, որտեղ օգտագործել ենք գլխավոր բաղադրատարրերի եղանակով գնահատված առաջին 5 բաղադրատարրերը: Որպես կշիռներ օգտագործվել են յուրաքանչյուր գլխավոր բաղադրատարրի վարիացիայի տեսակարար կշիռը 5 գլխավոր բաղադրատարրերի վարիացիաների հանրագումարի մեջ:


$$GI_t = \sum_{i=1}^p w_i F_{it} \quad (1)$$

Որտեղ՝ GI_i -գնահատված ընդհանրական համաթիվն է, Fit_i - գլխավոր բաղադրատարրը, իսկ W_i -յուրաքանչյուր գլխավոր բաղադրատարրին համապատասխանող կշիռը:


Այսպիսով, կատարված հաշվարկների արդյունքում ներկայացնենք դիտարկված 66 երկրների շարքում հարավկովկասյան հանրապետությունների զբաղեցրած տեղերը և վարկանիշային միավորները ըստ վերափոխումների ընդհանրական համաթվի:

Ինչպես կարելի է նկատել գծանկար 19, 20-ում, ներկայացված երեք երկրների շարքում ըստ վերափոխումների ընդհանրական համաթվի առաջին տեղում Վրաստանն է (իսկ 66 երկրների շարքում զբաղեցնում է 33-րդ տեղը՝ 4,4 վարկանիշային միավորով), ապա՝ Հայաստանը (66 երկրների շարքում զբաղեցնում է 38-րդ տեղը՝ 3,9 վարկանիշային միավորով) և վերջում Ադրբեջանը (66 երկրների շարքում զբաղեցնում է 50-րդ տեղը՝ 3,2 վարկանիշային միավորով):

Կառուցված վերափոխումների ընդհանրական համաթվում ներառված յուրաքանչյուր մասնակի համաթվի նպաստումը գնահատելու համար իրականացվել է պանելային տվյալների վերլուծություն՝ օգտագործելով 66 երկրների տնտեսական զարգացումը բազմակողմանի բնութագրող մասնակի համաթվերը 2012-2017 ժամանակաշրջանի համար:



Գծանկար 19. Վերափոխումների ընդհանրական համաթվով Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի զբաղեցրած տեղերը, 2014-2017 թթ.



Գծանկար 20. Վերափոխումների ընդհանրական համաթվով Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի վարկանիշային միավորները, 2014-2017 թթ.

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, Հայաստանի համար գնահատված վերափոխումների ընդհանրական համաթվի փոփոխության վրա դիտարկված ժամանակահատվածում ամենամեծ դրական նպաստումն են ունեցել *Բնապահպանության արդյունավետության, Գործարար ակտիվության, Փողերի լիցքման և սահաբեկչության ֆինանսավորման համաթվերը*, իսկ ամենամեծ բացասական ազդեցությունը *Մարդկային կապիտալի, Ծրջագայությունների և զրոսաշրջության մրցունակության և Լոգիստիկայի արդյունավետության համաթվերը*:

Ադրբեջանի վերափոխումների ընդհանրական համաթվի տատանումները դիտարկված ժամանակահատվածում պայմանավորվել են հիմնականում *Բնապահպանության արդյունավետության, Փողերի լիցքման և սահաբեկչության*

Ֆինանսավորման և Գործարար ակտիվության համաթվերով, իսկ ամենամեծ բացասական նպատումը Ադրբեջանի համար ունեցել են Ծրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության, Մամուլի ազատության և Ժողովրդավարության համաթվերը:

Բնչ վերաբերում է Վրաստանին, սպաս դիտարկված ժամանակահատվածում համաթվի տատանումների վրա ամենամեծ դրական նպատումներն են ունեցել Սոցիալական առաջընթացի, Համաշխարհային խաղաղասիրության և Տնտեսական ազատության համաթվերը, իսկ Տաղանդների համաշխարհային մրցունակության, Ծրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության և Լոգիստիկայի արդյունավետության համաթվերը ունեցել են ամենամեծ բացասական նպատումները:

Հայաստան		Ադրբեջան		Վրաստան	
0,31	Բնապ. արդյ. համ.	0,38	Բնապ. արդյ. համ.	0,28	Սոց. առ. համ.
0,14	Գործ. ակտ. համ.	0,27	Փող. լվ. և ահ. ֆին. համ.	0,13	Համ. խաղ. համ.
0,11	Փող. լվ. և ահ. ֆին. համ.	0,08	Գործ. ակտ. համ.	0,10	Տնտես. ազ. համ.
0,04	Համ. մրց. համ.	0,07	Տնտես. ազ. համ.	0,08	Համ. մրց. համ.
0,04	Համ. ձեռն. համ.	0,06	Գենդ. անհ. համ. համ.	0,07	Պետության. զգայ. համ.
0,03	Գենդ. անհ. համ. համ.	0,05	Համ. մրց. համ.	0,06	Փող. լվ. և ահ. ֆին. համ.
0,03	Մարդկ. զարգ. համ.	0,04	Մարդկ. կապ. համ.	0,05	Մարդկ. զարգ. համ.
0,03	Բարգ. համ.	0,03	Համ. ձեռն. համ.	0,04	Բնապ. արդյ. համ.
0,02	Տնտես. ազ. համ.	0,03	Պետության. զգայ. համ.	0,03	Գործ. ակտ. համ.
0,02	Սոց. առ. համ.	0,03	Բարգ. համ.	0,03	Ժողովրդ. համ.
0,02	Համ. նոր. համ.	0,02	Տաղ. համ. մրց. համ.	0,03	Գենդ. անհ. համ. համ.
0,01	Մամ. ազատ. համ.	0,02	Մարդկ. զարգ. համ.	0,01	Մամ. ազատ. համ.
0,01	Պետության. զգայ. համ.	0,00	Համ. նոր. համ.	0,01	Մարդկ. կապ. համ.
0,01	Համ. խաղ. համ.	-0,02	Լոգ. արդյ. համ.	0,01	Բարգ. համ.
0,00	Ժողովրդ. համ.	-0,02	Համ. խաղ. համ.	0,00	Համ. նոր. համ.
-0,01	Կոռուպց. ընկ. համ.	-0,02	Սոց. առ. համ.	-0,03	Կոռուպց. ընկ. համ.
-0,01	Տաղ. համ. մրց. համ.	-0,03	Կոռուպց. ընկ. համ.	-0,05	Համ. ձեռն. համ.
-0,03	Լոգ. արդյ. համ.	-0,03	Ժողովրդ. համ.	-0,08	Լոգ. արդյ. համ.
-0,11	Շրջ. և զբ. մրց. համ.	-0,07	Մամ. ազատ. համ.	-0,09	Շրջ. և զբ. մրց. համ.
-0,17	Մարդկ. կապ. համ.	-0,10	Շրջ. և զբ. մրց. համ.	-0,21	Տաղ. համ. մրց. համ.

Աղյուսակ 1. Վերափոխումների ընդհանրական համաթվում արձանագրված փոփոխությունների նպաստումները, 2012-2017թթ.

Հղումներ

1. <https://fundforpeace.org/2019/04/10/fragile-states-index-2019/>
2. <https://ipi.worldbank.org/>
3. <http://visionofhumanity.org/indexes/global-peace-index/>
4. <http://hdr.undp.org/>
5. <https://www.weforum.org/reports/the-travel-tourism-competitiveness-report>
6. <https://www.socialprogress.org/>
7. <https://www.globalinnovationindex.org/Home>
8. <https://www.eiu.com/topic/democracy-index>
9. <https://www.bti-project.org/en/home/>
10. <https://freedomhouse.org/report-types/freedom-press>
11. <https://www.transparency.org/research/cpi/overview>
12. <http://www.doingbusiness.org/>
13. <https://www.prosperity.com/>
14. <https://epi.envirocenter.yale.edu/>
15. <https://gtcistudy.com/>
16. <https://thegedi.org/global-entrepreneurship-and-development-index/>
17. <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/>
18. <https://www.baselgovernance.org/asset-recovery/basel-aml-index>

Самсон Давоян

*Руководитель магистерской программы на факультете экономики и управления
Ереванского государственного университета, доктор экономических наук, профессор
samsondavoyan2014@gmail.com*

Люся Галоян

*Доцент кафедры общей экономики Гюмрийского филиала кандидат экономических наук
Армянского государственного экономического университета
lusya.galoyan@gmail.com*

ЗАДАЧИ ОЦЕНКИ СРАВНИТЕЛЬНОЙ ЭФФЕКТИВНОСТИ РАЗЛИЧНЫХ ТРАНСФОРМАЦИЙ, ОСУЩЕСТВЛЕННЫХ В РЕСПУБЛИКАХ ЮЖНОГО КАВКАЗА

Аннотация: Основной целью исследовательской работы была разработка новой методологии, которая позволит сформулировать общий индекс трансформации, количественно оценить общую трансформацию, которая была осуществлена в 2012-2017 гг. в более чем 66 странах мира. С помощью 20 частичных индексов, включенных в общий индекс трансформации, также были оценены и проанализированы различные изменения в Армении, Азербайджане и Грузии в период 2012-2017 гг. Также с помощью панельной регрессии были оценены способствования зарегистрированных изменений в этом индексе в рассматриваемый период.

Ключевые слова: трансформация, сравнительная эффективность, индекс, общий индекс трансформации, способствование.

Samson Davoyan

*Head of Master Program in the faculty of Economics and Management in YSU
Doctor of Economics, Professor
samsondavoyan2014@gmail.com*

Lusya Galoyan

*Associate Professor in the department of General Economics in ASUE GB, PhD
lusya.galoyan@gmail.com*

THE ISSUES OF THE ASSESSMENT OF COMPARATIVE EFFECTIVENESS OF VARIOUS REFORMS IMPLEMENTED IN SOUTH CAUCASIAN COUNTRIES

Abstract: The objective of the research is to develop new methodology, that gives an opportunity to create integral index of reforms and quantitatively assess integral reforms implemented in more than 66 countries of the world for 2012-2017. With the help of 20 partial indexes that are included in the integral index of reforms we have also assessed and analyzed different reforms in three countries of South Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia. With the help of panel data regression we have assessed contributions of changes of the index for the observed period.

Keywords: reform, comparative efficiency, index, integral index of reforms, contribution.

Վահագն Վարդանյան

Հոնկոնգի Հան (չինական) ակադեմիայի փոխտնօրեն և Միջազգային բակալավրիատի (IB) Դիպլոմային ծրագրի ղեկավար, «Աշխարհաքաղաքականություն և քաղաքական աշխարհագրություն» մասնագիտության դոկտոր

**ՓՈՔՐ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ.
ՄԻՆԳԱՊՈՒՐԻ ՕՐԻՆԱԿԸ**

Համառոտագիր. Ամենատարբեր խնդիրները, որոնք առաջանում են հասարակական ու տնտեսական համակարգերում, բավարար լուծումներ չեն ստանում հիմնականում ինստիտուցիոնալ ռեֆորմների անբավարար գործարկման պատճառով: Անցումային (տրանզիտիվ) տնտեսություններում հանախակի են դարձել տնտեսվարող սուբյեկտների և մարդկանց վարքագծային շեղումները (անոմալիաները), որոնք առաջադրում են ոչ միայն ճշգրիտ ակտորոշման, այլև լուծումներ «չաշխատող» ինստիտուտների փոխարացման առումով: Աշխատանքում՝ որպես օպերացիոն հասկացություն, գործառնում է ներկառուցված օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտ եզրը: Ինստիտուտների ֆունկցիաների խաթարման (դիսֆունկցիայի) պարագայում ներկառուցված ինստիտուտները դառնում են յուրօրինակ փոխարինիչներ: Առանձին քննարկման առարկա են դառնում «ինստիտուտների դիսֆունկցիա», «պետության զավթում» և ներկառուցված *օպորտունիստական* ոչ ֆորմալ ինստիտուտները: Ցույց է տրված, որ այդ հասկացությունների միջև գոյություն ունեն կապեր: Սոցիոմետրիկ տվյալների էմպիրիկ վերլուծության միջոցով բացահայտվել են այդ կապերը: Կիրառված մեթոդաբանությունը թույլ է տվել բացահայտել այն երկրները, որտեղ վերը նշված երևույթների առկայության հավանականությունը բարձր է: Հոդվածում քննարկվել է նաև ներկառուցված ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտների վերացման հնարավոր ուղիները:

Բանալի բառեր. Փոքր երկրի զարգացում, զարգացման փիլիսոփայություն, «տնտեսական հրաշք», Հայաստան, Մինգապուր, ռազմավարական պլանավորում, տնտեսական քաղաքականություն, մերիտոկրատիա, պրագմատիկ կառավարում, հակակոռուպցիոն դաստիարակություն, անտադրողականության բարձրացում, որակյալ աշխատուժի և սփյուռքի ներգրավում:

Մինգապուրն անկախություն ստանալիս ուներ «քաղաքական, տնտեսական կամ ռազմական գոյատևման գրեթե գրոյին հավասար հնարավորություն»:

*Ս. Ռաջարատնամ
(Մինգապուրի Արտաքին գործերի
հիմնադիր և երկարամյա նախարար)*

Զարգացման փիլիսոփայության կարևորությունը

Երկրի զարգացման *գլխավոր նախապայմանը զարգացման փիլիսոփայության ձևավորումն է՝* ամրապնդված զարգացման երկարաժամկետ պլանավորման հմտություններով և այդ պլանների հետևողական և սահուն իրականացնելու քաղաքական վճռականությամբ: Տնտեսական զարգացումը ազգային (երկրի) զարգացման մի մասն է, որը ենթադրում է փոփոխության անհրաժեշտության ընկալում և ընդունում՝ անձնական, համայնքային, համապետական, հայկական պետության դեպքում, որոշ չափով նաև՝ համազգային մակարդակով: Կարելի է պնդել, որ զարգացումը, առաջին հերթին, փիլիսոփայական մոտեցման և մտածելակերպի, և, դրանցից բխող՝ տնտեսական քաղաքականության և քայլերի արդյունք է:

Աշխարհում հայտնի են երկրների հաջողության տարբեր օրինակներ, որոնցից մի քանիսի անցած ուղին բնութագրվում է որպես «հրաշք»: Ընդհանրապես, կարելի է պնդել, որ Երկրորդ աշխարհամարտից հետո աշխարհում զարգացման բարձր մակարդակի հասնելը գնալով բարդացել է: Այսպես, օրինակ, եթե 1920-ականներին աշխարհի շուրջ 2 միլիարդ բնակիչների մոտ կեսն ապրում էր պայմանականորեն ընդունված զարգացած երկրներում (մոտ 1 միլիարդ մարդ), ապա ներկայումս դա մոտ 13-15% է կազմում (կրկին՝ մոտ 1 միլիարդ, բայց արդեն 7,5 միլիարդ ընդհանուր բնակչությունից) (Kuczynski, 1928; ՄԱԿ): Եվրոպայից դուրս, աշխարհում կարելի է թվարկել ընդամենը երեք երկիր, որոնք նախկինում (իրենց զբաղեցրած տարածքը, համենայնդեպս) եղել են թերզարգացած, և 50-70 տարվա ընթացքում հասել են զարգացման ամենաբարձր մակարդակի: Դրանք են Իսրայելը, Հարավային Կորեան և Մինգապուրը: Որոշ վերապահումով, զարգացած երկրներին մոտ են բնական հարուստ պաշարներով, մասնավորապես՝ էներգակիրներով հարուստ, Միացյալ Արաբական Էմիրությունները, Քաթարը, Քուվեյթը, Բրունեյը: Սակայն, Հայաստանի համեմատ, նման երկրների զարգացման փորձը համադրելի չէ:

Այսպիսով, ի՞նչն է միավորում վերը նշված երեք զարգացած երկրները: Նրանք երեքն էլ զարգացել են այլ ճանապարհի բացակայության պայմաններում: Ստիպված են եղել զարգանալ՝ իհարկե ունենալով իրենց ռազմավարական հիմնական դաշնակցի քաղաքական և տնտեսական հետևողական աջակցությունը: Այս երկրներից առանձնապես մեծ հետաքրքրություն է առաջացնում Մինգապուրի օրինակը, որի մասին տարիներ շարունակ խոսվում է Հայաստանում: Սույն հոդվածը փորձ է ներկայացնելու Մինգապուրի զարգացման հիմքում ընկած փիլիսոփայությունը և սկզբունքային մոտեցումները՝ նպատակ ունենալով ընդգծել Հայաստանի հարատև զարգացման համար հեռանկարային ծրագրի անհրաժեշտությունը: Հոդվածը նպատակ չի հետապնդում կատարել տնտեսագիտական վերլուծություն և չի ենթադրում մեկ երկրի փորձը մեկ այլ երկրում նույնությամբ կրկնօրինակելու անհրաժեշտությունը:

Մինգապուրի զարգացման ուսումնասիրությունը և այդ փորձի՝ Հայաստանի համար օգտակարությունը հաշվի առնելու նպատակով, պետք է ընդգծել աշխարհում մշտապես աճող (ես կասեի՝ արագացող) մրցակցությունը, որի պայմաններում Հայաստանին ընձեռվում է յուրահատուկ հնարավորություն իր աշխարհագրական դիրքը և հայկական համաաշխարհային ազգի փորձը արդյունավետ օգտագործելու համար: Հայաստանն աշխարհի հետ առնչվում է երկու հարթության մեջ՝ Հայաստանից դուրս գտնվող հայկական և նրանից դուրս գտնվող ամբողջ աշխարհի: Հայկական սփյուռքը, լինելով աշխարհի բնակչության թվաքանակի համեմատ վիճակագրական շեղման չափ փոքր (մոտ 0.1%), գտնվելով բոլոր մայրցամաքներում, լինի պատմականորեն, թե վերջերս ձևավորված՝ որոշ ազդեցություն և հեղինակություն է վայելում, ասել է թե՛ որոշակի լծակներ ունի արտերկրում տեղական տնտեսական, սոցիալական կամ, անգամ, քաղաքական կյանքի վրա ազդելու որոշակի հնարավորությամբ: Հայերի համայնքային ինքնության տեսակը որոշակի առումով երաշխիք է այդ կապի պահպանման համար: Հայկական աշխարհը հայկական պետության համար նաև աջակից է աշխարհի տարբեր երկրներում ֆինանսական և քաղաքական միջոցների հետ այն կապելու առումով: Բազմաթիվ այլ պետություններ չունեն նման ցանցային հնարավորություն: Հայերն այդ առումով ունեն եզակի առավելություն: **Սփյուռքը** ներկա ժամանակաշրջանում **հայկական պետության համար աշխարհին կապող կամուրջ** կարող է լինել (երևի թե միակ արդյունավետը):

Իրավիճակի, սահմանափակումների և միջավայրի ընկալում

Մինգապուրի զարգացմանը զգալիորեն նպաստել է ծովային բեռնափոխադրումների համար նրա գրավիչ աշխարհագրական դիրքը: **Աշխարհագրությունը**, ինչպես ասում են,

ճակատագիր է: Սակայն, կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ տարբեր երկրներ, ունենալով աշխարհագրական հնարավորություններ, չեն կարողացել այն առավել արդյունավետ օգտագործել: Հայաստանը նման երկրներից է՝ ի տարբերություն նույն Սինգապուրի, որի դիրքն իր միակ բնական բարենպաստ պայմանն է:

Գաղտնիք չի լինի ասել, որ յուրաքանչյուր իրավիճակ իր հնարավորություններն է ընձեռում և բացահայտում է դրանցից օգուտ քաղելու պետության կողմից ցուցաբերվող պրագմատիզմի աստիճանը: Սինգապուրի հաջողության գլխավոր նախապայմանը կարծես թե իր ներքին հարցերում և արտաքին հարաբերություններում **պրագմատիկ** և բացառապես **երկրի շահերից բխող քաղաքականության** մշակումն ու իրագործումն է՝ մի քանի տասնամյակ հետևողականորեն ու առանց էական քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ցնցումների իրականացված:

Հայաստանը, դեպի ծով ելք չունենալով, Սինգապուրի համեմատ, այս առումով, շատ տարբեր է: Մյուս կողմից, երկուսի դեպքում էլ 2,5-3 ժամվա թռիչքը հասանելի է դարձնում բազմաթիվ այլ երկրներ՝ Սինգապուրին՝ մոտ 10 և Հայաստանին՝ մոտ 20, և այդ յուրաքանչյուր խումբ երկրներում ապրում է մոտ 500 մլն մարդ (Սինգապուրից մի փոքր հեռու են աշխարհագրական հսկաներ Չինաստանն ու Հնդկաստանը) (The World Factbook): Եթե համեմատում ենք այս երկու երկրները՝ Հայաստանը և Սինգապուրը, ապա երկուսն էլ փոքր են իրենց տարածությամբ՝ չնայած որ Հայաստանը Սինգապուրից ավելի քան 40 անգամ մեծ է (համեմատության համար նշենք, որ Սինգապուրի տարածքը Մեծ Սևանի մակերեսի չափ է): Հակառակ պատկերն է երկրների բնակչության դեպքում: Սինգապուրում Հայաստանի համեմատ կրկնակի անգամ ավելի մարդ է ապրում: Հաշվի առնենք նաև, որ Սինգապուրում ապրում է ազգային-ռասայական, լեզվական և կրոնական առումներով շատ տարբեր բնակչություն (3 հիմնական ազգություններ՝ 74% չինացիներ, 13% մալայացիներ և 9% հնդիկներ, համապատասխանաբար և 4 պետական լեզու՝ չինարեն, մալայերեն, թամիլերեն և անգլերեն) (The World Factbook: Singapore):

Այսպիսով, Սինգապուր քաղաք-պետությունը, տարածությամբ լինելով Երևանից մոտ 3 անգամ ավելի մեծ, բնակչության ավելի բարդ ներքին կազմ ու կառուցվածք ունի: Միևնույն ժամանակ, այդ բարդությունը, ունենալով սոցիալական որոշակի պոտենցիալ խնդիր պարունակող սպառնալիք, պետությունը կարողացել է օգտագործել՝ բացահայտելով դրա առավելությունը: Սինգապուրը, գտնվելով հսկա քաղաքակրթությունների միջև՝ չինական, մալայա-ինդոնեզիական և հնդկական, դարձել է նրանց թե տնտեսապես, և թե քաղաքական առումով կապող կամուրջ: Երկրի քաղաքական խնդիրներն անմիջական հարևանի՝ Մալայզիայի հետ, Սինգապուրին չեն խանգարել հետևել իր արտաքին քաղաքականության պրագմատիկ մոտեցմանը և տնտեսական շահերը դիտել որպես առաջնային և քաղաքական խնդիրները, թեկուզև մասնակի, հարթեցնելու ուղի: Սինգապուրի զարգացման գործում մեծ դերակատարություն է ունեցել տարածաշրջանում ապրող ծագումով չինացիների ներկայությունը, որոնցից շատերը Սինգապուրի առևտրի, ֆինանսական և արդյունաբերական զարգացմանը զգալիորեն նպաստել են իրենց ներդրումներով (SBR): Ունենալով մոտ 3/4-ով չինական ծագումով բնակչություն՝ Սինգապուրը նաև շատերի համար դիտվել է որպես ներդրման (այդ թվում՝ անշարժ գույքի) հուսալի և ապահով վայր՝ հաշվի առնելով չինական բնակչության տասնամյակներ շարունակ ունեցած խնդիրներն ու սահմանափակումները տարածաշրջանի որոշ երկրներում (օրինակ, հարևան Ինդոնեզիայում): Չինական սփյուռքի տնտեսական ներգրավման Սինգապուրի հաջողված փորձը Հայաստանի համար օգտակար և ուսանելի կարող է լինել:

Եթե համեմատություն կատարենք Հայաստանի և նրա անմիջական արտաքին միջավայրի հետ, ապա երկիրն ունի եզակի իրավիճակ ամբողջ աշխարհում: Այն ցամաքով ամբողջությամբ շրջապատված միակ երկիրն է, որն իր անմիջական հարևանի (Հայաստանի դեպ-

քում՝ երկուսի) հետ ունի քաղաքական խնդիրներ և, որպես արդյունք, դիվանագիտական հարաբերությունների բացակայություն, ինչպես նաև իր սեփական ուսերի վրա է երկրի ու նրա բնակչության պաշտպանության հիմնական բեռը (Վարդանյան, 2019):

Մինգապուրը, լինելով փոքր և խոցելի, տնտեսապես բաց և, չունենալով ռազմավարական նշանակության այնպիսի ոլորտ, ինչպիսին է գյուղատնտեսությունը (գրեթե ամբողջ սնունդը ներմուծվում է), հաջողել է իր բավական բարդ և բազմազան տարածաշրջանում հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելիս: Օրինակ, լինելով գերազանցապես մահմեդական կրոնի երկու երկրների անմիջական հարևան (Մալայզիա և Ինդոնեզիա)՝ Մինգապուրը կարողացել է տասնամյակներ շարունակ համագործակցել Բարայելի հետ սեփական անվտանգության և ներքին գործերի համակարգերը զարգացնելու գործում՝ միևնույն ժամանակ, տասնամյակներ շարունակ ձեռնպահ մնալով Բարայելի հետ լայն շրջանակի համագործակցությունը ներկայացնելուց, որպեսզի դա չվնասի հենց իրեն՝ դեռևս կայացման շրջանում գտնվող երկրին (Keinon, 2017): Մինգապուրը շատ փոքր է տարածությամբ (ՄԱԿ-ի անդամ 194 երկրներից 175-րդն է), ինչը՝ մի կողմից սպառնալիքներով լի սահմանափակում է, իսկ մյուս կողմից պետությանը հնարավորություն է տալիս արդյունավետ վերահսկել երկրի ամբողջ տարածքը՝ մարդկային և տեխնոլոգիական համեմատաբար սահմանափակ ռեսուրսների ներգրավմամբ (The World Factbook: Singapore): Եթե ավելացնենք, որ Մինգապուր քաղաքը մի կղզի է՝ ինքնիշխան քաղաք-պետություն, այս հանգամանքն էլ ավելի է հեշտացնում երկրի սահմանների պահպանման գործը:

Հետևելով Լի Կուան Յուի այն պնդմանը, որ *փոքր երկիրը պետք է մեծ թվով բարեկամներ ունենա* աշխարհում՝ միևնույն ժամանակ *պահպանելով իր ազատությունն ու ինքնիշխանությունը* (Lee, 2015: 99), Մինգապուրը, որպես փոքր երկիր, ընտրել է բաց տնտեսական-արևտրային ռեժիմի ստեղծումն ու պահպանումը, Չմիացած երկրների շարժման սկզբունքներին հավատարիմ՝ սեփական ռազմական քաղաքականության իրականացման ուղին՝ չնայած որ երկիրն անդամակցում է Միացյալ Թագավորության, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և Մալայզիայի հետ մի պաշտպանական պայմանագրին (Lim, Ng, 2017): Այստեղ հատկանշանական է, որ Մինգապուրի հիմնական քաղաքական խնդիրները հենց Մալայզիայի հետ են եղել, ինչը չի խանգարել երկու երկրներին անդամակցել միասնական պաշտպանական կառույցում: Լինելով Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիայի (ASEAN) անդամ և այդ կառույցի կանոնակարգող դաշտում՝ Մինգապուրը նույնպես պարտավորվում է չմիջամտել այլ երկրների ներքին գործերին: Միևնույն ժամանակ, երկիրը կարողացել է ձևավորել իր համբավը որպես միջազգային խոշոր «խաղացողների» բանակցային վայր, աշխարհի տարբեր տարածաշրջանների երկրների միջև միջնորդ: Վերջինիս նաև նպաստում է Մինգապուրի ենթակառուցվածքների զարգացման բարձր մակարդակը:

Չարգացման նախնական պայմաններ

Երկրների զարգացման ուղիներն ուսումնասիրելիս նպատակահարմար է հաշվի առնել նրանց զարգացման նախնական պայմանները, որոնք միմյանցից շատ տարբեր կարող են լինել: Սակայն, մի դեպքում երկիրը կարողանում է օգտվել եղած նախնական իրավիճակից, մյուսում՝ ձախողում: Մինգապուրի՝ որպես պրագմատիկ կառավարվող պետության, հաջողության կարևորագույն խթաններից մեկը որոշ դեպքերում անգամ եղել է բացասական պայմանները և սահմանափակումները հնարավորությունների վերածելու ճգոտումը:

Ինչպես արդեն նշվեց, Մինգապուրի անկախության շեմին դրական նախապայմաններից էր բարենպաստ աշխարհագրական դիրքը: Այստեղ պետք է շեշտել մի հանգամանք: Բարենպաստ աշխարհագրական դիրքից բացի, Մինգապուրը կարողացել է նաև օգտվել իր ժամային հարմար գոտու մեջ լինելու հանգամանքից: Գտնվելով Չինաստանի և հարևան Մալայզիայի հետ միևնույն ժամային գոտու մեջ՝ աշխատանքային օրվա ընթացքում երկիրն

ունի ընդհանուր աշխատաժամանակ Միացյալ Թագավորության և, բնականաբար, Եվրոպայի և Եվրասիայի գրեթե ամբողջ տարածքի հետ: Իր ֆոնդային շուկայի համար շատ կարևոր եղավ ժամային տարբերությունը ԱՄՆ խոշորագույն բորսայի վայրի՝ Նյու Յորքի հետ՝ Մինգապուրին թողնելով ակտիվ, երբ ԱՄՆ-ում գիշեր է: Ժամային բարենպաստ գոտին որպես առավելություն կարող է օգտագործել նաև Հայաստանը, թե միևնույն աշխատանքային ժամեր կիսելու, և թե կարճ հեռավորություններ (2.5-3 ժամ թռիչքի) ցերեկային ժամերին օդային բեռնափոխադրումներ իրականացնելու առումով:

Մինգապուրն անկախաձայնալիս ուներ բարենպաստ պատմական ժառանգություն ի դեմս դեռ մի քանի տարի պահպանվող տեղում ռազմական աջակցության՝ Միացյալ Թագավորության ռազմաբազայի կողմից, ինչպես նաև, ձևավորված ենթակառուցվածքների (հիմնականում՝ նավահանգստի), բրիտանական կրթական համակարգի և անգլերենի իմացության (կրթված բնակչության շրջանում) և բրիտանական դատական համակարգի: Մինգապուրին՝ որպես դինամիկ զարգացող երկրի, ինչպես կարելի է պնդել, օգնում է նրա որպես բնակավայրի երիտասարդ լինելը: Մինգապուրի ժամանակակից պատմությունն սկսվում է 1819 թվականից, երբ այն բրիտանական կայսրության կողմից ձեռք բերվեց և դարձավ բրիտանական գաղութ (The World Factbook: Singapore): Սա նշանակում է, որ բնակչության մեծ մասը առավելագույնը 3-5 սերունդ առաջ է տեղափոխվել և բնակություն հաստատել Մինգապուրում: «Հին» հասկացողությունը շատ այլ վայրերում (այդ թվում՝ Հայաստանում) գերիշխող մտածելակերպի համեմատ կարող է լինել ընդամենը 30-40 տարվա, և նման ընկալումը էլ ավելի է ընդգծում Մինգապուրում փոփոխությունների հանդեպ շատերի կողմից դրսևորվող պրագմատիկ վերաբերմունքը:

Մինգապուրի փոքր չափերը, ֆիզիկական աշխարհագրությամբ պայմանավորված պայմանները (կղզի լինելը), ինչպես արդեն ընդգծվեց, նույնպես նպաստավոր նախապայմաններից էին: Պետք է նաև ավելացնել, որ Մինգապուրը 1960-ականների սկզբին Հարավարևելյան Ասիայում մեկ շնչին հասնող ՀՆԱ-ով առաջատարներից էր (Ghesquiere, 2007: 43), թեկուզև զարգացած երկրների համեմատ այդ մակարդակը ցածր էր:

Միևնույն ժամանակ, կային նաև զարգացմանը խոչնդոտող գործոններ, որոնց մի մասը Մինգապուրը կարողացավ վերածել առավելության: Այսպիսով, երկրի զարգացման առաջին 1,5 տասնամյակի ընթացքում լարված և պատերազմական իրավիճակ էր նրանից ընդամենը 2 ժամ թռիչքի հեռավորության վրա գտնվող Վիետնամում: Հաշվի առնելով Ասիայում երկրների միջև գոյություն ունեցող ավելի մեծ հեռավորությունները, սա շատ կարճ է համարվում: Վիետնամում, ըստ էության, պայքարի մեջ էին այն ժամանակվա երկու գերտերությունները՝ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ն: Եվ Մինգապուրը կարողացավ դառնալ ԱՄՆ-ի համար տարածաշրջանում հիմնական քաղաքական հենասյուն-աջակիցներից, ինչի շնորհիվ շատերն այն անվանում էին ԱՄՆ համար արևելքում Իսրայելին համարժեք աջակից:

Մինգապուրում բարձր էր գործազրկությունը, կար մարդկանց բնակարաններով ապահովելու սուր խնդիր: Սա հաշվի առնելով՝ Մինգապուրը հաջողությամբ իրականացրեց պետական բնակարանաշինությունը, որի արդյունքում տեղական բնակչության մոտ 80%-ը ապրում է պետական բնակարաններում (HDB): Բնակչության կրթական և ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակը, բնական պաշարների և հանածոների բացակայությունը, սննդի (այդ թվում՝ խմելու ջրի) և էլեկտրաէներգիայի ներմուծման անհրաժեշտությունը և հարևան Մալայզիայից ջրի ներմուծման այլընտրանքի բացակայությունը Մինգապուրին այլ տարբերակ չթողեցին, քան արագ զարգանալը: Բրիտանական ռազմաբազայի դուրս գալու արդյունքում՝ անկախություն ստանալուց ընդամենը երեք տարի հետո՝ 1967 թ.-ին (Чуфриян, 1988: 70), այս ամենին ավելացավ նաև երկրի և բնակչության անվտանգությունը սեփական ուսերի վրա ստանձնելու պատասխանատվությունը:

Արդյո՞ք աշխարհագրությունն է որոշիչ

Ունենալով բարենպաստ աշխարհագրական դիրք՝ Մինգապուրը, այնուամենայնիվ, կարողացավ դրանից լիարժեք օգտվել: Նման արդյունք հնարավոր է դառնում, երբ բարենպաստ դիրքը զուգորդվում է բաց տնտեսական քաղաքականությամբ (մասնավորապես, արտաքին առևտրի զարգացման շնորհիվ), ինչպես նաև պատմական ժառանգության ազդեցությամբ, թե որքանով է այն սահմանափակում կամ հնարավորություն ընձեռում հետագա զարգացման համար (Ghesquiere, 2007: 39): Սակայն անգամ այսքանը բավարար չէ հարատև զարգացման համար: Եվ միայն **ինստիտուցիոնալ զարգացումը և արտադրողականության բարձրացումն** ու խնայողությունների աճը թույլ տվեցին ապահովել եկամուտների կայուն և արագ աճ: Հարկ է նաև նշել, որ ֆիզիկական աշխարհագրության առումով Մինգապուրի բնակլիմայական ոչ այնքան հարմար գոտում գտնվելը՝ հասարակածին մոտ, որտեղ կյուր տարի ջերմաստիճանի փոփոխություն տեղի չի ունենում և մշտական բարձր խոնավություն է պահպանվում, չխոչընդոտեց երկրի զարգացմանը: Հակառակը, մրցունակ լինելու համար, Մինգապուրը կարողացավ բնակչության իրեն անհրաժեշտ թվաքանակ ապահովել՝ 50-55 տարվա ընթացքում աճելով մոտ 4 անգամ՝ 1,5 մլն մարդուց հասնելով 5,8 մլն (The World Factbook: Singapore):

Պրագմատիկ պլանավորում և կառավարում

Մինչև պլանավորման կարևորությանն անդրադառնալը, հարկ է ընդգծել, որ Մինգապուրում շուրջ տասնամյակ ապրելով, հեղինակի պնդմամբ, չի նկատվել տնտեսության որևէ մի ոլորտ, որը չի կարգավորվում պետության կողմից:

Մինգապուրը երբեք չի եղել գաղափարապես կարծրացած թակարդում: Երկրի հիմնադիր վարչապետի՝ Լի Կուան Յուի համաձայն, Մինգապուրի կառավարման փիլիսոփայության հիմքերից մեկում դրվել է այն, որ երկիրը ղեկավարվել է **իրականության ընկալմամբ**: Ըստ նրա, ցանկացած տեսության կամ առաջարկվող մեխանիզմի պահով միակ կիրառված մոտեցումը եղել է կաշխատի՞ արդյոք այն Մինգապուրի պայմաններում, թե ոչ (Lee, 2015: 159): Մինգապուրը կառավարվում է պրագմատիզմի և ռացիոնալության հիման վրա՝ կարևորելով **պետության կողմից ծախսած միջոցների արդյունավետությունը**: Երկրի զարգացումը Մինգապուրում անմիջականորեն կապված է դեռևս ինքնավարության տարիներին (1960-ականների սկզբին) ստեղծված Տնտեսական զարգացման խորհրդի հետ, որն իրականացնում է երկարաժամկետ պլանավորումն ու կառավարության կողմից պլանավորվածի հետևողական իրականացումը: Մինգապուրը, ինչպես հաճախ են ասում, եզակի մի երկիր է, որտեղ այն ամենն, ինչ պետությունը պլանավորում է, ի կատար է ածվում:

Մինգապուրում հեռանկարային պլանավորումը կատարվում է, ոչ ավել, ոչ պակաս, 40-50 տարվա կտրվածքով՝ երկու սերունդ առաջ (UDA, Singapore): Ընդհանուր առմամբ, Մինգապուրը որդեգրել է հաշվետվողականության կառավարման սկզբունք, որը ենթադրում է ստանձնած պատասխանատվության դիմաց արդյունքների համար հաշվետու լինել՝ թե դրականի և թե բացթողման դեպքում: Ավելացնենք, որ երկրի կառավարման ղեկին նշանակվում են բարձր որակավորում և փորձ ունեցող պաշտոնյաներ, որն էլ համարվում է կառավարության անդամների (և, առհասարակ, պետական ծառայողների) գերբարձր աշխատավարձերի հիմնավորում:

Մինգապուրի զարգացման ամբողջ ընթացքը **երկարաժամկետ պլանավորման և հետևողական աշխատանքի** արդյունք է: Այլ կերպ չէր էլ կարող լինել՝ հաշվի առնելով երկրի աշխարհագրական սահմանափակումները: Կառավարման սկզբունքներն ու մոտեցումները, իհարկե, էական դեր են խաղացել: Մինևույն ժամանակ, անգնահատելի է եղել, հիմնադիր վարչապետ Լի Կուան Յուի առաջատար դերակատարությունից բացի, նաև վերջինիս կառավարության երկարամյա անդամ (1959-1984), այդ թվում՝ որպես փոխվարչապետ, դոկ-

տոր Գոհ Կենգ Սուիի, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից գործուղված հոլանդացի տնտեսագետ դոկտոր Ալբերտ Վինսենտիուսի դերը (Guo, Woo, 2016: xxxvi, Ghesquiere, 2007: 51): Վերջինս եղել է Սինգապուրի կառավարության խորհրդատուն Տնտեսական զարգացման խորհրդի (Economic Development Board) հիմնադրման տարվանից՝ 1961 թ.-ից ընդհուպ մինչև 1984 թ.-ը, այսինքն՝ երկրի տնտեսական զարգացման համար ամենաառաջնային ժամանակահատվածի ընթացքում (Ghesquiere, 2007: 11):

Որպես մեծ հավակնություններով փոքր երկիր՝ Սինգապուրը մշտապես զգացել է նոր ռեսուրսների ավելացման անհրաժեշտությունը՝ տարածքային, մարդկային և կապիտալի: Եթե մարդկային կամ կապիտալի ռեսուրսի դեպքում այն դեռ հնարավոր է ներգրավել դրսից, ապա տարածքի հարցում խնդիրն ավելի բարդ է: Մակայն անգամ այս խնդիրը չի դարձել անլուծելի: Երկրի ներկայիս տարածքի մոտ 25%-ը (ինչը մոտավորապես Երևան քաղաքի ամբողջ տարածքի չափ է) վերցված է ծովից (Սինգապուրի նեղուցից) (NL, Singapore): Վերջինիս հաշվին է տեղի ունեցել անգամ Սինգապուրի Չանգի միջազգային օդանավակայանի կառուցումը: Հետաքրքրականն այն է, որ ժամանակին՝ 1970-ականներին, անգամ ձեռքի տակ ունենալով հեղինակավոր միջազգային խորհրդատվական ընկերության եզրակացությունը՝ նախկին (ամբողջությամբ ցամաքով շրջափակված) օդանավակայանի ընդլայնման հիմնավորող կարծիքով, երկրի վարչապետի պնդմամբ որոշվել է կառուցել նորը՝ ծովից տարածք վերցնելու հաշվին (The Business Times): 40-45 տարի անց, շարունակական ընդլայնման շնորհիվ, օդանավակայանը ոչ միայն մնացել է մրցունակ, այլև կարողացել էլ ավելի ընդլայնվել և մեծացնել հզորությունը, այն է՝ պահպանել իր առաջատար դիրքը տարածաշրջանի օդանավակայանների միջև գնալով աճող մրցակցության պայմաններում:

Սինգապուրի նախորդ 60-ամյա պատմությունը **ազգային շահի առաջնության և գաղափարական սահմանափակումների մերժման** արդյունք է: Արդյունավետ կառավարման (Good governance) հենասյունը, ըստ Լի Կուան Յուի, պրագմատիկ կառավարումն է: Պրագմատիզմն է, որ դրված է պետական բարձր աշխատավարձերի սահմանման հիմքում՝ նպատակ ունենալով հնարավորինս կանխելու որակյալ կադրերի արտահոսքը դեպի մասնավոր հատված, ինչպես նաև կոռուպցիոն հնարավոր երևույթները երկրի կառավարման բնագավառում: Ինչպես Լի Կուան Յուն է նշում. «Եթե պետական ծառայողները համապատասխան են վճարվում, ապա կաշառք վերցնելու դեպքում նրանք արժանի են խստորեն պատժվել» (Lee, 2015: 62) Նման մոտեցման արդյունքում է, որ ամբողջ աշխարհում ամենաբարձր վարձատրվող պետական ծառայողների ցանկը գլխավորում է Սինգապուրի ղեկավարը (BusinessReport): Հատկանշական է, որ աշխատավարձերի չափը լինելով շատ բարձր, ապահովագրված չէ նույն մակարդակի վրա մնալուց: Այսպես, 2009 թվականին, համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում, որը, ինչպես ցանկացած այլ բաց տնտեսության դեպքում, հարվածեց նաև Սինգապուրին, որոշում կայացվեց նվազեցնել երկրի ղեկավարների աշխատավարձերի մակարդակը՝ նախագահի և վարչապետի պարագայում՝ ընդհուպ մինչև 19% (Chee, 2008): Ի դեպ, այդ ժամանակ, ի թիվս այլ միջոցառումների, երկրի բնական մենաշնորհի հանդիսացող «Սինգապուր Փաուեր» (Singapore Power) էլեկտրամատակարարող ընկերությունն, իր հերթին, շոշափելի չափով նվազեցրեց էլեկտրաէներգիայի դրույքները (EMA): Նման քայլերը, իհարկե, էլ ավելի են ամրապնդում պետական կառավարման համակարգի հանդեպ հանրության և բիզնեսի վստահությունը:

Հատկանշական ևս մի փաստ է ընդգծում երկրում իրավասությունների և պատասխանատվության մակարդակների նշանակությունը: Լինելով խորհրդարանական պետություն, Սինգապուրում մինչև 1991 թ.-ը երկրի նախագահն օժտված է եղել զուտ խորհրդանշական գործառնություններով: 1991 թ.-ին երկրի սահմանադրության փոփոխության արդյունքում նախագահն ընտրվում է համաժողովրդական ընտրության միջոցով, և հիմնական փոփոխությունը երկրի կուտակված դրամական պահուստների տնօրինման գծով նախագահի՝ որպես

այդ միջոցների պահպանման երաշխավորի վետոյի իրավունքն է (Մինգապուրի կառավարության կայք)։ Նման փորձը վկայում է այն քայլերի մասին, որոնք Մինգապուրի պետությունը արել է ապահովելու ֆինանսական անվտանգությունը՝ հարատև զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը։

Զարգացման ուղի և արդյունքներ

Մինգապուրը ժամանակակից պատմության մեջ տնտեսական արագ զարգացման յուրահատուկ օրինակ է՝ ինչպես Լի Կուան Յուն է բնութագրում, «մեկ սերնդի կյանքի ընթացքում «Երրորդ աշխարհից» «Առաջին» մուտք գործելու իր հաջողությամբ։ Ինքնավարության ժամանակվանից սկսած (1959-1960 թթ.), առաջին երեք տասնամյակների ընթացքում տնտեսական միջին աճը կազմել է 7,5%, (Ghesquiere, 2007: 13) ինչն աննախադեպ է ամբողջ աշխարհում այդ ողջ ժամանակահատվածի համար։ Անգամ մյուս «ասիական վագրերը»՝ Հարավային Կորեան, Տայվանը և Հոնկոնգը չեն ցուցաբերել նման աճ։ Հարկ է ավելացնել, որ այդ նույն ընթացքում երկրի բնակչության թվաքանակը չնայած որ աճել է 4 անգամ, սակայն՝ տարեկան ընդամենը միջինը 2%-ով (Ghesquiere, 2007: 13)՝ արդյունքում հանգեցնելով մեկ շնչին հասնող աճի էլ ավելի բարձր տեմպի։

Մինգապուրում գործազրկությունը պահպանվում է 2,0-2,2% սահմաններում (MOM), ինչը, ըստ էության, գործազրկության բնական մակարդակ է նշանակում։ Եթե հաշվի առնենք, որ երկրում զբաղված աշխատուժի մոտ 38%-ը օտարերկրացիներ են (1980-ին ընդամենը՝ 7.4%) (Guo, Woo, 2016: 223), մեծ մասը երկրում գտնվում են աշխատանքային վիզայով և ոչ մշտական բնակչի իրավական կարգավիճակով, ապա պարզ է դառնում, որ պետությունը գործազրկության մակարդակի աճի դեպքում արտասահմանյան բնակչության զանգվածը կարող է կառավարել՝ ուղղված գործազրկության մակարդակը մեղմացնելուն։ Սա հատկապես հեշտացնում է այն հանգամանքը, որ երկրում աշխատող օտարերկրացիների մոտ կեսը ցածր որակավորում ունեցող են (Facts and Details)։ Այսինքն, վերջիններիս առաջարկի հետ կապված խնդիր երկիրը չի ունենում՝ հաշվի առնելով այն, որ երկրի անմիջական տարածաշրջանում տնտեսական զարգացման մակարդակը անհամեմատ ավելի ցածր է, և Մինգապուրում աշխատանք փնտրելու պահանջը մեծ է։

Մինգապուրը մրցունակության գործակցով երկրորդն է աշխարհում (Schwab, 2018), որպես նորարարական տնտեսություն աշխարհի առաջատարներից է՝ համաշխարհային նորարարական գործակցով՝ առաջին հնգյակում, նորարարական ներդրման ենթագործակցով՝ առաջինը (WIPO, 2018: xx, xxii)։ Մինգապուրում արտաքին առևտրի ՀՆԱ-ի համեմատ հարաբերակցությունը ամենաբարձրն է աշխարհում՝ 326% (SBR), ինչը վկայում է բաց տնտեսություն ունենալու և համաշխարհային տնտեսական համակարգում ինտեգրված լինելու մասին։

Ի՞նչն է նպաստել հասնելու նման արդյունքների։ Մինգապուրի տնտեսական զարգացման հիմքում դրվել են հետևյալ 4 հենասյունային սկզբունքները։

- 1) Ֆիսկալ կարգապահության ապահովում, որը պետք է հանգեցնի խնայողությունների կուտակման, և ձևավորված մակրոտնտեսական կայունությունը վստահություն ոգեշնչի,
 - 2) Գնային խթանիչների ձևավորում տնտեսության առանցքային ոլորտներում և համաշխարհային շուկաների հետ ինտեգրացիա,
 - 3) Բնակչությանը հնարավորության ընձեռում դառնալու տնտեսական աճի ակտիվ մասնակից (առողջապահական, կրթության և բնակարանաշինության ոլորտներում արտադրողականության աճի ապահովում),
 - 4) Արդյունավետ մշակված քաղաքականություն տարբեր ոլորտներում (ինտեգրված ամբողջ տնտեսության զարգացման ծրագրում) (Ghesquiere, 2007: 91)։
- Թվում է, թե նշված սկզբունքները կրում են վերացական բնույթ։ Սակայն, տնտեսա-

կան քաղաքականության իրականացման դիտարկումը բացահայտում է երկրի զարգացման հետևյալ ընդհանուր մոտեցումները, որոնք (ի թիվս մի շարք այլոց) հանդես են եկել որպես զարգացման ներկայիս նվաճումներն ապահոված գործոններ: Դրանցից առաջնայինը կարելի է համարել *մերիտոկրատիան*: Մինգապուրում շատ մեծ տեղ է տրվում արժանիին առաջ մղելու մոտեցմանը՝ սկսած տարրական դպրոցից՝ ընդհուպ մինչև կառավարության անդամ: Մերիտոկրատիայով է նաև պայմանավորված երկրում պետական ծառայողների կրթության և որակավորման բարձր մակարդակը:

Մինգապուրը շատերը համարում են խիստ օրենքների երկիր: Իհարկե, ամեն տեղ գործում է տվյալ միջավայրին համապատասխան կարգուկանոն: Լինելով տարածքով փոքր և ունենալով բազմազան (առաջին հերթին՝ ազգային ծագումով, լեզվական և կրոնական միջավայրով) բնակչություն, Մինգապուրը մեծ ջանքեր է գործադրում ապահովելու մշակութային բազմազանությամբ պայմանավորված տարբերությունների հանդեպ հավասարակշռված և հանդուրժող ներառական (ինտեգրացնող, սակայն ոչ ասիմիլացնող) միջավայր: Մա նաև ենթադրում է խիստ իրավական կարգավորում, երբ խոսքը գնում է ազգային, լեզվական, կրոնական կամ մշակութային որևէ այլ տարրի հետ կապված խտրականությանը: Շատ առումներով, երկրում ոչ այնքան օրենքներն են խիստ, որքան դրանցով նախատեսված մեղմ պայմանների խախտման դեպքում պատժամիջոցները: Մա, ի թիվս այլ բնագավառների, վերաբերվում է նաև հարկային օրենսդրությանը:

Մտավոր և նյութական սեփականության պահպանումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների համար գրավիչ պայմանների և կայուն քաղաքական և տնտեսական միջավայրի, հեռանկարային կտրվածքով ստեղծվող ենթակառուցվածքների զարգացումը՝ որպես իրական արտադրող տնտեսության զարգացմանը օժանդակող նախապայման, առաջնային կարևորության են: Հարկ է շեշտել, որ Մինգապուրը կապիտալի և ենթակառուցվածքների ամենախոշոր սեփականատերն է երկրում և զարգացման ամբողջ ժամանակահատվածում այն պահպանել է ենթակառուցվածքների գրեթե ամբողջ շրջանակը՝ որպես պետական սեփականություն: ճանապարհները, հեռահաղորդակցությունն ու կապը, նավահանգիստը, միջազգային օդանավակայանը, խողովակները (այդ թվում, խմելու ջրի): Հասարակական տրանսպորտը և օդային փոխադրողը՝ «Մինգապուրյան ավիաուղիներ» ընկերությունը ժամանակի ընթացքում մասնակի մասնավորեցվել են՝ դրանց փայաբաժնում, այնուամենայնիվ, պահպանելով պետականի մեծամասնությունը՝ 54% և 56%, համապատասխանաբար (Venkat, 2016, Singapore Airlines):

Մինգապուրում չի կիրառվում նվազագույն աշխատավարձ, որն, իր հերթին, նպաստում է գործազրկության ցածր մակարդակ պահպանելուն: Երկրում գործում է ներմուծման ազատական ռեժիմ և, բացառությամբ մի քանի տեսակի ապրանքների (ծխախոտ, ակոհոլ, ավտոմեքենաներ, բենզին և կենսադիզելային վառելիք), մնացած ապրանքների հանդեպ չի գանձվում մաքսային վճար (Singapore Customs): Երկրում կիրառվում են թե շահութահարկի, և թե եկամտային հարկի զգալի արտոնություններ: Օրինակ, ֆիզիկական աշխատանքով զբաղվողների եկամուտները, հնարավոր փոքր բացառությամբ, տեղավորվում են չհարկվող եկամտի սանդղակում (IRAS): Հարկերի տեսակները քիչ են և վճարման մեխանիզմները՝ պարզեցված: Սույն հոդվածի նպատակը, ինչպես արդեն նշվել է, երևույթները տնտեսագիտական վերլուծության ենթարկելը չէ, այլ բացահայտելը Մինգապուրի՝ որպես բնական պաշարներ չունեցող փոքր երկրի արագ զարգացման փիլիսոփայական մոտեցումներն ու սկզբունքները, որոնցից կարելի է դասեր քաղել՝ թեկուզ և մասամբ: Երկրում գործող եկամտային հարկի համակարգը տարածքային է, այսինքն, հարկվում է միայն երկրի աղբյուրներից ձևավորված եկամուտը (IRAS): Հարկային արտոնություններով խրախուսվում է երկրից արտահանումը: Առանձնակի ուշադրություն է դարձվում երկրի հեղինակությանն ու բրենդին:

Տարիներ շարունակ իր տեղն զբաղեցնելով բիզնեսի համար ամենանպաստավոր երկր-

ների շարքում (Easy of Doing Business)՝ Մինգապուրը կարողացել է լայն դիվերսիֆիկացիայի ենթարկել իր տնտեսությունը, որտեղ առանձնակի նշանակություն ունեն արտադրության հետևյալ ուղղությունները (InterNations, World's Top Exports).

- Նավթամթերք՝ ներկրվող հում նավթի վերամշակման շնորհիվ,
- Էլեկտրոնիկա և համակարգչային տեխնիկա ու սարքավորումներ,
- Բժշկական և օպտիկական սարքավորումներ,
- Բնական քարերի և թանկարժեք մետաղների մշակում (և ոսկերչություն),
- Օրգանական քիմիայի ապրանքներ,
- Դիմահարդարման ապրանքներ,
- Կենսատեխնոլոգիայի ապրանքներ,
- Ֆինանսական ծառայություններ,

- Զրոսաշրջության և գործնական այցելությունների ծառայություններ, որը ենթադրում է բարձրորակ ենթակառուցվածքի առկայություն՝ հանդիպումների սրահներ և համալիրներ, հյուրանոցներ, զվարճանքի վայրեր՝ աշխարհում հինգերորդ ամենաայցելվող քաղաքի պահանջարկին համապատասխան (Talty),

- Բժշկական ծառայություններ,
- Կրթության բնագավառի ծառայություններ (տրամադրվող՝ համալսարանների, միջազգային դպրոցների, և այլ տիպի հաստատությունների կողմից):

Մինգապուրի տնտեսական հաջողության հիմքում արտադրողականության բարձրացմանն ուղղված ջանքերն են և **արտադրողականության կարևորության ընդգծումը**: Մինգապուրը հաճախ կես-կատակ, կես-ուրջ անվանում են «կորպորացիա-պետություն»՝ ծախսերի հանդեպ հաշվետվողականության և արդյունավետությունը աշխատանքի հիմքում կարևորելու, ինչպես նաև ձեռնարկատիրական ուժեղ ավանդույթների համար (Hank): Զարգացման համար ամենակարևոր աղբյուրներից մեկն էլ ներքին ներդրումների հիմք հանդիսացող բնակչության խնայողություններն են և **եկամուտների համեմատ խնայողությունների բարձր մակարդակը**՝ միջինը եկամուտների մոտ 43% չափով (ինչը Չինաստանից հետո աշխարհում երկրորդն է) (Ghesquiere, 2007: 28):

Հայաստանի համար, ներքին և արտաքին ներդրումների ներգրավման առումով Մինգապուրի փորձը օգտակար կարող է լինել: Մինչև արտաքին աղբյուրներից ներդրումներ ակնկալելը, նպատակահարմար կլինի նախ այդ արտաքին ներդրողների մոտ վստահություն առաջացնել՝ ցույց տալով, որ ներքին ներդրողները, ովքեր ավելի լավ են ճանաչում երկրի ներդրումային միջավայրը, այնտեղ ներդրումներ են կատարում: Հայաստանի դեպքում ներդրումների երկրորդ շերտը հայկական սփյուռքն է, քանի որ մինչև այնտեղից զգալի ներդրումներ չհոսեն երկիր, ոչ սփյուռքահայ պոտենցիալ ներդրողներն ավելի զգուշավորությամբ կմոտենան Հայաստանում ներդրումներ կատարելուն: Սփյուռքահայերի համար նմանապես, Հայաստանի ներքին ներդրողների ակտիվությունը կարևոր կլինի (Վարդանյան): Մինգապուրում ներքին միջոցների հաշվին ներդրումների կարևորագույն աղբյուր են հանդիսանում նաև երկրի բնակչության (քաղաքացիներ և մշտական բնակություն ունեցող անձինք) պարտադիր կենսաթոշակային խնայողությունները՝ ամսական եկամտի 20%-ի չափով վճարվող (CPF): Կուտակված գումարների մի մասը խնայողության տերերը (բնակիչները) կարող են օգտագործել որոշակի պայմաններով նախատեսված ներդրումներ կատարելու համար: Ի դեպ, երկրում այդ հավաքագրված միջոցները կառավարվում են պետության կողմից:

Օրենքի գերակայության սկզբունքը և մերիտոկրատիայի կիրառումը կադրային պոտենցիալի կառավարման գործում որպես գլխավոր շարժիչ ուժ որդեգրելով՝ Մինգապուրին հաջողվել է ձևավորել կոմպետենտ քաղաքացիական ծառայության բանակ՝ արդյունավետ բյուրոկրատիա և մրցունակ վճարման համակարգ և խուսափել կադրային ավելցուկից: Երկրում քաղաքացիական ծառայության մեջ ներգրավված է մոտ 60000 մարդ, կամ բնակչու-

թյան ընդհանուր թվաքանակի մոտ 1%-ը (Guo, Woo, 2016: 3):

Մինգապուրում պետությունը մեծ դեր է խաղում անշարժ գույքի զարգացման գործում, և իրեն է պատկանում բնակարանային շուկայի գերակշիռ մասը: Հարկ է նշել, որ տեղական բնակչության 80%-ը ապրում է 99 տարով վարձակալվող պետական բազմաբնակարանային շենքերում (ChannelNewsAsia), և պետությունը օպերատիվ արձագանքում է գների միտումներին և միջամտում ըստ անհրաժեշտության՝ հիմնականում առաջարկի ավելացման միջոցով:

Երկրում իշխանության խիստ կենտրոնացումը երկրի կենտրոնական բանկին չի խանգարում իր գործունեության ընթացքում պաշտոնական և ոչ պաշտոնական քննարկումներ անցկացնել շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ մինչև դրամավարկային քաղաքականության և ֆինանսաբանկային համակարգի կարգավորման քայլերի մշակումն ու իրագործումը: Հատկանշական է, որ Մինգապուրում կենտրոնական բանկը (Monetary Authority of Singapore) հիմնվել է կառավարության կողմից և հաշվետու է երկրի վարչապետի գրասենյակին (ասել է թե՛ վարչապետին) (Prime Minister's Office, Singapore): Բանկի Խորհրդի ներկայիս նախագահը, օրինակ, երկար տարիներ եղել է երկրի տնտեսական հատվածը համակարգող փոխվարչապետը (Monetary Authority of Singapore): Կենտրոնական բանկի իրավական կարգավիճակը, ըստ էության, ընդգծում է նրա կառավարության կողմից իրականացվող քայլերի հետ հակասության բացակայությունը կամ առնվազն արդյունավետ հարթումը: Ի դեպ, վարչապետին է հաշվետու նաև Կոռուպցիոն գործունեության հետաքննությունների բյուրոն, որի պատմությունն սկսվում է դեռևս գաղութային ժամանակաշրջանից՝ 1952 թ.-ից (Prime Minister's Office, Singapore):

Մինգապուրի հաջողության մեջ մեծ դեր ունի պետության կողմից փոքր ձեռնարկատիրության և համալսարաններին տրամադրվող աջակցությունը: Փոքր և միջին ձեռնարկությունները Մինգապուրում գործող բիզնեսի ընդհանուր թվաքանակի 99% են կազմում, և նրանցում ներգրավված է ամբողջ զբաղվածության 62%-ը, և այդ ձեռնարկությունները ստեղծում են երկրում ամբողջ ավելացված արժեքի 48%-ը (Guo, Woo, 2016: 115): ՓՄՁ-ները բազմազան ոլորտներ են ներկայացնում՝ կենսատեխնոլոգիականից մինչև էլեկտրոնիկա և ճշգրիտ ճարտարագիտություն: 170 հազարից ավելի ՓՄՁ-ներից 70%-ի տարեկան եկամուտը 1 մլն սինգապուրյան դոլարից (մոտ 750 հազար ԱՄՆ դոլար) փոքր է (Scully): Սա վկայում է այն մասին, որ երկրում այս ձեռնարկություններն են, որ իրենց ուսերի վրա են տանում զբաղվածության ապահովման հիմնական բեռը՝ հաշվի առնելով, որ տնօրինելով շատ ավելի փոքր միջոցներ, նրանք կարողանում են ապահովել զբաղվածության այդչափ մակարդակ և տնտեսական արդյունք: Եվ այս պատճառով է, որ նրանք պետության առաջնային հոգածության տակ են:

Կրթության հանդեպ վերաբերմունքը

Գաղտնիք չի լինի ասել, որ երկրի զարգացման համար անհրաժեշտ կապիտալը ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվում է կամ բնական պաշարների, կամ աշխատուժի կողմից ստեղծվող արդյունքով (կամ դրանց երկուսի): Մինգապուրի դեպքում (Հայաստանն էլ իր պայմաններով համադրելի է) բնական ռեսուրսի բացակայությունը այլ հնարավորություն չի թողել, քան շեշտը դնել աշխատուժի զարգացման վրա: Եվ այս հարցում գլխավոր ուղին ընտրվել է երկրի կրթության համակարգի զարգացումը և կրթության հանդեպ հասարակության և պետական համակարգի կողմից ընկալումն ու վերաբերմունքը: **Կրթության հանդեպ** Մինգապուրի պետության կողմից **հատուկ ընդգծված դրական վերաբերմունքն** ունի տարբեր արտահայտության ձևեր, որոնք ամբողջական են դարձնում կրթության կարևորության ընկալումը որպես երկրի թիվ մեկ ոլորտ:

Ստորև բերվում են օրինակներ, որոնցից յուրաքանչյուրն՝ իր հերթին, նպաստում է երկրում կրթության հատուկ կարևորության գաղափարի առաջնորդմանը:

- **Կրթության ոլորտի** և մասնագետների գծով պահանջարկի **հեռանկարային պլանավորում**: Այս առումով հետևյալ պարզաբանումն է կարևորվում: Մինգապուրում զարգացման պլանավորումը երեք հարթության մեջ է կատարվում (Guo, Woo, 2016: 167-168): Չարգացման համար պատասխանատու գլխավոր մարմինը, ինչպես արդեն նշվել է, Տնտեսական զարգացման խորհուրդն է: Նախ, հատկանշական է, որ խորհուրդը մշտական համագործակցության մեջ է Աշխատուժի կառավարման նախարարության հետ (Ministry of Manpower): Այս համագործակցությունն ապահովում է երկրում տնտեսության կառուցվածքային և քանակական զարգացման հեռանկարի ուսումնասիրությունը և պլանավորումը: Մյուս կողմից, Կրթության նախարարությունը մշտապես համագործակցում է Մշակույթի, համայնքային զարգացման և երիտասարդության հարցերի (Ministry of Culture, Community and Youth), Մոցիալական և ընտանեկան զարգացման նախարարության (Ministry of Social and Family Development) և Առողջապահական խորհրդի (Health Promotion Board) հետ: Այս համագործակցությունն, իր հերթին, նպաստում է երկրի սոցիալական միջավայրի տեսանկյունից հեռանկարի բացահայտման և պլանավորման գործընթացին: Իսկ համագործակցության մյուս հարթությունն արդեն գուտ մասնագիտացված կրթական է՝ Կրթության նախարարության (Ministry of Education), Կրթության ազգային ինստիտուտի (National Institute of Education) և դպրոցների միջև: Կրթության ազգային ինստիտուտն է հանդիսանում երկրում մանկավարժների պատրաստման, վերապատրաստման, որակավորման ստուգման (ատեստացիա), հետազոտական աշխատանքների, այդ թվում՝ համալսարանների հետ աշխատանքի պատասխանատուն:

- Մինգապուրի պետական բյուջեի 18%-ը (մոտ 9 միլիարդ ԱՄՆ դոլար) կրթության գծով ծախսերն են (Tan) (հաշվի առնենք, որ Մինգապուրը, լինելով արտաքին միջավայրի առումով խոցելի, զգալի միջոցներ է ծախսում պաշտպանության, այդ թվում՝ պարտադիր ժամկետային զինծառայության և ահաբեկչության դեմ պայքարի վրա, և այս ամենին զուգահեռ կարողանում է մեծ ուշադրություն դարձնել նաև կրթության ֆինանսավորման վրա):

- Կրթության համալսարանական մակարդակի հանդեպ ամենաբարձր մակարդակի ուշադրություն: Այստեղ երկու օրինակ կարելի է բերել՝ երկուսն էլ կապված Մինգապուրի ազգային համալսարանի (National University of Singapore) հետ, որը տարիներ շարունակ **զբաղեցնում է** աշխարհի լավագույն համալսարանների ցանկը: Համալսարանի նախագահն (Chancellor) ի պաշտոնն երկրի նախագահն է (NUS): Հաջորդ օրինակը հետևյալն է. 2015թ.-ի մարտին, երբ վախճանվեց նախկին վարչապետ Լի Կուան Յուն, թաղման պաշտոնական արարողության համար երկրում բազմաթիվ բարձրակարգ դահլիճներից ընտրվել էր այդ համալսարանի դահլիճը՝ փաստ, որն ընդգծում է Մինգապուրի կառավարության կողմից համալսարանի ընկալումը որպես երկրի տասնամյակների զարգացման գլխավոր նվաճումներից մեկի (The Straits Times):

- Տեղական բնակչության համար անվճար հանրակրթություն, սուբսիդավորվող համալսարանական և միջին մասնագիտական կրթություն, բուհական ուսման տևողության ընթացքում երկարաժամկետ և անտոկոս ուսանողական վարկերի տրամադրում (DBS),

- Գիտության կենտրոնացում (զգալի չափով) համալսարաններում և դրա ֆինանսավորում, գիտության և տնտեսության միջև սերտ կապ և պետության կողմից արդյունավետ պլանավորում և քաղաքականության իրագործում,

- Տարրական դպրոցի տարիքից երեխաների (պոտենցիալ որակյալ աշխատուժի) անեցում (grassrooting)՝ ընդհուպ մինչև համալսարանական կրթություն ստանալուց հետո աշխատանքով ապահովում,

- Օտարերկրյա որակյալ մասնագետների ներգրավման քաղաքականություն, երկրի տնտեսությունում նրանց պոտենցիալի լիարժեք օգտագործման համար հնարավորությունների ստեղծում (աշխատանքային վիզայի տրամադրում՝ այդ թվում ընտանիքի անդամներին)

րին, մշտական բնակության կարգավիճակի տրամադրում և այլն),

- *Կոռուպցիայի դեմ տարրական դպրոցից տարվող դաստիարակություն*՝ ուղղված կաշառակերության, հովանավորչության և կոռուպցիայի այլ դրսևորումների հանդեպ հասարակության կողմից անվերապահ բացասական վերաբերմունքի ձևավորմանը, որում մեծ կարևորություն է տրվում ընտանիքների կողմից պետության այս վերաբերմունքին աջակցությանը,

- Ենթագիտակցաբար կրթության կարևորության մասին անընդհատ հիշեցում: Դիտարկենք մի օրինակ: Մինգապուրում թղթադրամների վրա դիմային կողմում պատկերված է երկրի հիմնադիր նախագահը: Թղթադրամները տարբեր գույնի և չափի են՝ կախված անվանական արժեքից: Հակառակ կողմում պետությունը ներկայացնում և առաջ է մղում տարբեր արժեքներ և ոլորտներ: Այսպես օրինակ, 10-դոլարանոցի վրա սպորտային միջոցառում է պատկերված և գրված է «սպորտ», իսկ ամենափոքր անվանական արժեքով թղթադրամի՝ 2-դոլարանոցի վրա, որը, բնականաբար, ամենաշատն է օգտագործվում շրջանառության մեջ, պատկերված է դաս և գրված է «կրթություն»՝ դրանով իսկ հասարակության բոլոր խավերի շրջանում հատուկ նշանակություն տալով այդ ոլորտին (MAS):

Սպառնալիքներ և հնարավորություններ

Մինգապուրի վերջին տասնամյակների զարգացումը, այնուամենայնիվ, կրում է որոշակի խնդիրներ, որոնք պարբերաբար բարձրացվում են երկրում՝ կառավարության, մեդիայի և լայն հասարակության կողմից: Զբաղեցնելով խիստ սահմանափակ տարածք՝ երկրի առաջնային խնդիրներից է մնալ մրցունակ տարածաշրջանում և դրանից դուրս՝ գնալով աճող եկամուտների, այն է՝ մրցակցության պայմաններում (սա իր հերթին արդեն սպառնալիք է): Այս հանգամանքը ենթադրում է ունենալ մրցունակ աշխատուժ, որը բնական սահմանափակ պայմաններ ունեցող երկրին կապահովի կապիտալով: Մրցունակ աշխատուժ ունենալու համար, ի թիվս այլ գործոնների, պետք է աճող բնակչություն և բնակչության աճի համար համապատասխան աշխարհագրական պայմաններ: Մինգապուրը գրեթե սպառել է ծովի հաշվին տարածք վերցնելու հնարավորությունը՝ ներկայիս տարածքը միջազգային ծովային սահմանին մոտենալու պատճառով (NLB): Մինգապուրը ինքնիշխան պետություններից միակն է, որն ունի կանանց կողմից կյանքի ընթացքում ունեցած երեխաների թվաքանակի միջինը 1,0-ից ցածր մակարդակ (The World Factbook: Singapore): Եթե հաշվի առնենք այն, որ երկրում առկա է կյանքի միջին տևողության շարունակական աճ՝ ապա պարզ է դառնում, որ երկրում կա բնակչության ծերացման վտանգ (The World Factbook: Singapore, Teo, 2013: 3-4): Մյուս կողմից էլ, կառավարության կողմից ընդունված ծրագրով 2030 թ.-ի համար սահմանվում է երկրում բնակչության կանխատեսվող շեմ՝ 6,9 մլն մարդ (Teo, 2013: 2): Հաշվի առնելով այն, որ, ինչպես արդեն նշվեց, երկրի ներկայիս բնակչության մոտ 40%-ը օտարերկրացիներ են, որոնցից 3/4-ը չունեն մշտական բնակչի կարգավիճակ (աշխատանքային վիզայով են ապրում երկրում)՝ կառավարությունը ջանում է նպաստել բնակչության բնական աճին և, հարկ լինելու դեպքում, կկարողանա օտարերկրացիների թվաքանակի կառավարման շնորհիվ ապահովել բնակչության ընդհանուր թվի սահմանաչափի պահպանումը:

Տնտեսական արագ զարգացումը, ինչպես և ամենուրեք, մեծացնում է եկամուտների բևեռացումը: Մինգապուրում բնակչության առավել հարուստ 10%-ին պատկանում է ազգային եկամտի առնվազն 30%-ը, և այս ցուցանիշը երբեք դրանից ավելի ցածր չի եղել (Guo, Woo, 2007: 259):

Զարգացմանը զուգահեռ, փորձ է արվում կատարել շտկումներ՝ միտումը հեռանկարային զարգացման պլաններին համապատասխանեցնելու համար: Սա վերաբերվում է նաև երկրի թիվ մեկ ոլորտին՝ կրթությանը: Զբաղեցնելով կրթության որակով համաշխարհային վարկանիշով առաջատար դիրքերից մեկը՝ այնուամենայնիվ, Կրթության նախարարության

դիտարկումներով, երկրում կա ստեղծագործական մտքի և փորձի բաց, որը հաղթահարելու համար վերջերս (2019) որոշում է կայացվել մի քանի տարվա ընթացքում դպրոցական կրթության քննությունների հիման վրա առաջադիմության գնահատման համակարգը փոփոխել՝ ուղղելով այն դեպի շարունակական գնահատում (CNA): Սա նաև կրթության եկամուտների տարբերությունների ազդեցությունը կրթություն ստանալիս, քանի որ շատերի ֆինանսական անկարողությունը երեխային քննության համար լրացուցիչ մասնավոր պարապելու համար լրացուցիչ խոչընդոտ չի հանդիսանա. դրա կարիքն ուղղակի չի լինի: Սա տարբեր բնագավառներում փոփոխություններ կատարելու գործում ինտեգրված մոտեցման վառ օրինակ է:

Լի Կուան Յուն կյանքի վերջին տարիներին տարբեր առիթներով բարձրացրել է մի խնդիր, որը, երևի թե դառնում է Մինգապուրի հասարակության ամենաառաջնայինը՝ երիտասարդության շրջանում պայքարի և նվաճումների հասնելու ձգտման ցածր մակարդակը, որի հիմնական պատճառներից է նշվում տնտեսական զարգացման բարձր աստիճանը և ենթակառուցվածքների մակարդակը (Lee, 2015: 119) Այս խնդիրը ուշադրության կենտրոնում է՝ չնայած որ լուծման եղանակներ գտնելը բավական բարդ և ժամանակատար կլինի: Հարցը էլ ավելի է բարդանում այն հանգամանքով, որ երկրում զարգացմանը զուգահեռ առաջանում է ազգային ինքնության ընկալման և այն կրելու խնդիր, որը, ընթացքը շարունակվելու դեպքում, կարող է հանգեցնել ինքնության ճգնաժամի (Han, 2017): Տնտեսական զարգացման և ազգային ինքնության միջև կապի ուսումնասիրության կարևորությունը տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ գնալով ավելի է ընդգծվում բոլոր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

Կիրառելի՞ է արդյոք Մինգապուրի փորձը

Հայաստանի (ինչպես նաև շատ այլ երկրների) զարգացման մասին խոսելիս անդրադարձ է արվում Մինգապուրի, որպես պատմական կարճ ժամանակաշրջանում մեծ տնտեսական թռիչք ապահոված երկրի փորձին: Կարելի՞ է արդյոք կատարել նման համեմատություն: Եթե ոչ ամբողջովին, ապա կա՞ն ոլորտներ կամ ուղղություններ, որոնցով Մինգապուրը կարող է օրինակ ծառայել Հայաստանի զարգացման համար: Ինչպես արդեն նշվել էր, սույն հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել Մինգապուրի զարգացման՝ որպես հաջողված փորձի հիմքում ընկած փիլիսոփայությունը, որի շնորհիվ որոշ չափով հնարավոր կլինի համեմատության մեջ նախանշել Հայաստանի իրականության մեջ Մինգապուրի փորձի կիրառելի տարրերը և զարգացման հանդեպ պետության և հասարակության կողմից ցուցաբերվող մոտեցման առանձնահատկությունները: Հոդվածի հիման վրա ավելի ընդգրկուն աշխատանքն ընթացքի մեջ է:

Ինքնախաբեություն կլինի կարծել, թե Մինգապուրի կողմից կատարված մեկ-երկու կամ մի քանի քայլերի կրկնությունը կհանգեցնի նմանատիպ արդյունքների և հաջողության: Մինգապուրի զարգացման քաղաքականության հիմքում փոքր ընտանիքի որպես սոցիալական ինստիտուտի աջակցումն է: Վերջինիս դերը ամրապնդվում է կոնֆուցիական ավանդույթներով, որն էլ իր հերթին արտահայտվում է մարդկանց կողմից պետական իշխանությունն ու կառավարումն ընդունելու ցանկության առկայությամբ (Ghesquiere, 2007: 42, 127):

Մինգապուրի զարգացման փորձի և Հայաստանում դրա կիրառելիության մասին քննարկումները պետք է վերաբերվեն տարբեր բնագավառների գործոնների լայն շրջանակի, ինչպիսիք են աշխարհագրական պայմաններն ու սահմանափակումները, պատմականորեն ձևավորված ներկա դրական և խոչընդոտող պայմանները, պրագմատիկ կառավարման սկզբունքներով առաջնորդվելու անհրաժեշտությունը՝ թե ներքին, և թե արտաքին քաղաքականության մեջ, ռազմավարական պլանավորման սկզբունքներն ու ժամանակային հեռանկարի սահմանումը, հայկական սփյուռքի ներգրավումը երկրի տնտեսական կյանքին, ՓՄՁ-ների կարգավորումը, կոմպետենտ և զարգացող (վերապատրաստվող) քաղձառայության և

պետական ու հասարակական ինստիտուտների զարգացումը, երկրի առկա և պոտենցիալ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիների ուրվագծումն ու պլանավորումը, կոռուպցիայի՝ որպես բացասական երևույթի լիակատար մերժումը, և, իհարկե, կրթության և, առհասարակ, սեփական և ուրիշի փորձից սովորելու ձգտումն ու պատրաստակամությունը: Վերջինս, որպեսզի լինի շարունակական և երկրի համար օգտակար, ենթադրում է պետական կառավարման ապարատում և հասարակության լայն շրջանակներում մեծամտության մերժում՝ միևնույն ժամանակ նվաճումների համար բարձր նշաճողի սահմանելով:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման մասին շատ է խոսվում Հայաստանում: Երբ այդ ոլորտի զարգացման ուղղությամբ նոր-նոր աշխատանքներ էին տարվում 10-15 տարի առաջ, հենց այդ ժամանակվանից է այսօրվա հիմքը դրվել: Գիտատար բարձր արժեք ստեղծող ոլորտում, ինչպիսին է, օրինակ, կենսատեխնոլոգիականը, շոշափելի արդյունքներ ստանալու համար այսօր արդեն այդ (և հեռանկարային այլ) բնագավառում կրթության գծով պլանավորում և ներդրումների իրականացում է հարկավոր (այդ թվում՝ պետական): Միայն այս ճանապարհով Հայաստանը կարող է մտնել նորարարական տնտեսություն ունեցող և մրցունակ փոքր և դինամիկ զարգացող երկրների շարքը:

Երկրների փորձը համեմատելիս, իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել զարգացման սկզբնակետի տարբերությունները, այդ թվում՝ աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական-դաշնակցային: Սակայն, կրթության հանդեպ ձևավորված պետության և հասարակության դրական վերաբերմունքը ձևավորելու փորձն ու քայլերը հնարավոր է կիրառել: Նույնը կարելի է ասել քաղձառայության սկզբունքների ու գործելակերպի ներդրման մասին: Զաղձառայության որակի բարձրացումն, իր հերթին, կապված է երկրում մաքուր աշխատելառնի՝ կոռուպցիայի հնարավորինս ցածր մակարդակի հետ: Իհարկե, կոռուպցիան որևէ երկրում հնարավոր չէ լիովին արմատախիլ անել: Սակայն, դրա՝ որպես երկրի զարգացումը զսպող երևույթի դեմ դաստիարակությունը, որը տարրական դպրոցի տարիքից հաջող կերպով տարվում է Մինգապուրում, նույնպես կիրառելի միջոցներից կարող է լինել՝ կոռուպցիայի կանխարգելման և նրա դեմ պայքարի հատուկ կառույց ունենալուն զուգահեռ: Ներկայիս խիստ մրցակցության պայմաններում, տարրական դպրոցից (եթե ոչ ավելի վաղ տարիքից) է պետք **սերմանել** ոչ այնքան շատ, որքան **արդյունավետ աշխատանքի կարևորությունը**: Ի վերջո, ինչն է գերկարևոր, որ երկրում հասարակությունն ու պետությունը կրեն միևնույն արժեքները, որոնցով էլ ավելի կհարստացնեն ազգային ինքնությունը (ասել է թե՛ կապրեն այդ ինքնությունը), կարողանան աշխարհի հետ ինտեգրված տնտեսություն զարգացնել, սովորեն սեփական և ուրիշի փորձից և հասկանան, որ հաճախ, եթե ոչ միշտ, լինի կյանքում, թե քաղաքականության մեջ, կամ ինքդ ես քեզ ստիպում կատարել որևէ քայլ, կամ արդեն մեկ ուրիշն է քեզ ստիպում անել իր ուզածը:

Օգտագործած գրականություն

- Ghesquiere H., Singapore's Success: Engineering Economic Growth, Thomson, 2007
- Guo, Y and Woo J.J. (editors), Singapore and Switzerland: Secrets to Small State Success, World Scientific, 2016
- Lee, K. Y., The Wit and Wisdom of Lee Kuan Yew, EDM, 2015
- United Nations Centre for Human Settlements (Habitat), Urbanization: Facts and Figures, <https://www.un.org/ga/Istanbul+5/bg10.htm>, կայք վերջին այցելություն. 23.05.2019
- Kuczynski, R. R., The World's Population, Foreign Affairs, 10.1928 <https://www.foreignaffairs.com/articles/1928-10-01/worlds-population>, կայք վերջին այցելություն. 23.05.2019
- The World Factbook
<https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

<https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

<https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/sn.html>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Urban Development Authority (UDA) of Singapore, Long-Term Planning, <https://www.ur.gov.sg/Corporate/Planning/Our-Planning-Process/Long-Term-Planning>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•National Library Board (NLB) of Singapore, Land from Sand: Singapore's Reclamation Story, <http://www.nlb.gov.sg/biblioasia/2017/04/04/land-from-sand-singapores-reclamation-story/>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•The Business Times, Lee Kuan Yew, the Truly Father of Changi Airport, <https://www.businesstimes.com.sg/opinion/lee-kuan-yew-dies/lee-kuan-yew-truly-the-father-of-changi-airport>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

Singapore Customs, Duties and Dutiable Goods, <https://www.customs.gov.sg/businesses/valuation-duties-taxes--fees/duties-and-dutiable-goods>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Teo, Ch. H., On Population White Paper at the Parliamentary Debate (speech), <https://www.strategygroup.gov.sg/images/Speeches/speech-by-dpm-teo-chee-hean-on-population-white-paper.pdf>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Keinon, H., The Jerusalem Post, Malaysia's Impact on Singapore-Israel Ties, 2017, <https://www.jpost.com/Israel-News/Politics-And-Diplomacy/Malaysias-impact-on-Singapore-Israel-ties-482135>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•ChannelNewsAsia

NDR 2018: Why are HDB leases 99 years long? PM Lee explains, <https://www.channelnewsasia.com/news/singapore/ndr-2018-hdb-lease-99-years-flat-national-day-rally-10631442>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

MOE to Announce "Significant" Mote to Improve Education System, <https://www.channelnewsasia.com/news/singapore/moe-improve-education-system-ong-ye-kung-budget-2019-11251478>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Prime Minister's Office Singapore, Agencies under PMO, <https://www.pmo.gov.sg/About-Us>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Monetary Authority of Singapore (MAS), Board of Directors, <http://www.mas.gov.sg/About-MAS/Overview/Board-Members.aspx>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Lim, A. and Ng., Ch, Five Power Defence Arrangements Remain Relevant to Deal with Today's Security Threats, The Straits Times, <https://www.straitstimes.com/singapore/five-power-defence-arrangements-remain-relevant-to-deal-with-todays-security-threats>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Housing Development Board (HDB), Public Housing – a Singapore Icon, <https://www.hdb.gov.sg/cs/infoweb/about-us/our-role/public-housing--a-singapore-icon>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•BusinessReport, These are the Highest Paid World Leaders, <https://www.iol.co.za/business-report/economy/these-are-the-highest-paid-world-leaders-report-16318353>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Chee, K., Cut in Annual Pay for Top Civil Servants, 2008, p. A2.

•Energy Market Authority (EMA) of Singapore, Electricity and Gas Tariffs, 2005-2016, <https://www.ema.gov.sg/index.aspx>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Han, F. K., Is Singapore's Identity Less Clear Today? The Straits Times, 2017, <https://www.straitstimes.com/opinion/is-singapores-identity-less-clear-today>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•DBS Bank Singapore, Tuition Fee Loans, <https://www.dbs.com.sg/personal/loans/educa->

tion-loans/tuition-fee-loan, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•National University of Singapore (NUS), Chancellors, <http://nus.edu.sg/about/founded-by-the-community#chancellors>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•The Straits Times օրաթերթ, Funeral Procession for Mr Lee Kuan Yew to Pass Landmarks, Heartland; starts 12.30pm on Sunday, 2015, <https://www.straitstimes.com/singapore/funeral-procession-for-mr-lee-kuan-yew-to-pass-landmarks-heartland-starts-1230pm-on-sunday>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Սինգապուրի կառավարության կայք (Government of Singapore), The Powers of the President, <https://www.gov.sg/factually/content/the-powers-of-the-president>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Աշխատուժի կառավարման նախարարության (Ministry of Manpower - MOM), Summary Table: Unemployment, <https://stats.mom.gov.sg/Pages/Unemployment-Summary-Table.aspx>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Սինգապուրի պետական եկամուտների ծառայություն (Inland Revenue Authority of Singapore – IRAS), Earning 22,000 or Less in a Year, <https://www.iras.gov.sg/IRASHome/Individuals/Locals/Learning-the-basics/Individuals-Required-to-Pay-Income-Tax/Not-Working-in-Singapore/>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Central Provident Fund Board (CPF), CPF Contribution and Allocation Rates, <https://www.cpf.gov.sg/Employers/EmployerGuides/employer-guides/paying-cpf-contributions/cpf-contribution-and-allocation-rates>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Facts and Details, Foreign Labor in Singapore, http://factsanddetails.com/southeast-asia/Singapore/sub5_7c/entry-3785.html, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Hanke, S., Singapore Inc. – Entrepreneurial, Not Parasitical, Forbes, 2018, <https://www.forbes.com/sites/stevehanke/2018/06/15/singapore-inc-entrepreneurial-not-parasitical/#22f8487b6233>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•InterNations, The Economy of Singapore, <https://www.internations.org/singapore-expats/guide/29457-economy-finance/the-economy-of-singapore-16045>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Schab, K., The Global Competitiveness Report 2018, World Economic Forum (WEF), <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Scully, R., Some Micro-SMEs Gradually Restructuring, The Straits Times, <https://www.straitstimes.com/singapore/some-micro-smes-gradually-restructuring>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Singapore Airlines, Stock and Shareholding Information, https://www.singaporeair.com/en_UK/sg/about-us/information-for-investors/shareholding-info/, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Singapore Business Review (SBR)

Singapore is the Fifth Preferred Destination for Chinese property investment in 2018, 2019, <https://sbr.com.sg/commercial-property/news/singapore-fifth-preferred-destination-chinese-property-investment-in-2018>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

Singapore Has the World's Highest Trade to GDP Ratio, <https://sbr.com.sg/source/zuu-online/singapore-has-worlds-highest-trade-gdp-ratio>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Tan, A., Singapore Budget 2018: Spending Needs to Grow in Healthcare, Infrastructure, Security and Education, The Business Times, <https://www.businesstimes.com.sg/government-economy/singapore-budget-2018/singapore-budget-2018-spending-needs-to-grow-in-healthcare>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

•Venkat, P.R., Temasek Offers to Buy Out Singapore's SMRT, The Wall Street Journal, <https://www.wsj.com/articles/singapores-temasek-makes-buyout-offer-for-transport-company-sm>

rt-1469011210, կայք վերջին այցելություն. 23.05.2019

• World Intellectual Property Organization, Global Innovation Index 2018, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2018-intro5.pdf, կայք վերջին այցելություն. 23.05.2019

• WorldsTopExports.com, Singapore's Top 10 Exports, 2019, <http://www.worldstopexports.com/singapores-top-exports/>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

• Чуфрин, Г. И. (խմբ.), Сингапур: Справочник, Академия Наук СССР, издательство "Наука", 1988

• Վարդանյան, Վ., «Դադարենք կղզի լինել», <https://hetq.am/hy/article/98626>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

• Վարդանյան, Վ., «Հայաստանում ներդրումների ներգրավումն ու նիդրոսամաքանական հերթականությունը», <https://168.am/2019/03/03/1089166.html>, կայք վերջին այցելություն. 23.05.2019

Ваагн Варданян

*Заместитель директора, «Хань (китайская) Академия», Гонконг
Доктор по специальности «Геополитика и политическая география»
(Национальный Университет Сингапура)*

ФИЛОСОФИЯ РАЗВИТИЯ МАЛОЙ СТРАНЫ: СИНГАПУРСКИЙ ОПЫТ

Аннотация: Основное внимание в статье уделяется вопросу философского подхода развития малой страны. Философия развития, основанная на видении, как утверждается, является главным предварительным условием экономического роста и развития. В современном мире можно найти несколько ярких примеров быстрого развития стран, некоторые из которых стали известны как «экономическое чудо». Среди них Сингапур - один из азиатских «экономических тигров». Развитие Сингапура часто приводят как пример для подражания, в том числе многими в Армении - малой страны, сталкивающейся с серьезными геополитическими вызовами на перекрестке цивилизаций. В то же время, необходимо понять в какой степени история успеха таких стран как Сингапур может быть полезна для страны с отличающимися начальными условиями развития - географическими, историческими, политическими, экономическими и социально-культурными. С учетом того, что географии часто отводится особая роль в развитии, центральная идея, подчеркиваемая в статье, заключается в том, что прагматизм и долгосрочное стратегическое планирование, подкрепленные стремлением учиться и продвигать чистые методы управления, имеют жизненно важное значение для эффективного управления. Последнее предполагает пропаганду важности повышения производительности труда, роли образования, в том числе для укрепления ценностей свободной от коррупции принципов работы.

Пример Сингапура может стать важным уроком для изучения того, как неблагоприятные условия и ограничения можно превратить в преимущества и возможности. Несомненно, национальный прогресс предполагает не копирование чужого пути развития, а обогащение и продвижение собственного и дальнейшее укрепление национальной идентичности. Успех Сингапура может стать примером развития страны, которое сумело выжить и процветать, несмотря на то, что у него практически не было на это шансов на начальном этапе

развития. Армения сталкивается со все более усиливающейся конкуренцией, и у нее не остается другого пути как стать открытой к миру и извлечь уроки из собственного опыта и прошлого других стран, что, возможно, является основным вызовом для Армении, испытания которого она не раз провалила в истории.

Ключевые слова: Развитие малых стран, философия развития, «экономическое чудо», Армения, Сингапур, стратегическое планирование, экономическая политика, меритократия, прагматическое управление, антикоррупционное воспитание, повышение производительности, привлечение высококвалифицированной рабочей силы и диаспоры.

Vahagn Vardanyan

*Vice Principal, Han (Chinese) Academy, Hong Kong
PhD in Geopolitics and Political Geography
(National University of Singapore)*

DEVELOPMENT PHILOSOPHY OF A SMALL NATION-STATE: SINGAPORE'S CASE

Abstract: The paper is an attempt to present the philosophical framework behind the development of a small nation-state. Vision-based philosophy of development, as argued, is the main pre-condition for economic growth and development. The world knows several vivid examples of rapid development, some of which have been labeled 'miracles.' Among such is Singapore, one of the Asian 'economic tigers.' Singapore's development is often referred to as an example to follow, including by many in Armenia, a small country struggling on the crossroad of civilisations and facing intense geopolitical challenges. It is seen essential to understand the extent to which success stories, such as one of Singapore, can be useful for a country with differing initial development conditions – geographic-historical, political-economic, and social-cultural. With a unique role given to geography, the central idea highlighted in the paper is that pragmatism and long-term strategic planning, supported by the willingness to learn and clean government practices are vital for good governance. The latter assumes promotion of the importance of productivity at work, of the central role of education, including for strengthening the values of clean and corruption-free life and work practices.

Singapore's example can be an essential lesson to learn how unfavourable conditions and limitations can be transformed into advantages and opportunities. National progress assumes no copying of others' routes but enrichment and promotion of own development way and further strengthening the national identity. Having Singapore as a model of a nation-state, which has survived and prospered, despite having nearly zero chances for it at its start, is motivating. Armenia faces an increasingly stronger competition and is standing on a road where it needs to become open for learning from experience and past, own and of others, probably the main lesson to gain, the tests of which the Armenian nation has failed several times in its history.

Keywords: Small nation development, philosophy of development, 'economic miracle', Armenia, Singapore, strategic planning, economic policy, meritocracy, pragmatic governance ('good governance'), anti-corruption education, productivity increase, engagement of foreign talent and diaspora.

Աշոտ Մարկոսյան

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի
պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր*

Աշոտ Չալինյան

*«Հ պետական կառավարման ակադեմիայի
կառավարման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու*

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱ-ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համառոտագիր. Հանրային կառավարման ոլորտում ընթացող բարեփոխումների հիմնական նպատակը հանրային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումն է: Պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության գնահատման համար մշակվել են գնահատման տարբեր գործիքակազմեր, որոնք հաջողությամբ կիրառվում են բազմաթիվ զարգացած երկրներում: Այդպիսի համակարգի ներդրմանը Հայաստանում, հեղինակների կարծիքով, պետք է նախորդի գործունեության արդյունավետության գնահատման նոր մեթոդական մոտեցումների մշակումը:

Միջազգային փորձի ուսումնասիրության և Հայաստանում կիրառվող գործիքակազմի ամփոփման արդյունքում հեղինակները առաջարկում են պետական կառավարման մարմինների գործունեության ծրագրա-նպատակային մեթոդների ներդրումը Հայաստանում՝ առաջարկվող փոփոխությունների փուլայնությամբ ու քայլերի նկարագրությամբ:

Բանալի բառեր. հանրային կառավարում, պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, բարեփոխումներ, գործունեության արդյունավետություն, գործունեության գնահատում, ծրագրա-նպատակային կառավարում, մեթոդաբանություն:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակներից է հանրային իշխանության մարմիններում (պետական ու համայնքային) կառավարման արդյունավետության բարձրացումը: Վերջին քսան տարիների ընթացքում հանրապետությունում պետական կառավարման համակարգում իրականացվել են բազմաթիվ բարեփոխումներ, որոնք ուղղված են եղել, առաջին հերթին, ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների օպտիմալ և արդյունավետ համակարգի ձևավորմանը, քանի որ միայն արդյունավետ հանրային կառավարման համակարգն է ընդունակ լուծելու պետության առջև կանգնած անհետաձգելի սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների մի շարք ծրագրեր: Այդ ծրագրերի հիմնական նպատակը ոչ միայն և ոչ

այնքան գործադիր, տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքի ու հաստիքակազմի և դրա թվաքանակի փոփոխությունն է, որքան այդ մարմինների լիազորությունների վերանայումը, փոփոխումը, գործառույթների իրականացման կառուցակարգերի կատարելագործումը:

Եվ, որպեսզի այդ աշխատանքներից ստացվող արդյունքը լինի առավելագույն, հարկավոր է գնահատվեն ոչ միայն «համախառն»: արդյունքները՝ երկարատև ժամանակահատվածում, այլև իրականացվի այդ մարմինների գործունեության (առնվազն՝ դրանց հիմնական գործառույթների) շարունակական մշտադիտարկում, իսկ իրականացվող նախագծերի գնահատումը պետք է կատարել ծրագրային արդյունքների ստացման ամբողջ ժամանակահատվածի համար:

Պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության գնահատման համար մշակվել և գործնականում կիրառվում են մի շարք գնահատման մեթոդներ, որոնցից են՝ փորձագիտական վերլուծության մեթոդը, նորմատիվային քարտեզների (գործողությունների ուղեցույցերի) կազմումը: Նշված մեթոդները հաջողությամբ իրականացվում են տարբեր երկրներում:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության գնահատման մոտեցումները Հայաստանում պետք է փոխվեն՝ ներկայումս կիրառվող ձևական մոտեցումը պետք է փոխարինվի նոր մոտեցումներով, քանի որ այդպիսի մոտեցումների բացակայությունը բացասաբար է ազդում երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների ու հանրային ոլորտի, ներառյալ՝ կառավարման բարեփոխումների արդյունքների վրա:

Հանրային կառավարման համակարգի մարմինների գործունեության արդյունավետության գնահատման նոր մեթոդական մոտեցումների կիրառումը կարևոր պայման է առաջադրված վերջնական արդյունքների և ձեռքբերումների արդյունավետության բարձրացման համար: Հանրային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման ժամանակակից մեթոդական ցուցումների գործնական կիրառումը կապահովի ճշգրիտ պլանավորում (ծրագրավորում) երկարատև ժամանակահատվածի համար: Ամբողջապես քաղաքացիների պահանջներին համապատասխանող հանրային ծառայությունների տրամադրումը թույլ կտա բյուջետային միջոցներն ուղղել միայն սոցիալապես անհրաժեշտ և տնտեսապես հիմնավորված ծախսերի իրականացմանը, կրթությանը ընդունվող կառավարչական որոշումների հիմնավորվածությունը, կմեծացնի պաշտոնատար անձանց և քաղաքացիական ծառայողների պատասխանատվությունը:

Պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված հանրային կառավարման գործընթացի և համակարգի բարեփոխումների առանձնահատկությունը տվյալ բարեփոխումների արդյունավետության օբյեկտիվ քանակական ցուցանիշների որոշման (սահմանման) դժվարությունն է: Դրա հետ կապված արդյունավետության ներկայումս առաջարկվող ցուցանիշները մեծամասամբ հիմնվում են հասարակական կարծիքի, հանրային ծառայողների և գործարար շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների վրա: Նման եզրահանգումների օգտագործումը բավականաչափ ներկայացուցչական է, սակայն դրանցում պակասում են օբյեկտիվ վիճակագրական տվյալները, ինչպես նաև կառավարման մարմինների՝ նախարարությունների, պետական կառավարման համակարգի մարմինների և մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների տվյալները՝ ստանալու համար առավել համարժեք ցուցանիշներ, որոնք բնութագրում են բարեփոխումների առաջընթացը:

Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ պետության կողմից մատուցվող

ծառայություններից օգտվող շահառուների սպասումներն էականորեն գերազանցում են հանրային կառավարման մարմինների հնարավորությունները, և, բնականաբար, որոշ ժամանակահատված հանրային ծառայությունների տրամադրման էական առաջընթացը սպառողների կողմից գնահատվում է որպես ոչ էական:

Միջազգային փորձի (մասնավորապես՝ Ֆինլանդիայի, Մեծ Բրիտանիայի¹) ուսումնասիրությունն ապացուցում է հանրային կառավարման ծրագրերի իրականացումն ապահովող միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտության մասին: Այդպիսի համակարգը պետք է ապահովի իրականացվող ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումը և ծրագրերի արդյունքների գնահատումը, սահմանելով ծրագրերի պարբերական ներքին և արտաքին մշտական հաշվետվողականություն:

Նիդեռլանդներում², օրինակ, պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը մշակվել է ավելի քան 10 տարվա ընթացքում: Դրա կիրառումը սկզբնական փուլում առաջ բերեց պետական ծառայողների դժգոհությունը, քանի որ նրանցից շատերը, ինչպես պարզ էր դարձել հարցումների արդյունքում, հստակ պատկերացում չեն ունեցել բյուջետային միջոցների ծախսման ուղղությունների, հասանելի ֆինանսական միջոցների մեծության և ծախսման ժամկետների (կոնկրետ ժամանակահատվածի), իրենց գործունեության արդյունքում սպասվելիք արդյունքների վերաբերյալ: Այդ ծրագրի իրագործման սկզբնական փուլում դրանց օգտագործման արդյունավետությունը կազմում էր ընդամենը 20%: Ու, թեև պետական կառավարման մարմինների գործունեության գնահատման համակարգի կիրառումը պահանջեց պետության կողմից որոշակի լրացուցիչ ծախսեր, սակայն հետագայում այն թույլ տվեց բարձրացնել արդյունավետության ցուցանիշը մինչև 80%-ը: Այդ գործում չափազանց կարևոր դեր խաղաց արդյունավետության գնահատման սկզբունքը: Այն ի սկզբանե ուղղված էր նվազագույն ծախսերով բարձր արդյունքների հասնելու նպատակին. և թույլ տվեց իրականում գնահատել յուրաքանչյուր հանրային ծառայողի գործունեության արդյունավետությունը, քանի որ նախատեսում էր հստակ սահմանված պատասխանատվություն նրանցից յուրաքանչյուրի աշխատատեղի համար: Նիդեռլանդներում ամեն տարի հրապարակվում են պետական ծառայության գործունեության գնահատման վերաբերյալ տեղեկությունները³:

«Հ-ում հանրային կյանքի զարգացման ներկա պայմաններում նույնպես պահանջվում է հանրային կառավարման բոլոր մակարդակներում (բոլոր մարմիններում) գործունեության արդյունավետության գնահատման նոր մեթոդների կիրառում, գործունեության **արդյունքային ցուցանիշների** սահմանում, հսկողության տեսանկյունից արդյունավետ և կազմակերպման առումով իրատեսական համակարգի ներդրում:

Պետական կառավարման մարմինների գործունեության ծրագրա-նպատակային մեթոդները: Սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարան գործում ծրագրա-նպատակային մեթոդը հնարավորություն է տալիս ծրագրի օգնությամբ նպատակը կապել դրան հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսների հետ: Դա պլանավորման և կառավարման տե-

1. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:

2. Նիդեռլանդներ պետությունը (տարածքի հիմնական մասը գտնվում է Արևմտյան Եվրոպայում, ինչպես նաև Կարիբյան ծովում գտնվող Բոնեյր, Սինտ-Էստատիոս, Սաբա, Սինտ-Մարտեն, Կյուրասաո և Արուբա կղզիները) մտնում են Նիդեռլանդների Թագավորության կազմի մեջ: Համաձայն Սահմանադրության, պաշտոնական մայրաքաղաքն է Ամստերդամը, որտեղ միապետը երդվում է լինել հավատարիմ Սահմանադրությանը: Փաստացի մայրաքաղաքը Հաագան է, որտեղ տեղակայված են թագավորական նստավայրը, պառլամենտն ու կառավարությունը: Երկրի ոչ պաշտոնական անունն է Հոլանդիա:

3. Դիտարկվող հիմնախնդրի մասին, մասնավորապես, տես՝ Рой О.М. "Основы государственного и муниципального управления: учебное пособие", 5-е изд., Стандарт третьего поколения. – СПб.: Питер. 2015. – 416 с.

սակներից մեկն է, որի հիմքում դրված է առաջադրված նպատակին հասնելու գործունեության կողմնորոշումը:

Ծրագրա-նպատակային կառավարումը ենթադրում է սոցիալական, տնտեսական և գիտատեխնիկական զարգացման հիմնական նպատակների ընտրություն, դրանք նախանշված (կոնկրետ) ժամանակահատվածում իրականացնելու համար փոխկապակցված միջոցառումների մշակում, ռեսուրսների հաշվեկշռված ապահովում և արտադրության արդյունավետ զարգացման պայմանների ստեղծում:

Ծրագրա-նպատակային կառավարման սկզբունքների կիրառման պայմաններում դիտարկվում է ոչ միայն գլխավոր նպատակը, այլև նպատակների և դրանցից բխող ծրագրային առաջադրանքների հիերարխիկ ենթաստորադասության ամբողջ համակարգը, որի հիման վրա էլ մշակվում է այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների ծրագիրը: Ծրագրա-նպատակային կառավարման գլխավոր հատկանիշն արտահայտվում է գործողությունների ծրագրով, որը ցույց է տալիս, թե ինչպես հասնել կառավարման նպատակին, ինչ ժամկետներում, ռեսուրսների ինչպիսի ծախսերով: Որպես կառավարման գործիք՝ ծրագրերը երևան են գալիս լուրջ, խոշորամասշտաբ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առաջ գալուն զուգահեռ, որոնց լուծումները պահանջում են հատուկ միջոցառումների իրականացում, ջանքերի կենտրոնացում, տարբեր կազմակերպությունների գործողությունների զուգակցում:

Ծրագրային կառավարման առանձնահատկություններից է նաև համակարգի վրա ազդելու եղանակը: Ուշադրության կենտրոնում են պահվում ոչ միայն համակարգը, որպես այդպիսին, նրա բաղկացուցիչ տարրերն ու ձևավորված կազմակերպական կառուցվածքը, այլ նաև ծրագրերի առանձին տարրերի կառավարումը, ծրագրային գործողությունները: Այսինքն, ծրագրա-նպատակային կառավարումը ենթադրում է տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական զարգացման առաջնահերթ նպատակների ընտրություն, տրված ժամանակահատվածներում դրանց հասնելու փոխպայմանավորված միջոցառումների մշակում, առավելագույն արդյունավետությամբ այդ միջոցառումների համար պահանջվող ռեսուրսների ապահովում⁴:

Քննարկելով կառավարման կազմակերպման կատարելագործման հնարավորությունները ծրագրա-նպատակային կառավարման մեթոդների օգտագործման դեպքում և պետական կառավարման մարմինների կողմից հանրային ծառայություններ մատուցելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության որոշակի առանձնահատկություններ, որոնցից են, օրինակ՝

► ամբողջությամբ գործում է գործունեության «ծախսային» և ոչ թե «արդյունքային» մոդելը, հիմնականում կապված բյուջետային ֆինանսավորման առանձնահատկությունների հետ: Այն պլանավորում է կառույցների գործունեության նպատակները, ելնելով արդեն ձեռք բերված ցուցանիշներից, այդ թվում՝ նաև փաստացի ձևավորված ծախսերի համար,

► գործունեության կառավարումը և ֆինանսավորումը՝ հաշվի առնելով բյուջետային կառույցների փաստացի ֆինանսական պահանջները նախահաշվային սկզբունքի հիման վրա. օրինակ, հաշվի առնելով նրանց հաստիքների թվաքանակը: Ամբողջությամբ բացակայում է հիմնարկների կառավարման և ֆինանսավորման պրակտիկան ըստ մատուցած ծա-

4. Նշված հիմնախնդրի վերաբերյալ ծավալուն հետազոտություն է իրականացված հետևյալ աշխատությունում. Нагимова А.М. Эффективность деятельности государственных органов управления как фактор повышения качества жизни в регионе: проблемы оценки и измерения. – Казань: Казанский государственный ун.-т, 2009. 190 с.

ռայությունների: Այսինքն՝ կառավարվում և ֆինանսավորվում է այն, ինչը կա, այլ ոչ թե այն, ինչը պետք է լինի,

► հանրային ծառայությունների մատուցման միասնական մեթոդաբանության բացակայությունը և, որպես հետևանք, հանրային ծառայությունների գրանցամատյանի (ռեեստրի) բացակայությունը (ծախսային պարտավորությունների գրանցամատյանի վարման համար մեթոդաբանական և գործնական փորձի պակասը): Արդյունքում, անհնար է օգտագործել արդյունքային ֆինանսավորման գործնական ազդեցությունը, որը կօգներ հասկանալ, թե ինչն ինչպես պետք է լինի,

► ծրագրա-նպատակային կառավարման մեթոդի օգտագործման ոչ արդյունավետությունը, որը հիմնականում կիրառվում է սոցիալապես նշանակալի խնդիրների լուծման համար ամբողջ տարածքի մասշտաբով, և ոչ թե առանձին պետական մարմնի գործունեության դեպքում:

Պետական կառավարման մարմինների գործունեության նշված դժվարությունները կարելի է հաղթահարել՝ գործնականում ծրագրա-նպատակային կառավարման մեթոդի հիման վրա մշակելով և իրացնելով երկարաժամկետ կառավարման կառուցակարգեր: Դա հնարավորություն կտա երկարատև ժամանակահատվածում ստանդարտացնել կառավարման գործընթացը, ինչպես նաև որոշակիացնել գործունեության կոնկրետ վերջնական արդյունքները: Պահանջվում է ստանդարտացնել նաև միջին օղակի կառույցների (ենթակա մարմինների) գործունեության համար ծառայությունների տրամադրումը, քանի որ հատկապես հանրային ծառայությունն է թույլ տալիս իրացնել կառավարման այս մեթոդի բոլոր առավելությունները՝ **կողմնորոշում դեպի արդյունքը և դրա «ամրակցումը» ֆինանսավորմանը:**

Միաժամանակ նկատենք, որ պետական կառավարման մարմնի գործունեության կազմակերպման և իրականացման ընթացքի փոփոխությունները պետք է կրեն համալիր և համակարգային բնույթ, իրենց մեջ ներառելով հետևյալ խոշորացված փուլերը՝

► նախապատրաստական փուլ, որի իմաստը կառավարման համակարգի ելքային վիճակի վերլուծությունն է,

► փոփոխությունների ծրագրի մշակումը, փուլայնության սահմանումը, առանձին միջոցառումների նկարագրությունը և իրականացման ձևերի, ժամկետների ընտրությունը,

► փոփոխությունների ծրագրի եզրափակիչ փուլը, որն իր մեջ ներառում է միջոցառումների կատարման վերլուծությունը, պետական կառավարման մարմինների գործունեության կատարելագործման և արդյունավետության բարձրացմանն ուղղված հետագա աշխատանքների հիմնական ռազմավարական գծի վերաբերյալ որոշումների ընդունումը:

Նշված փուլերի շրջանակներում միջոցառումների իրականացման հաջորդականությունը որոշվում է ելնելով ընթացիկ իրավիճակի վերլուծությունից, փոփոխություններ կատարելու պետական կառավարման մարմինների պատրաստվածությունից, ինչպես նաև, ելնելով ֆինանսական և աշխատանքային հաշվեկշռվածության սկզբունքներից, իրականացվող միջոցառումների հետևողականությունից և փոխադարձ պայմանավորվածությունից: Ընդ որում, փոփոխությունների ծրագրի իրականացման առաջին փուլում անհրաժեշտ է նախապատրաստել բարեփոխումների մասշտաբային ներդրումների համար նորմատիվա-իրավական բազան:

Փոփոխությունների ծրագրի իրականացման երկրորդ փուլը վճռականն է. այդ փուլում ավարտվում է հայտարարված նպատակ(ներ)ին հասնելու համար կառավարման հիմնական իրավական ակտերի և գործիքների մշակումը և ներդրումը: Երկրորդ փուլի իրականացման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տրամադրվող հանրային ծա-

ռայությունների որակին և ստանդարտների ներդրմանը, ծախսային պարտավորությունների նորմատիվային և ծրագրային բյուջետային ֆինանսավորման մեթոդիկաների հաստատմանը:

Հետաքրքրականն այն է, որ, վերլուծելով ընդհանրապես պետական կառավարման առ այսօր ընթացող բարեփոխումների միջազգային փորձը, մասնագիտական գրականության մեջ և համաշխարհային գիտական հետազոտություններում տեղ գտած եզրահանգումները, ըստ էության, կարելի է նկատել վերը շարադրված և հետագայում առաջարկվելիք մեր մոտեցումների նմանությունները փուլերի առումով: Դեռևս 2000 թվականին առաջարկվել է պետական կառավարման համակարգի բարեփոխումների փուլերով և ենթափուլերով իրականացման կազմակերպման օրինակելի մեթոդիկան⁵:

Մասնավորապես, այն համառոտ տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Փուլ 1. Բարեփոխումների անհրաժեշտության հիմնավորում և նպատակադրում, որը ներառում է՝

► պետական կառավարման ոլորտում առկա վիճակի վերաբերյալ քննարկումների կազմակերպում գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների հետ (ներառյալ Ազգային Ժողովի և գործադիր իշխանության համակարգի բոլոր մարմինների կողմից պետական կառավարման մեջ տեղ գտած թերությունների, հակասությունների և բացթողումների մասին առաջարկությունների և դիտողությունների ամբողջացում),

► հասարակական կարծիքի ուսումնասիրության վերջնական արդյունքների, պետական կառավարման առկա վիճակի վերաբերյալ օրենսդիր և գործադիր իշխանությունների մարմինների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների համեմատում և վերջնական միասնական վիճակի ձևակերպում,

► պետական կառավարման բարեփոխումների իրականացման անհրաժեշտության հիմնավորում (պետական կառավարման առկա վիճակի ամբողջական գնահատում, այն է՝ իրական վիճակի բացահայտում, հիմնախնդրի հստակ ձևակերպում, առկա վիճակի շարունակման պայմաններում «սպասվելիք բացասական հետևանքների» կանխատեսում, գլխավոր խնդրի տարանջատում երկրորդականներից, հասարակական կարծիքի ուսումնասիրում և ստացված արդյունքների ամփոփում),

► բարեփոխումների նպատակադրում, իրականացման փուլերի կատարման մոտավոր ժամկետների սահմանում:

Փուլ 2. Պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման տեսական, մեթոդական, գիտա-գործնական և իրավական նախապատրաստում, ներառյալ՝

► պետական կառավարման համակարգի բարեփոխումների կազմակերպման և իրականացման նախապայմանների, տեսության, ձևերի, մեթոդների, բնույթի, սկզբունքների՝ ըստ երկրների և երկրների խմբերի միջազգային փորձի և դրանց արդյունքների ուսումնասիրություն և ամբողջական ընդհանրացում⁶,

5. Այս մասին առավել մանրամասն տես՝ Ա. Չալինյան. «Բարեփոխումները որպես տնտեսության պետական կառավարման արդյունավետության բարձրացման ուղի. պետության կարգավորիչ դերը շուկայական տնտեսության պայմաններում», - "Рынок капитала в Армении". Аналитический журнал. 2000г., N 23, 24.

6. Տես, մասնավորապես, Heyse L., Resodihardjo S., Lantink T., Lettinga B. "Reform in Europe: Breaking the Barriers in Government". 2006. - 205 p.; Englehardt, E.E., Pritchard, M.S., Romesburg, K.D., Schrag, B. "The Ethical Challenges of Academic Administration". Springer, 2009. - 172 p.; Heyse L., Resodihardjo S., Lantink T., Lettinga B. "Reform in Europe: Breaking the Barriers in Government". 2006. - 205 p.; Public Administration in the South Caucasus: Between Western Models and Hard Soviet Legacy, in the Past, Present and the Future of Public Administration on CEE, Bratislava, 2013, p. 275-278 աշխատություններում իրականացված ամփոփումներն ու վերլուծությունները:

► բարեփոխումների իրականացման մեթոդական հիմքի ընտրություն (գոյություն ունեցող մեթոդիկաների համեմատում և դրանցից՝ առկա իրավիճակին և հնարավորություններին առավել համապատասխանող և ընդունելի մեթոդիկայի հաստատում),

► ընդունված մեթոդիկայով բարեփոխումների փորձնական (պիլոտային) իրականացում պետական կառավարման որևէ մարմնում և իրականացումից ստացված արդյունքների վերլուծություն, գնահատում, եզրահանգում, ի հայտ եկած թերությունների և բացթողումների շտկում): Փորձարկումը պետք է լինի խիստ կազմակերպված, ունենա այն իրականացնող հստակ պատասխանատուներ և լինի վերահսկելի: Անհրաժեշտ է միմյանցից տարբերել «բարեփոխումները որպես փորձարկում» և «բարեփոխիչ բնույթ ունեցող փորձարկումներ» հասկացությունները: Առաջինն անթույլատրելի է, իսկ երկրորդը անհրաժեշտ է և կարևոր,

► բարեփոխումների բուն իրականացման փուլերի և միջոցառումների անցկացման նախնական ժամանակացույցի կազմում և ընդունում:

Վերոգրյալի նման էլ, ինչպես արդեն նշել ենք, պետական կառավարման մարմնի գործունեության կառավարչական գործընթացներում փոփոխությունների մոդելի կառուցումը, որը կապված է ծրագրա-նպատակային կառավարման մեթոդների, զարգացման երկարաժամկետ պլանների ձևավորման ընթացակարգերի մշակման և կատարելագործման հետ, ներառում է հետևյալ հիմնական փուլերը.

Առաջին փուլում իրականացվում է միջնաժամկետ և երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող փաստաթղթերում **նպատակների և խնդիրների «գույքագրում» առնվազն հաշվետու վերջին երեք տարում և ընթացիկ ֆինանսական տարում:** Ներկայում պետական մարմնի գործունեությունում ծրագրային սոցիալ-տնտեսական կառավարման պրակտիկան ցույց է տալիս միջնաժամկետ և երկարաժամկետ կառավարման գործիքների օգտագործման գրեթե բացակայությունը:

Կառավարչական գործընթացի շրջանակներում քննարկվող առաջին փուլում կառավարչական փոփոխությունների իրացման միջանկյալ արդյունքն է վիճակագրական և աղյուսակային նյութերով հատուկ վերլուծական փաստաթղթային ձևավորումը, որը արտացոլում է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրային փաստաթղթերում նպատակների և խնդիրների գույքագրման արդյունքները: Նշված վերլուծական աշխատանքի իրականացումը թույլ է տալիս՝

► նախապատրաստել փաստական և մեթոդաբանական բազան գործունեության սահմանված ոլորտում երկարաժամկետ նպատակային ծրագրերի մշակման, իրացման և մշտադիտարկման իրականացման համար,

► ամրագրել փոփոխությունների (ճշգրտումների) կամ ժամկետից շուտ դադարեցնելու երկարաժամկետ նպատակային ծրագրերի ընթացակարգերը:

Պետական կառավարման մարմնի գործունեության փոփոխությունների կառավարչական գործընթացի երկրորդ փուլում կարևոր է՝

► նախապես որոշել պետական կառավարման մարմնի գործունեության զարգացման ծրագրերի իրացման նվազագույն ժամկետները (ստորին սահմանները),

► սահմանել երկարաժամկետ նպատակային ծրագրերի իրացման միասնական ունի-ֆիկացված կանոնները:

► հստակորեն ամրագրել երկարաժամկետ նպատակային ծրագրերի ծրագրային մշակման համար հիմնախնդիրների ընտրության մեթոդաբանությունը, մասնավորապես, որոշել դրանց մշակման, ձևավորման և իրացման մասին որոշումների ընդունման կարգը, սահմանել դրանց իրացման գործընթացների կառավարման մեթոդները:

Քննարկվող կառավարչական գործընթացի շրջանակներում կառավարչական փոփոխությունների իրականացման երկրորդ փուլի միջանկյալ արդյունքն է երկարաժամկետ նպատակային ծրագրերի մշակման, իրացման և մշտադիտարկման կարգի հաստատման վերաբերյալ առանձին իրավական ակտի կազմումը և ընդունումը, փոփոխությունների (ճշգրտումների) ընթացակարգերի ամրագրումը:

Կառավարչական գործընթացի փոփոխությունների մոդելի երրորդ փուլը կապված է պետական ծառայությունների տրամադրման որակի ստանդարտների մշակման և ներդրման հետ: Անհրաժեշտ է նշել, որ պետական կառավարման մարմնի կողմից տրամադրվող պետական ծառայությունների որակի ստանդարտների հաստատումը կարևոր քայլ է արդյունքի վրա հիմնված բյուջետավորման համար: Այն բյուջետային գործընթացի շրջանակներում ապահովում է անցումը «ծախսերի կառավարումից» դեպի «արդյունքների կառավարման» մոդելի, նախադրյալներ է ստեղծում կառավարման որակական ինդիկատորների, ֆինանսական նորմատիվների ներմուծման և սահմանման համար: Սակայն երրորդ փուլում հնարավոր են զարգացման մի շարք այլընտրանքային ուղիներ, օրինակ, երբ պետական կառավարման մարմնի գործունեության արդյունքների որոշակի մակարդակի սահմանման համար կարող են օգտագործվել նաև այլ կառուցակարգեր:

Հնարավոր կառուցակարգերից մեկը կարող է լինել պետական կառավարման մարմնի գործունեության արդյունքների հիմնավորմամբ ձևավորված պրակտիկայի շարունակումը: Սակայն այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել պետական կառավարման մարմնի գործունեության ֆինանսական ապահովման գործընթացի սերտ կապը կառավարչական գործընթացների հետ, քանի որ բյուջետային ֆինանսավորման նորմատիվների հաշվարկման հիմքում ընկած է միայն ռեսուրսային բաղկացուցիչը: Այն հիմնականում ապահովում է ծախսերի ծավալի հիմնավորումը, հաշվի չառնելով դրանց իրականացման փաստացի արդյունքայնությունը՝ կառավարչական գործունեության արդյունավետությունը: Դրանով իսկ ստեղծվում է նախադրյալ նորմատիվների սահմաններում՝ առանց ստուգելու փաստացի ձեռքբերված արդյունքը, ավելացնելու բյուջետային ֆինանսավորման ծավալները:

Հնարավոր կառուցակարգերից է նաև «նվազագույն սոցիալական ստանդարտների» մշակումը և կիրառումը: «Նվազագույն սոցիալական ստանդարտների» մշակումը և ներդրումը տարածքային կառավարման մարմինների մակարդակով կարող է հանգեցնել պետական մարմնի կառավարման գործում ֆինանսա-բյուջետային քաղաքականության ճկունության կորստի: Այն կարող է նաև դառնալ բյուջեի երկարաժամկետ անհավասարակշռության հզոր գործոն, քանի որ, որպես կանոն, միշտ տեղի ունի հանրային ծառայություններ ստացողների պահանջների նվազագույն և փաստացի մակարդակների անհամատեղելիություն:

Պետական կառավարման մարմնի գործունեությունում կառավարչական գործընթացների փոփոխությունների հաջորդ փուլը ենթադրում է փաստացի տրամադրվող պետական ծառայությունների ստանդարտ(ներ)ի մշակում և նորմատիվների հաստատում: Դա թույլ կտա՝

- ▶ գործնականում ներդնել սպառողներին տրամադրվող ծառայությունների որակի իրական վիճակի մշտադիտարկման կառուցակարգերը,

- ▶ կանոնակարգել պետական կառավարման մարմնի գործառնությունների մշտադիտարկման ընթացակարգերի իրականացման գործը,

- ▶ նախատեսել չափորոշիչներ՝ գնահատելու փաստացի տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը որակի հաստատված ստանդարտին:

Ашот Маркосян

*Факультет экономики и менеджмента
Ереванского государственного университета,
доктор экономических наук,
профессор кафедры менеджмента и бизнеса*

Ашот Залинян

*Академии государственного управления
Республики Армения,
кандидат экономических наук,
доцент кафедры управления*

МЕТОДИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ РЕАЛИЗАЦИИ РЕФОРМ ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ И ЕЕ ПРОГРАММНО-ЦЕЛЕВЫЕ ЭТАПЫ

Аннотация: Основной целью проводимой реформы государственного управления является повышение эффективности деятельности органов государственного управления. Для оценки работы органов государственного управления разработаны различные инструменты, которые успешно применяются во многих развитых странах. Внедрению такой системы в Армении, по мнению авторов, должна предшествовать разработка новых методологических подходов к оценке эффективности деятельности органов публичного управления.

На основе изучения и анализа международного опыта, а также обобщения инструментария, используемого в Республике Армения, авторы предлагают внедрение программно-целевых методов деятельности органов государственного управления в Армении, с описанием этапов предлагаемых реформ и необходимых для ее реализации шагов.

Ключевые слова: публичное управление, государственные органы, органы местного самоуправления, реформы, эффективность деятельности, оценка деятельности, программно-целевое управление, методология.

Ashot Markosyan

*Faculty of Economics and Management
Yerevan State University,
Doctor of Economics,
Professor of the Chair of Management and Business.*

Ashot Zalinian

*Public Administration Academy
of the Republic of Armenia,
Ph.D. in Economics,
Associate Professor of the Chair of Management.*

METHODOLOGICAL FEATURES OF THE IMPLEMENTATION OF REFORMS IN PUBLIC ADMINISTRATION SYSTEM AND ITS PROGRAM-TARGETED STAGES

Abstract: The main goal of the ongoing reform of public administration is to increase the efficiency of governmental bodies. Various tools have been developed to evaluate the performance of governmental bodies, which are successfully used in many developed countries. In the opinion of the authors, the introduction of such a system in Armenia should be preceded by the development of new methodological approaches for the assessment of the efficiency of the public administration authorities.

Based on the study and analysis of international experience, as well as the generalization of the tools used in the Republic of Armenia, the authors propose the introduction of program-targeted methods to the governmental bodies in Armenia, describing the stages of the proposed reforms and the steps necessary for its implementation.

Keywords: public administration, state bodies, local self-government bodies, reforms, activity efficiency, activity assessment, program-targeted management, methodology.

Միքայել Միքայելյան
Տնտեսագետ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

Համառոտագիր. Ներկայումս ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովը առանձնապես աչքի չեն ընկել թե՛ մասնագիտական դրական որակներով, թե՛ օբյեկտիվ և անաչառ գործունեությամբ: Մեր երկրի նման փոքր տարածք ունեցող երկրներում շռայլություն է հարկատուների հաշվին գործող այդ երկու պետական անկախ մարմինների առանձին գոյությունը, որոնց գործառույթները որոշակի հարթությունում հատվում են՝ առաջ բերելով գերատեսչական շահերի բախում:

Միասնական Հանձնաժողովի ձևավորման և գործունեության անկախության ու արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է որոշակի չափանիշներով կադրերի 4 անկախ բանկ ձևավորել և դրա անդամների ընտրությունը (Սահմանադրության 122 հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան) կատարել այդ բանկերից՝ կախված այն բանից, թե որ բանկի տեղն է թափուր մնացել կամ մնալու (Հանձնաժողովի անդամի ժամկետը լրանալու պատճառով): Այդ երկու պետական մարմինների գործառույթներով մեկ միասնական մարմին ունենալու դեպքում նաև 12-15 տոկոսով կկրճատվեն դրա պահպանման ծախսերը:

Բանալի բառեր. շուկայում գերիշխման աստիճան, կարգավորող պետական մարմին, պետական ինքնավար մարմիններ, ապրանքային շուկաներ:

Համաշխարհային տնտեսական համաժողովի 2016-2018 թթ. զեկույցներում համաշխարհային մրցունակության ինդեքսով Հայաստանը վերջին 3 տարիներին առաջընթաց է արձանագրել՝ համապատասխանաբար զբաղեցնելով 79-րդ (138 երկրների մեջ), 73-րդ (137 երկրների մեջ) և 70-րդ (140 երկրների մեջ) տեղերը¹: Այնուամենայնիվ, չնայած առաջընթացին, հարավկովկասյան 3 երկրների մեջ Հայաստանն այդ ցուցանիշով դեռևս երրորդն է (տե՛ս Աղյուսակ 1): Սակայն, ապրանքային շուկաների արդյունավետության հենասյունով առաջ է անցել Վրաստանի հանրապետությունից՝ չնայած որ այս ցուցանիշով Հայաստանը նախորդ տարվա համեմատ 4 տեղով զիջել է իր դիրքը:

Առավել մեծ թռիչք է ունեցել ԾԳԱ ցուցանիշով (9 տեղով)՝ զբաղեցնելով 19-րդ տեղը 140 երկրների մեջ (Ադրբեյջանը 37-րդ տեղում է, Վրաստանը՝ 80-րդ): Առաջին հայացքից, նման առաջընթացը կարող է 3 պատճառ ունենալ՝ ցանկում ընդգրկված երկրների մի մասի կարգավորող մարմինների ավելի վատ գործունեությունը (օրինակ, Ադրբեյջանը նախորդ տարվա համեմատ տվյալ ցուցանիշով դիրքը զիջել է 1 տեղով, Վրաստանը՝ 13) և Հայաստանի կարգավորողի՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետև՝ ՏՄՊՊՀ) գործունեության արդյունավետության բարձրացումը, կամ, առաջին երկու պատճառները միաժամանակ տեղի ունենալու հետևանքով: Սակայն փաստերն այլ բան են հուշում:

1. http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf, էջ 100: The global competitiveness report.2017/2018, World Economic Forum. Policies under pinning Rising Prosperity, էջ 13; The Global Competitiveness Report 2018, էջ 72

	Ադրբեջան			Հայաստան			Վրաստան		
	2016-2017թթ. զեկույց (138 երկիր)	2017-2018թ. զեկույց (137 երկիր)	2018թ. զեկույց (140 երկիր)	2016-2017թ. զեկույց (138 երկիր)	2017-2018թ. զեկույց (137 երկիր)	2018թ. զեկույց (140 երկիր)	2016-2017թ. զեկույց (138 երկիր)	2017-2018թ. զեկույց (137 երկիր)	2018թ. զեկույց (140 երկիր)
ՀՄԻ	37	35	69	79	73	70	59	67	66
1.ԱՇԱ	50	31	37	45	35	39	46	50	42
ա/ՏՄԻ	115	106	-	91	66	-	78	94	-
բ/ՇԳԱ	74	36	37	51	28	19	76	67	80
գ/ՀՔԱ	72	38	-	77	40	-	114	112	-

Աղյուսակ 1. Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Համաշխարհային մրցունակության, դրանց ապրանքային շուկաների արդյունավետության հենասյուների և վերջիններիս 3 ենթահենասյուների ինդեքսները՝ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2016-2018 թթ. զեկույցների²

Ներկայումս Հայաստանում գործող երկու պետական մարմինները՝ ՏՄՊՊՀ և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովը (ՀԾԿՊՀ), առանձնապես այսի չեն ընկել թե՛ մասնագիտական դրական որակներով, թե՛ օբյեկտիվ և անաչառ գործունեությամբ:

ՏՄՊՊՀ-ի գործունեության ավելի քան 18 տարիների ընթացքում եղել են և՛ ձեռքբերումներ, և՛ բացթողումներ ու ձախողումներ: Բացթողումներն ու ձախողումներն ունեն իրենց սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները (կոռուպցիայի վերաբերյալ կասկած հարուցող որոշումներ և ռիսկեր, թերուս կադրեր, օրենսդրական բացեր և այլն), որոնց նպաստել են նաև նախորդ իշխանության լճացման 10 տարիների ամենաթողությունը, կոռուպցիան, նյութապաշտությունը և «մեր դեմ խաղ չկա» գործելաճրճ³:

Մեր երկրի նման փոքր տարածք ունեցող երկրներում շռայլություն է հարկատուների հաշվին գործող այդ երկու պետական անկախ մարմինների առանձին գոյությունը, որոնց գործառույթները որոշակի հարթությունում հատվում են՝ առաջ բերելով գերատեսչական շահերի բախում⁴: Այդ երկու պետական մարմինների գործառույթներով մեկ միասնական մարմին ունենալու դեպքում նաև 12-15 տոկոսով կկրճատվեն դրանց պահպանման ծախսերը⁵:

2. ՀՄԻ՝ համաշխարհային մրցունակության ինդեքս, ԱՇԱ՝ ապրանքային շուկաների արդյունավետություն, ՏՄԻ՝ Տեղական մրցակցության ինտենսիվություն, ՇԳԱ՝ Շուկայում գերիշխման աստիճանը և ՀՔԱ՝ հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետություն: Համաշխարհային տնտեսական համաժողովի 2016-2017թ. և 2017-2018թ. զեկույցներում ԱՇԱ-ն հաշվարկվել է 16 ենթահենասյուների կշռված միջինով, իսկ 2018թ. զեկույցում՝ 8 ենթահենասյուների: Ընդ որում՝ բացառությամբ ՇԳԱ-ի մնացած ենթահենասյուները փոխվել են:

3. Միքայել Միքայելյան, Մրցակցության պաշտպանության բարելավման անհրաժեշտությունը, <http://hetq.am/arm/news/66495/mrcakcutyan-pashpanutyanyan-barelavman-anhrzheshhtutyuny.html>, Միքայել Միքայելյան, ՀՀ ապրանքային շուկաների համակենտրոնացման մակարդակները և մրցակցության պաշտպանության առաջնահերթությունները, Մոնոպոլիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին, Խորհրդաժողովի նյութեր, Եր. 2010, էջ 328-33, M.V.Miqayelyan A.Kh.Markosyan, E.N.Matevosyan, L.Yu.Yarmaloyan, Monopoly and the problems of its regulation in Armenia, Bulletin of high technology, Shushi, 2018, N 3, պ. 58-73.

5. Ключников Ю. В., Сабанин А. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. 1. С. 168—169.

6. Там же.

входят в состав Южно-Сахалинской области СССР. В 1951 году был заключен Сан-Францисский мирный договор между странами-победительницами во Второй мировой и Японией, однако по ряду своих причин представители СССР, Чехословакия и Польша отказались ставить свои подписи. В частности, министр иностранных дел А.А. Громыко там же на пресс-конференции 8 сентября 1951 года раскритиковал отсутствие представителей КНР на конференции и то, что договор не закрепляет суверенитет СССР над Южным Сахалином и Курильскими островами⁸.

Последний документ того времени, отголоски которого слышатся до сих пор - Советско-японская декларация, вступившая в действие 12 декабря 1956 года⁹. Согласно ей, СССР соглашался передать Японии острова Хабомаи и Шикотан, но только после мирного договора. Однако в связи давлением США, которые в таком случае отказывались возвращать японцам архипелаг Рюкю с островом Окинава, требовав от последних соглашаться только на все четыре острова, договор так и не был подписан. Кроме того, вскоре японцы нарушили условия декларации и заключили договор о взаимном сотрудничестве и гарантиях безопасности между США и Японией, который закрепил пребывание американских вооруженных сил на территории Японии (1960). Интересно, что уже в 21 веке, в 2005 и в 2009 годах Президент РФ Владимир Путин выражал возможность решить вопрос в соответствии с советско-японской декларацией 1956 года. Японцы также решительно отвергли тогда всякие доводы о возможном компромиссном варианте. В 2014 году В. Путин подтвердил готовность провести переговоры, вместе с тем удивляясь некоторым решениям Японии в отношении РФ: «Готовы ли вести переговоры? Да, готовы. Но с удивлением недавно услышали, что Япония присоединилась к каким-то там санкциям – при чем здесь Япония, я не очень понимаю – и приостанавливает переговорный процесс по этой теме. Так что мы-то готовы, готова ли Япония, я так для себя и не усвоил»¹⁰. Кроме того, трехкратное (2010, 2012 и 2015 гг.) посещение островов Дмитрием Медведевым вызывало у японской стороны негодование.

На острове Итуруп находится крупнейшее в мире месторождение рения в виде минерала рениита (открыто в 1992 году на вулкане Кудрявый), которое имеет огромное экономическое значение. Кроме того, острова безусловно имеют стратегическое значение и в военноморском плане (стоит отметить, что проливы Екатерины и Фриза являются единственными незамерзающими при переходе из Охотского моря в Тихий океан)¹¹.

Предсказать дальнейший ход переговоров на высшем уровне (если они вообще возобновятся) довольно сложно, однако проанализировав историю островов и требования японской стороны, можно сделать вывод, что лидеры РФ справедливо отстаивают суверенитет страны, давая понять иностранным коллегам, что передача всех четырех объектов спора не может состояться ни под каким предлогом.

3. Проблема острова Ноктундо (Оленьего острова)

Ноктундо – это бывший остров в русле реки Туманной под юрисдикцией России. Находится на границе КНДР и Приморского края РФ. Претензии же время от времени на него высказывает Южная Корея.

7. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941—1945 гг. Сборник документов / Министерство иностранных дел СССР. Крымская конференция руководителей трёх союзных держав — СССР, США и Великобритании (4-11 февраля 1945 г.) Т. 4. — М.: Политиздат, 1984. С. 255.

8. Из заявления первого заместителя министра иностранных дел СССР А.А. Громыко на пресс-конференции в Сан-Франциско [Электронный ресурс] // Hrono.ru, 2000-2015. URL: http://www.hrono.ru/dokum/195_dok/19510908gromy.php/. (Дата обращения: 19.10. 2015).

9. Головенко А. Как Хрущев за Курилы торговался // Родная газета № 7. – 20 февраля 2004 г. – С.2.

10. «РИА Новости» [Электронный ресурс] // Ria.ru, 2015. URL: <http://ria.ru/world/20140525/1009315918.html>. (Дата обращения: 19.10. 2015).

11. Мясников В.С. Россия и Япония: узлы противоречий (размышления в связи с выходом книги А.А.Кошкина) // Новая и новейшая история. – №5. – 2011. – М.: Наука. – С. 139.

С XV века остров принадлежал корейской династии Чосон. По Пекинскому трактату 1860 года Ноктундо без согласия корейской стороны отошел Российской империи. КНДР окончательно сняло все свои притязания на остров в 1990 году, заключив с СССР договор о границе. Проблема возникла из того факта, что Южная Корея официально не признает все документы, которые подписывает Северная. Хотя требования официальных корейских властей в 21 веке практически не раздаются, тема регулярно поднимается в местных СМИ¹².

4. Проблема островов Лианкур (Токто / Такэсима)

Лианкур – это группа небольших островов в Японском море, которые управляются Южной Кореей. Свои претензии на них выдвигает Япония¹³. Население – 1 человек. В 2012 году президент Южной Кореи Ли Мён Бак совершил визит на острова, что вызвало резко отрицательные эмоции у японцев, в ответ на что последние временно отзывали посла. Можно заметить, что территориальный спор за Лианкур, ровно как и за Курилы, вызван не до конца ясными результатами пересмотра границ Японии по итогам Второй мировой войны. Сан-Францисский мирный договор не включал ни слова о Токто, что дает сегодня японцам свободу интерпретации своей довоенной истории.

5. Разграничение морских пространств между США и СССР в 1990 году (Соглашении о Линии Шеварднадзе-Бейкера)

Необходимо заметить, что в новейшей российской истории был беспрецедентный случай по урегулированию территориальных споров в Азиатско-Тихоокеанском регионе, который принес немалый ущерб экономическим интересам страны.

По условиям вышеназванного соглашения в Беринговом море к США отошли:

- часть исключительной экономической зоны СССР площадью 23,7 тыс. км², фактически переданная Советским Союзом Соединенным Штатам в 1977 году;
 - часть исключительной экономической зоны СССР площадью 7,7 тыс. км²;
 - участок континентального шельфа площадью 46,3 тыс. км² в открытой центральной части Берингова моря, находящийся за пределами 200 морских миль от исходных линий¹⁴.
- Потери России за следующие 10 лет оцениваются приблизительно в 2 млрд. долл. Осложнилось возрождения такого маршрута, как Севморпуть с востока¹⁵. Помимо прочего, эти места также включают “Алеутское” и “Наваринское” перспективные нефтегазовые месторождения.

Выводы

Территориальные споры остаются одной из ключевых проблем во всем Азиатско-Тихоокеанском регионе в начале XXI столетия. Поводом для претензий зачастую является вольная трактовка истории стран региона, выгодная для достижения собственных корыстных интересов (разработка полезных ископаемых, стремление “сохранить лицо” перед избирателями и т.п.). Во трех случаях из четырех фигурирует Япония, что дает повод сделать вывод о ее наибольшей неумеренности в своих притязаниях (почему в японском обществе столь

12. Иванов А.Ю. Проблема острова Ноктундо в средствах массовой информации Южной Кореи// Корея: взгляд из России. – М., 2007. С. 3.

13. Япония временно отзываает посла в Сеуле из-за визита президента Ли Мён Бака на спорные острова Такэсима [Электронный ресурс] // Информационное агентство России ТАСС, 1999-2015. URL: <http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/579965>. (Дата обращения: 19.10. 2015).

14. Соглашение между Союзом Советских Социалистических республик и Соединенными Штатами Америки о линии разграничения морских пространств (Вашингтон, 1 июня 1990 года) [Электронный ресурс] // Викитека. URL: https://ru.wikisource.org/wiki/Соглашение_между_СССР_и_США_о_линии_разграничения_морских_пространств. (Дата обращения: 19.10. 2015).

15. Дмитрий Субботкин. Россия — США: морской рубеж // Вестник границы России. 2007. № 6 (137), ноябрь–декабрь. С. 39.

любят разговоры о возможности прибавить себе территории – тема отдельного исследования, возможно, связанного с особенностями психологии народа, некогда имевшего великую империю). Прогнозировать что-либо на основании вышеизложенных конфликтов довольно затруднительно, однако нельзя полностью исключать при определенных обстоятельствах эскалацию конфликтов (в первую очередь, Сэнкаку).

Практические рекомендации

Изучив историю претензий японцев, в частности, в 20 веке, автор рекомендует российской стороне не идти на поводу японского своеобразного мышления в спорах о южной гряде Курильских островах, продолжая справедливо объяснять, что это территория, не подлежащая никаким пересмотрам нынешнего его статуса (т.е. часть РФ). Пойти на уступки, признав советско-японскую декларацию 1956 года (несмотря на ряд допущенных впоследствии нарушений Японией), России можно, только если удастся при этом извлечь максимальную пользу в политическом плане, что сейчас довольно трудно представить, зная насколько сильны связи Японии и США. Подарок в виде двух островов может быть теоретически предоставлен лишь настоящему политическому “другу” РФ, который не будет давить санкциями, а, возможно, и признает законность воссоединения с Крымом, и т.д.

Южная Корея не смеет пока заявлять официально о требованиях на Ноктундо, и в видимой перспективе реальной проблемы здесь не предвидится (при условии продолжения жесткой внешней политики руководством РФ).

Остальные споры будут продолжаться в зависимости от удобной трактовки для каждой из сторон конфликта. Выход, справедливый для всех – изучать историю, отбросив в сторону идеологию, на основании чего дипломатическими методами постараться решить проблему, ведь выиграть от мирного и добрососедского сосуществования и сотрудничества можно намного больше, чем иллюзорно и дальше надеяться когда-нибудь в будущем заполучить столь желанные земли.

Источники

1. Из заявления первого заместителя министра иностранных дел СССР А.А. Громыко на пресс-конференции в Сан-Франциско [Электронный ресурс] // Hrono.ru, 2000-2015. URL: http://www.hrono.ru/dokum/195_dok/19510908gromy.php / . (Дата обращения: 19.10. 2015).
2. Головенко А. Как Хрущев за Курилы торговался / Родная газета № 7. –20 февраля 2004 г. – С. 2-3.
3. Ключников Ю. В., Сабанин А. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. 1. С. 168—169.
4. Мирный договор с Японией (Сан-Францисский мирный договор). [электронный ресурс]. Режим доступа: http://vff-s.narod.ru/kur/his/k_is11.html/.
5. Пекинский трактат 1860. [электронный ресурс]. Режим доступа: [https://ru.wikisource.org/wiki/Пекинский_договор_\(1860\)/](https://ru.wikisource.org/wiki/Пекинский_договор_(1860)/).
6. Санкт-Петербургский договор 1875 год. [электронный ресурс]. Режим доступа: [https://ru.wikisource.org/wiki/Санкт-Петербургский_договор_с_Японией_\(1875\)/](https://ru.wikisource.org/wiki/Санкт-Петербургский_договор_с_Японией_(1875)/).
7. Симоносекский договор 1895 г.: Гримм Э. Д., Сборник договоров и др. документов по истории международных отношений на Д. Востоке (1842—1925), М., 1927.
8. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941—1945 гг. Сборник документов / Министерство иностранных дел СССР. Крымская конференция руководителей трёх союзных держав — СССР, США и Великобритании (4-11 февраля 1945 г.) Т. 4. — М.: Политиздат, 1984. С. 255.
9. Советско-японская совместная декларация 1956 года. [электронный ресурс]. Режим

доступа: https://ru.wikisource.org/wiki/Советско-японская_декларация_1956_года/.

10. Соглашение между Союзом Советских Социалистических республик и Соединенными Штатами Америки о линии разграничения морских пространств 1990 года. . [электронный ресурс].Режим доступа: <http://docs.cntd.ru/document/901756969/>.

Литература

1. Иванов А.Ю. Проблема острова Ноктундо в средствах массовой информации Южной Кореи// Корея: взгляд из России. – М., 2007. – 15 с.
2. Гордеева И. Политика Японии в отношении Тайваня: проблемы и тенденции, 2014.
3. Мясников В.С. Россия и Япония: узлы противоречий (размышления в связи с выходом книги А.А.Кошкина) // Новая и новейшая история. – №5. – 2011.– М.: Наука. – 251 с.
4. Семин А. Японо-китайские отношения подвергаются испытанию //Проблемы Дальнего Востока. - 1996. - №3. - С. 16-21.
5. Сысоева Е.А. Сахалин и Курильские острова в русско-японских отношениях 1855-1875 гг.: От Симодского трактата до Петербургского договора: Дис. ... к-та ист. наук: - Владимир, 2004. - 217 с.
6. Чжун О. Шаг к миру //Тайваньская панорама. - 2013. №3. С. 10-15.

Լևոն Ասատրյան

*Ազգային գիտահետազոտական համալսարան
«Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց», ՌԴ, մագիստրատուրա*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Համառոտագիր. Ներկայումս Հյուսիսարևելյան Ասիայում առկա են մի քանի հակամարտություններ, որոնք կապված են երկու կամ ավելի պետությունների պահանջների հետ այս կամ այն տարածքների վերաբերյալ: Ընդ որում, եթե նույնիսկ կողմերից մեկը հրաժարվում է ընդունել գոյություն ունեցող վեճը, խնդիրը չի վերանում և շարունակում է ազդել երկրների փոխհարաբերությունների վրա: Առկա խնդիրները պարբերաբար խանգարում են կայուն միջպետական երկխոսությանը բոլոր ոլորտներում: Փոխզիջումների դիվանագիտությունը հակամարտությունների և վեճերի լուծման ամենակարևոր խնդիրներից մեկն է:

Բանալի բառեր. Տարածքային վեճեր, Ասիա, տարածաշրջան, հակամարտություն, պետություն, տարածք, վեճ, փոխզիջում:

Levon Asatryan

*National Research University
Higher School of Economics, RF, Post Graduated*

TERRITORIAL DISPUTES IN NORTHEAST ASIA

Abstract: Currently, there are several conflicts in Northeastern Asia, which are associated with the demands of two or more states on certain territories. In addition, even if one of the parties refuses to accept the existing dispute, the problem does not disappear and continues to affect relations between the countries. Existing problems are constantly interrupt the stabile inter-state dialogue in all areas. Compromise diplomacy is one of the most important issues in resolving conflicts and disputes.

Keywords: Territorial disputes, Asia, region, conflict, state, territory, dispute, compromise.

Դավիթ Հախվերդյան

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
dhakhverdyan@yahoo.com*

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՄՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Համառոտագիր. Հոդվածի շրջանակներում հեղինակը նպատակադրվել է հիմնավորել այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտան ԵՄՏՄ երկրներին իրականացնել առավել ներդաշնակ և միասնական հարկային քաղաքականություն: ԵՄՏՄ երկրներում ուղղակի հարկերի ներդաշնակեցումն ունի առավել փոքր իրավական բազա, քան անուղղակի հարկերի ներդաշնակեցումը: ԵՄՏՄ յուրաքանչյուր երկրի շահերից ելնելով՝ անհրաժեշտ է վարել գրագետ ֆիսկալ քաղաքականություն՝ ուղղված միասնական տնտեսական տարածքի շրջանակներում հարկային համակարգերի մերձեցմանն ու կոնսոլիդացմանը: ԵՄՏՄ մակարդակով դեռ վաղ է խոսել միասնական հարկային քաղաքականության մասին, սակայն հոդվածում որպես օրենսդրական ներդաշնակեցման եղանակներ առանձնացվում են տերմինաբանության միասնականացումը, հարկման բազայի ձևավորման մեթոդաբանության միասնականացումը, ինչպես նաև հարկային դրույքաչափերի միասնական մոտեցումների մշակումը:

Բանալի բառեր. ԵՄՏՄ, ուղղակի հարկեր, շահութահարկ, եկամտային հարկ, դրույքաչափ, հարկման բազա, ներդաշնակեցում

Միջպետական միավորումների ցանկացած ձևի դեպքում հարկման համակարգը և դրան համապատասխան հարկային հաշվառման ենթահամակարգը առանձնահատուկ են յուրաքանչյուր երկրի համար: Անհրաժեշտ է հաշվի առնել հարկային և ֆինանսական օրենսդրությունների ազգային առանձնահատկությունները:

ԵՄՏՄ անդամ-երկրները տարբեր են պետական տարածքային կառուցվածքով, այդ պատճառով իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է իրականացվի տարբեր մակարդակներով: Բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը յուրաքանչյուր երկրում տարբեր է: Տարբեր են նաև «հարկային հաշվառում» հասկացության վերաբերյալ մոտեցումները:

Հարկման սկզբունքները յուրաքանչյուր երկրում ամրագրված են օրենսդրորեն և, ընդհանուր առմամբ, համանման են: Սակայն ԵՄՏՄ միասնական տնտեսական տարածքում հարկման գերակշռող սկզբունքը պետք է դառնա միանգամյա հարկման սկզբունքը: Հարկավոր է հաշվի առնել, առաջին հերթին, հարկային սուբյեկտների շահերը, որպեսզի նրանք խուսափեն ավելորդ հարկային բեռից, դրանով իսկ բարձրացնելով ներդրումային գրավչությունը և նվազագույնի հասցնելով կապիտալի արտահոսքը (փախուստը):

ԵՄՏՄ յուրաքանչյուր երկրի շահերից ելնելով՝ անհրաժեշտ է վարել գրագետ ֆիսկալ քաղաքականություն՝ ուղղված միասնական տնտեսական տարածքի շրջանակներում հարկային համակարգերի մերձեցմանն ու կոնսոլիդացմանը: Ինտեգրվող երկրների հարկային քաղաքականությունը անդամերկրների շարունակական գործողություններն են՝ ուղղված

նոր հարկային համակարգի ստեղծմանը, որը հաշվի կառնի յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններն ու ազգային շահերը, կապված հարկային մեխանիզմների օգտագործման և հարկային համակարգերի գործնական կիրառման և նրա արդյունավետության վերահսկողության հետ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել անդամ-երկրների միջև պատմականորեն ձևավորված փոխգործակցության առանձնահատկությունները¹:

ԵԱՏՄ երկրների հարկային համակարգերի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

	Բելառուս	Հայաստան	Ղազախստան	Գերմանիա	Գրաստիա
PwC վարկանիշում աշխարհի ամենահարմար հարկային համակարգերում զբաղեցրած տեղը	96-րդ (70.81)	87-րդ (72.49)	50-րդ (79.47)	151-րդ (56.55)	52-րդ (79.29)
Տարեկան հարկային վճարումների քանակը	7	14	7	51	7
Հարկերի ձևակերպման և վճարման համար անհրաժեշտ ժամանակը (ժամ՝ տարվա ընթացքում)	184	313	178	225	168
Հարկային գանձումների համախառն մակարդակը (%)	52.9	18.5	29.2	29.0	47.5

Աղյուսակ 1. ԵԱՏՄ անդամ-երկրների հարկային համակարգերը 2017թ.²

ԵԱՏՄ երկրներում ուղղակի հարկերի ներդաշնակեցումն ունի առավել փոքր պայմանագրաիրավական բազա, քան անուղղակի հարկերի ներդաշնակեցումը³: ԵԱՏՄ մակարդակով դեռ վաղ է խոսել միասնական հարկային քաղաքականության մասին, ընդ որում, ԵԱՏՄ մասին համաձայնագրում անդամերկրների կողմից հարկային քաղաքականության բնագավառում համակարգված կամ համաձայնեցված քաղաքականության իրականացման վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ և ԵԱՏՄ լիազորություններն այս բնագավառում որոշակի չեն⁴:

Մի կողմից, պետք է դրվի անդամ-երկրներում ուղղակի հարկման օրենսդրության նորմատիվ-իրավական ակտերի աստիճանական ճշգրտման և նույնականացման խնդիրը⁵: Մյուս կողմից, ուղղակի հարկման նույնականացումը տեղի է ունենում առավել դանդաղ, առկա են փոխզիջման հետ կապված որոշ դժվարություններ, քանի որ ուղղակի հարկերը երկրի տնտեսության հետ ունեն առավել սերտ կապ⁶:

Դրա հետ մեկտեղ, ուղղակի հարկերը կապված են ԵԱՏՄ երկրների բյուջետային քա-

1. А.Г.Казакова; Налоговая политика государств при интеграции стран-участниц в Евразийский экономический союз; Вестник государственного университета управления, №1, 2015; стр. 189-197.
 2. Աղբյուրը՝ <https://www.pwc.com/gx/en/services/tax/publications/paying-taxes-2018.html>
 3. К.А.Пономарева; Направления гармонизации налогообложения прибыли и доходов в Евразийском экономическом союзе, Вестник Омского университета. Серия«Право». 2017. №3 (52). С. 47–54.
 4. Реут А. В. Компетенция Евразийского экономическогосоюза (ЕАЭС)всференалого-обложения//Финансовоеправо. – 2015. – №3. – С. 32.
 5. Захарова О.О. Налоговая гармонизация как неотъемлемая часть общеэкономических интеграционных процессов в государствах-членах Евразийского экономического союза / О.О. Захарова // Молодой ученый. – 2016. – №11. – С. 753.

նաքականության հետև և անմիջական ազդեցություն են ունենում տնտեսվարող սուբյեկտի գրանցման և գործունեության իրականացման վայրի ընտրության, ինչպես նաև այս կամ այն երկրում ներդրումներ կատարելու որոշման ընդունման վրա: Այդ կապակցությամբ ԵԱՏՄ երկրներում շահութահարկի, եկամտային հարկի և գույքային հարկերի համաձայնեցման անհրաժեշտություն է առաջանում՝ դրանց բարեփոխման նպատակներով:

Շահութահարկի բաժինը ԵԱՏՄ երկրների հարկային եկամուտներում կազմում է 5.2%-ից (Ղրղզստան) մինչև 22.9% (Ղազախստան): Գործալացման գործընթացն ու դրույքաչափերի նվազեցմամբ հարկային մրցակցության միջոցով ներդրումների ներգրավման երևույթը բավականին տարածված է և ապացուցված է մի շարք հետազոտություններով⁷:

Շահույթից հարկման ներդաշնակեցումը պետք է հավասար պայմաններ ստեղծի ԵԱՏՄ շրջանակներում գործող բոլոր կազմակերպությունների համար, հեշտացնի դրանց մուտքը ԵԱՏՄ ներքին շուկա, ինչպես նաև ակտիվացնի ՕՈՒՆ-երը այդ ինտեգրացիոն միավորման շրջանակներում: Շահութահարկի մասով անհրաժեշտ է նույնականացնել համախառն տարեկան եկամտի ձևավորման մեթոդիկան, նախատեսել համախառն եկամտի հետագա ճշգրտումը, որոշել ծախսերի նվազեցման ու հարկվող եկամտի որոշման կարգը, ինչպես նաև վնասների դուրսգրման և բյուջե վերջնական վճարման շահութահարկի խնդիրը⁸:

ԵԱՏՄ շրջանակներում շահութահարկի հարկման պայմանների և դրույքաչափերի համաձայնեցումը բացակայում է և երկկողմանի համաձայնագրերի առարկա է: Այդուհանդերձ, ԵԱՏՄ երկրներում շահութահարկի դրույքաչափերի ուսումնասիրությունը որոշակի համանմանություն է ցույց տալիս: Մասնավորապես՝ ՌԴ-ում, Ղազախստանում և Հայաստանում այն 20% է, Ղրղզստանում՝ 10% (տե՛ս աղյուսակ 2): Նմանություններ կան նաև դրույքաչափերի նվազեցման համար հարկման բազայում: Այսպես, գործունեության հիմնական տեսակները, որոնց համար կիրառվում է շահութահարկի նվազեցված դրույքաչափը, համարվում են գյուղատնտեսական արտադրությունը, բարեգործությունը, բարձրտեխնոլոգիական և ներդրումային նախագծերի իրականացումը: Ընդ որում, Ռուսաստանում, Բելառուսում, Հայաստանում և Ղրղզստանում գյուղատնտեսական գործունեությունից ստացված շահույթը հարկվում է 0-ական դրույքաչափով, Ղազախստանում՝ 10%-ով:

ԵՄ-ում շահութահարկի դրույքաչափը բավականին դիվերսիֆիկացված է և տատանվում է 0%-ից (Սլովենիա, Չեխիա) մինչև 44.03% (Փրանսիա): Կիրառվում է հարկման ինչպես համահարթեցված, այնպես էլ պրոգրեսիվ սանդղակը: Ընդ որում, վերջինս փոփոխվում է ոչ միայն գործունեության ոլորտից կախված, այլև ստացված եկամտի չափից: Ակնհայտ են նաև ԵԱՏՄ երկրներում շահութահարկի ցածր դրույքաչափերը ոչ միայն ԵՄ երկրների, այլև համաշխարհային միջին դրույքաչափի համեմատությամբ: Այսպես՝ ԵՄ երկրներում շահութահարկի միջին դրույքաչափը կազմում է 22.25%, աշխարհում՝ 23.68%, իսկ ԵԱՏՄ-ում՝

6. Мамаева А.А. К вопросу унификации налогообложения в Евразийском экономическом союзе; (Теория и практика современной юридической науки. / Сборник научных трудов по итогам международной научно-практической конференции. № 4 . г. Самара, 2017. 110 с.)

<http://izron.ru/articles/teoriya-i-praktika-sovremennoy-yuridicheskoy-nauki-sbornik-nauchnykh-trudov-po-itogam-mezhdunarodnoy-sektsiya-10-administrativnoe-pravo-finansovoe-pravo-informatsionnoe-pravo/k-voprosu-unifikatsii-nalogooblozheniya-v-evraziyskom-ekonomicheskom-soyuze/>

7. Gropp K., Kostial K. FDI and corporate tax revenue: Tax harmonization or competition?

<http://www.imf.org/external/pubs/ft/fandd/2001/06/gropp.htm/>.

8. В.Л.Коротина, М.С.Жверанцева, Э.Р.Каримова; Развитие процессов евразийской интеграции под воздействием налоговых механизмов; Известия Саратовского ун-та. Нов. сер. Сер. Экономика. Управление. Право. 2013. Т. 13, вып. 3(1), с. 294-299.

9. Е.Петросян; Пути гармонизации систем налогообложения в странах евразийского экономического союза; Экономическая политика. 2016. Т. 11. № 6. С. 237.

Երկիրը	Ընդհանուր դրույքաչափը (%)	Հարկման բազան նվազեցված դրույքաչափի կիրառման համար	Նվազեցված դրույքաչափ (%)
Ռուսաստան	20	Բժշկական և կամ կրթական գործունեություն ծավալող կազմակերպությունների շահույթ, գյուղատնտեսության և ձկնաբուծության ոլորտների շահույթ, տարածաշրջանային ներդրումային նախագծերի մասնակիցների շահույթ	0
Ղազախստան	20	Գյուղատնտեսական գործունեությունից ստացված շահույթ	10
Բելառուս	18	Բարձրտեխնոլոգիական ապրանքների արտադրությունից շահույթ, ինչպես նաև ԲՀ նախագահի կողմից հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների և ծառայությունների արտադրությունից շահույթ	12
		Լազեր-օպտիկական տեխնիկայի արտադրություն (լրացուցիչ պայմանների առկայության դեպքում)	10
		Բելառուսի պետական համալսարանի կողմից ստեղծված գիտատեխնիկական ասոցիացիայի անդամների շահույթը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների իրացման և դրանց մշակման ծառայությունների մասով	5
		Գյուղատնտեսական գործունեությունից ստացված շահույթ, նորարարական ապրանքների արտադրությունից և վաճառքից ստացված շահույթ	0
Հայաստան	20	Գյուղատնտեսական գործունեությունից ստացված շահույթ	0
Ղրղզստան	10	Գյուղատնտեսական գործունեությունից ստացված շահույթ, բարեգործական կազմակերպությունների, վարկային միությունների շահույթ և այլն:	0

Աղյուսակ 2. Շահութահարկի դրույքաչափերը ԵԱՏՄ երկրներում⁹

17.6%: Առանձնահատուկ է նաև ԵԱՏՄ երկրներում շահութահարկի հարկման բազան: Բելառուսում դա ապրանքների ու ծառայությունների իրացումից համախառն հասույթն է, իսկ ԵԱՏՄ մյուս երկրներում՝ զուտ հասույթը, որը հաշվարկվում է որպես եկամտի ու օրենսդրությամբ սահմանված ծախսերի տարբերություն:

Շահութահարկի մուտքերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ԵԱՏՄ երկրներում 2014 թվականին կազմել է 2.4%, որը համընկնում է ԵՄ համանուն ցուցանիշի հետ: Այդ ցուցանիշի ամենաբարձր մակարդակը դիտարկվել է ՌԴ-ում և Ղազախստանում՝ համապատասխանաբար՝ 3% և 2.9%, ամենացածրը՝ Ղրղզստանում՝ 1.1.%: Ղրղզստանում շահութահարկի մուտքերը համախառն հարկային մուտքերի մեջ կազմել են ընդամենը 5.2%, որը հիմնականում պայմանավորված է տվյալ հարկի ցածր դրույքաչափով¹⁰:

Եկամտային հարկերը ԵԱՏՄ-ում: Եկամտահարկը ԵԱՏՄ երկրներում գանձվող կարևորագույն հարկատեսակներից մեկն է, որի հաշվին ապահովվում է այդ երկրների համախառն եկամուտների ավելի քան 15,8%-ը: Սակայն, ի տարբերություն անուղղակի հարկման, ուղղակի հարկման դաշտում ԵԱՏՄ երկրներում իրավահարաբերությունների կարգավորման որևէ լուրջ քայլ արված չէ: Մասնավորապես, ԵԱՏՄ համաձայնագրում ներառված միակ սկզբունքը, որը վերաբերում է ֆիզիկական անձանց հարկմանը, խտրականության բացառման սկզբունքն է: Այլ իրավահարաբերությունները կարգավորվում են երկկողմանի համաձայնագրերի միջոցով: Ինչպես ցույց են տալիս Ադյուսակ 3-ի տվյալները, ԵԱՏՄ անդամերկրների ռեզիդենտների համար եկամտային հարկի դրույքաչափերը սահմանվում են տվյալ երկրում կնքված աշխատանքային պայմանագրին համապատասխան: Եկամտային հարկի դրույքաչափը տատանվում է 10%-ից (Ղազախստան, Ղրղզստան) մինչև 36% (Հայաստան): ՌԴ-ում և Բելառուսում ստանդարտ դրույքաչափը կազմում է 13%:

Ի տարբերություն ԵՄ երկրների, որտեղ մեծամասամբ կիրառվում է հարկման պրոգրեսիվ սանդղակը, ԵԱՏՄ երկրներում նման սկզբունքով հարկվում են միայն Հայաստանում, որտեղ սանդղակը ներառում է երեք տարբեր դրույքաչափեր¹¹: ԵԱՏՄ մնացած երկրներում կիրառվում է համահարթեցված հարկումը: Ի դեպ, նման սանդղակ ԵՄ երկրներից գործում է Բուլղարիայում, Հունգարիայում, Չեխիայում, Լատվիայում և Լիտվայում:

Ի տարբերություն ԵՄ երկրների, որտեղ եկամտային հարկի դրույքաչափը կախված է ֆիզիկական անձի եկամտի մակարդակից, ԵԱՏՄ երկրներում դրույքաչափերը տարբերվում են ըստ գործունեության տեսակների: Փաստացիորեն, ԵԱՏՄ անդամ-երկրները ամբողջությամբ ինքնավար են հարկային բազայի, դրույքաչափերի, հարկվող եկամտի տեսակների, հարկման սուբյեկտների և այլ հարցերի ընտրության հարցում, որոնք որոշվում են պետության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ:

Ֆիզիկական անձանցից գանձվող եկամտային հարկերի օրենսդրության ներդաշնակեցումը կապված է հարկման օբյեկտի նկատմամբ տարբեր մոտեցումների, ինչպես նաև կիրառվող դրույքաչափերի և հարկման շեմերի բազմազանության հետ: Անհրաժեշտ է որոշել հարկվող եկամուտների միասնական ցանկը, սահմանել ֆիզիկական անձանց եկամուտներից գանձվող հարկերի միասնական պրոգրեսիվ սանդղակը և դրանց կիրառման կարգը տվյալ երկրի ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների նկատմամբ¹²:

Եկամտային հարկերի մուտքերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2014թ. ԵԱՏՄ-ում միջինը կազմել է 3.4%, որը համարյա երեք անգամ փոքր է ԵՄ համանման ցուցանիշից (9.5%): ԵԱՏՄ այդ ցուցանիշը բավականին համադրելի է Բուլղարիայի, Չեխիայի, Ռումինիայի,

10. Е.Петросян; Пути гармонизации систем налогообложения в странах евразийского экономического союза; Экономическая политика. 2016. Т. 11. № 6. С. 222–241.

11. Համաձայն շրջանառության մեջ դրված նախագծի՝ Հայաստանը նույնպես նախատեսում է անցում կատարել Եկամտային հարկի՝ հիմնականում համահարթեցված տարբերակի:

12. В.Л.Коротина, М.С.Жверанцева, Э.Р.Каримова; Развитие процессов евразийской интеграции под воздействием налоговых механизмов; Известия Саратовского ун-та. Нов. сер. Сер. Экономика. Управление. Право. 2013. Т. 13, вып. 3(1), с. 294-299.

Երկիրը	Ընդհանուր դրույքաչափը (%)		Հարկման բազան նվազեցված դրույքաչափի կիրառման համար	Նվազեցված դրույքաչափ (%)
Ռուսաստան	13		Հիպոթեքային մարումների գծով հավատարմագրային կառավարման հիմնադիրների եկամուտներ և այլն:	9
			Մրցույթներում ստացած պարգևների և շահումների արժեքը, գովազդի նպատակով իրականացվող խաղերի և այլ միջոցառումներից ստացված եկամուտը՝ սահմանված չափը գերազանցած գումարի մասով: Բանկային ավանդներից տոկոսային եկամուտները՝ սահմանված չափը գերազանցած գումարի մասով և այլն:	35
Ղազախստան	10		-	-
Բելառուս	13		Ձեռնարկատերերի, մասնավոր նոտարական գործունեության համար	12
			Անհատ ձեռնարկատերերի, բարձր տեխնոլոգիաների պարկի ռեզիդենտների համար և այլն:	10
Հայաստան	Մինչև 289 ԱՄՆ դոլար	24	-	0
	289 ԱՄՆ դոլարից մինչև 4817 ԱՄՆ դոլար	70.52 ԱՄՆ դոլար, գումարած 289 ԱՄՆ դոլարը գերազանցող գումարի 26%-ը	-	-
	4817 ԱՄՆ դոլարից ավելի	1247.78 ԱՄՆ դոլար, գումարած 4817 ԱՄՆ դոլարը գերազանցող գումարի 36%-ը	-	-
Ղրղզստան	10		-	-

Աղյուսակ 3. Եկամտային հարկի դրույքաչափերը ԵԱՏՄ երկրներում¹³

13. Е.Петросян; Пути гармонизации систем налогообложения в странах евразийского экономического союза; Экономическая политика. 2016. Т. 11. № 6. С. 234.

Սյովակիայի և Կիպրոսի համանման ցուցանիշների հետ: Նման ցածր ցուցանիշները պայմանավորված են եկամտային հարկի ցածր դրույքաչափով և համահարթեցված սանդղակով: Եկամտային հարկ/ՀՆԱ ցուցանիշն էականորեն տարբերվում է նաև ԵԱՏՄ երկրներում 1.4%-ից (Ղազախստան) մինչև 6% (Հայաստան):

ԵԱՏՄ երկրներում ֆիզիկական անձանց եկամտային հարկի հարկային ներդաշնակեցման գնահատումը: Շուկայական տնտեսության ձևավորման շրջանակներում հետխորհրդային տարածքի բոլոր պետություններն ստեղծեցին նոր հարկային համակարգեր, որոնց մեջ հիմնական հարկերից մեկը ֆիզիկական անձանց եկամտահարկն էր, թեև այս հարկի դերը համախմբված բյուջեի եկամտային մասում ըստ երկրների տարբերվում է (տե՛ս աղյուսակ 4):

Երկիրը	Տարիներ				
	2005	2010	2012	2014	2017
Հայաստան	6.0	9.2	9.4	0.0	8.9
Բելառուս	6.1	11.0	12.2	14.6	5.2
Ղազախստան	5.9	4.8	4.7	4.3	15.9
Ղրղզստան	8.6	7.6	4.7	3.6	3.2
Ռուսաստան	8.2	11.2	9.7	10.2	5.1

Աղյուսակ 4. Ֆիզիկական անձանց եկամտային հարկի տեսակարար կշիռը ԵԱՏՄ անդամ-երկրների համախմբված բյուջեներում (%)*

Եկամտային հարկերի ներդաշնակեցման գործընթացի վերլուծության համար կարևոր է հաշվի առնել այդ հարկերի երկու բաղադրիչները՝ հարկային դրույքաչափերի և հարկման բազայի որոշման մեխանիզմների ներդաշնակեցումը: Ընդ որում, եթե ԱԱՀ-ի և ակցիզային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցումը պայմանավորված է ընդհանուր շուկայի շրջանակներում ապրանքների (ծառայությունների) ազատ տեղաշարժի ապահովմամբ, ապա ֆիզիկական անձանց եկամտային հարկի առումով այդ միտումը կապված է հարկային մրցակցության հետ: Արդյունքում, ԵԱՏՄ անդամ-երկրներում հարկային դրույքաչափերի առավել մեծ ներդաշնակեցումը ձեռք է բերվել եկամտային հարկի ասպարեզում:

ԵԱՏՄ երկրների եկամտահարկի դրույքաչափերի վերլուծությունն ըստ բացարձակ վարիացիայի 2005-2015 թթ. ժամանակահատվածի համար ցույց է տալիս ներդաշնակեցման մակարդակի բարձրացում անդամ 3 երկրներում (Բելառուս, Ղազախստան և ՌԴ), ինչպես նաև ներդաշնակեցման նվազում անդամ 5 երկրների կտրվածքով (տե՛ս աղյուսակ 5): Դա պայմանավորված էր Բելառուսում և Ղազախստանում հարկման հարթ սանդղակի օգտագործումից հրաժարմամբ (2009թ.), ինչպես նաև այդ երկրներում հետագա տարիներին դրույքաչափերի նվազեցմամբ և հարկային բաղադրիչների մերձեցմամբ:

Արդյունքում, ըստ վարիացիայի գործակցի՝ ԵԱՏՄ 5 երկրների շրջանակներում դի-

* Финансовая статистика Евразийского экономического союза. Оперативные данные за 2017 год. Статистический сборник; Евразийская экономическая комиссия. – Москва: 2018. – с. 17-18 (124) http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/finstat/Pages/dinamich.aspx

Ցուցանիշներ	2005թ.		2015թ.	
	Հինգ երկիր	Երեք երկիր	Հինգ երկիր	Երեք երկիր
Վարիացիայի բացարձակ տատանումը, %	6.8	6.8	20	3
Վարիացիայի հարաբերական տատանումը, %	0.4	0.4	1.3	0.3
Միջին գծային շեղումը	2.1	2.5	5.9	1.3
Միջին քառակուսային շեղումը	2.3	2.8	7.5	1.4
Վարիացիայի գործակիցը	0.14	0.17	0.49	0.12

Աղյուսակ 5. Ֆիզիկական անձանց եկամտային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցման մակարդակի գնահատման միջին վիճակագրական ցուցանիշների դինամիկան ԵԱՏՄ երկրներում¹⁴

տարկվող ժամանակաշրջանում ներդաշնակությունը միջին ներդաշնակից փոխվել է մինչև ներդաշնակեցման լրիվ բացակայության (տե՛ս աղյուսակ 6), իսկ 3 երկրների կտրվածքով (Բելառուս, Ղազախստան և ՌԴ) թեև պահպանվել է միջին մակարդակում, սակայն մոտեցել է ներդաշնակեցման բարձր մակարդակի վերին սահմանին՝ 0.1:

Ցուցանիշներ	2005թ.		2015թ.	
	Հինգ երկիր	Երեք երկիր	Հինգ երկիր	Երեք երկիր
Վարիացիայի հարաբերական տատանումը	Բարձր	Բարձր	Բացակայում է	Բարձր
Վարիացիայի գործակիցը	Միջին	Միջին	Բացակայում է	Միջին

Աղյուսակ 6. Ֆիզիկական անձանց եկամտային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցման մակարդակի դինամիկան ԵԱՏՄ երկրներում¹⁵

Այսպիսով, թեև ԵԱՏՄ երկրների մեծ մասում, բացառությամբ Հայաստանի, կիրառվում է եկամտահարկի հարկման «հարթ սանդղակը»՝ իրար մոտ դրույքաչափերով, այդուհանդերձ, պահպանվում են էական տարբերությունները, որը բնութագրում է ներդաշնակեցման աննշան մակարդակը որակական ցուցանիշների տեսանկյունից:

Դրա հետ մեկտեղ, ներդաշնակեցման բարձր մակարդակ է դիտարկվում Բելառուսում և ՌԴ-ում, որոնք համարվում են միութենական պետության անդամներ: Ֆիզիկական անձանց եկամտահարկի համատեքստում արդարության սկզբունքը ՌԴ-ում իրացվում է առավել փոքր չափով, քան Բելառուսում և Ղազախստանում, որտեղ գործում է մասհանումների առավել ճկուն համակարգ¹⁶:

14. Ж.Г.Голодова, Ю.С.Ранчинская; Налогообложение доходов физических лиц в странах ЕАЭС: анализ параметров и направления гармонизации; Вестник РУДН, серия Экономика, 2015, № 4, С. 82.
 15. Տե՛ս նույն տեղում:
 16. Ж.Г.Голодова, Ю.С.Ранчинская; Налогообложение доходов физических лиц в странах ЕАЭС: анализ параметров и направления гармонизации; Вестник РУДН, серия Экономика, 2015, № 4, С. 79-86.

Հետագոտողները նշում են, որ օրենսդրության ներդաշնակեցման գործընթացում, որպես կանոն, ենթադրվում է միջազգային պայմանագրի կնքում, որտեղ ամրագրվում են պետությունների համաձայնեցված դրույթները համագործակցության առարկայի շուրջ¹⁷:

Իրավական պրակտիկայում առավել ընդունված են ազգային օրենսդրությունների մերձեցման հետևյալ մոդելները.

1. միջազգային պայմանագրի կնքումը, որը բոլոր պետությունների կողմից վավերացվելուց հետո կունենա պարտադիր իրավական ուժ բոլոր անդամ-երկրների համար:

2. Մոդելային օրենքների ընդունումը, որոնք, չհամարվելով իրավաբանորեն պարտադիր իրավական ակտեր, ինտեգրացիոն միավորման անդամ-երկրների համար կրում են հրահանգչական, խորհրդատվական բնույթ¹⁸:

Որպես օրենսդրական ներդաշնակեցման եղանակներ առանձնացվում են հետևյալները.

- տերմինաբանության միասնականացում,
- հարկման բազայի ձևավորման մեթոդաբանության միասնականացում,
- հարկային դրույքաչափերի միասնական մոտեցումների մշակում:

ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրությունների վերլուծությունը թույլ է տալիս կատարել որոշակի եզրահանգումներ.

1. ուղղակի հարկերի հիմնական դրույթների ներդաշնակեցման և միասնականացման հիմնական խնդիրներն են՝ տերմինաբանական ապարատի միասնականացումն ու ԵԱՏՄ անդամ-երկրների համար հարկման բազայի ընդհանուր մեթոդաբանության սահմանումը:

2. ԵԱՏՄ անդամ-երկրների հարկային օրենսդրությունների մերձեցման հիմքը ԵԱՏՄ մասին համաձայնագիրն է, որտեղ կողմորվում են նախկինում կնքված համաձայնագրերը, ինչպես նաև ներմուծված են նոր, սկզբունքորեն կարևոր նորմեր (խտրականության բացառման, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման մասին և այլն):

3. ԵԱՏՄ անդամ-երկրների հարկային օրենսդրությունների ներդաշնակեցման և միասնականացման ընթացքում նպատակահարմար է մշակել ԵԱՏՄ օրենսդրության հիմունքները, հաշվի առնելով նաև արդեն իսկ մշակված ԵԱՏՄ հարկային օրենսդրության հիմունքների հայեցակարգի դրույթները:

17. А. В. Габов, А. А. Каширкина, В. Ю. Лукьянова и др. Правовые проблемы формирования межгосударственных объединений (на примере зоны свободной торговли Таможенного союза (ЕврАзЭС): монография/; под. ред. В. Ю. Лукьяновой. – М.: Анкил, 2012.

18. Реут А. В. Компетенция Евразийского экономического союза (ЕАЭС) в сфере налогообложения // Финансовое право. – 2015. – №3. – С. 32.

Դավիդ Ախվերյան

*Кафедра Международных экономических отношений АГЭУ,
доктор экономических наук, профессор*

ПРОБЛЕМЫ ГАРМОНИЗАЦИИ ПРЯМЫХ НАЛОГОВ В РАМКАХ ЕАЭС

Аннотация: В рамках статьи автор намеревается обосновать те механизмы, которые дадут возможность странам ЕАЭС осуществлять более гармоничную и единую налоговую политику. В странах ЕАЭС гармонизация прямых налогов имеет более ограниченную нормативную базу, чем гармонизация косвенных налогов. Исходя из интересов каждой страны ЕАЭС, нужно проводить грамотную фискальную политику, направленную на сближение и консолидацию налоговых систем в рамках единого экономического пространства. На уровне ЕАЭС пока рано говорить о единой налоговой политике, но в качестве форм законодательной гармонизации в статье отмечаются: унификация терминологии и методологии формирования базы налогообложения, а также обработка единых подходов по налоговым ставкам.

Ключевые слова: ЕАЭС, прямые налоги, налог на прибыль, подоходный налог, налоговая ставка, база налогообложения, гармонизация,

Davit Hakhverdyan

*Chair of International Economic Relations at ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor*

PROBLEMS OF HARMONIZATION OF DIRECT TAXES IN THE FRAMEWORK OF THE EAEU

Abstract: In the frames of the article, the author intended to justify the mechanisms that enable the EAEU countries to implement more harmonious and integrated taxation policy. In the EAEU countries, the harmonization of direct taxes has a more restricted normative base than the harmonization of authentic taxes. Based on the interests of EAEU each country, it is necessary to conduct a competent fiscal policy aimed at rapprochement and consolidation of tax systems within the common economic space. At the level of the EAEU, it is still early to talk about a unified tax policy, but harmonization of terminology and unification of the tax base formation methodology, as well as the development of common approaches on tax rates are highlighted in the article as forms of legislative harmonization.

Keywords: EAEU, direct taxes, profit tax, income tax, tax rate, taxation base, harmonization.

Լևոն Քոչարյան

ՀՊՏՀ բանկային գործ
և ապահովագրության ամբիոն, ապաիրանտ
levonkocharyan@outlook.com

ՀՀ-ԻՆ ԲՆՈՐՈՇ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՅԴ ՌԻՍԿԵՐԻ ՉՍՊՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄ

Համառոտագիր. Գյուղատնտեսությունը համարվում է ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: 2018թ.-ի ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 6,002,747,800,000 ՀՀ դրամ, որից 926,360,500,000 ՀՀ դրամը, կամ ՀՆԱ 15.4%-ը կազմել է գյուղատնտեսությունը : Այն ՀՀ ամենախոցելի, «ամենափխրուն» և ֆորս մաժորային իրավիճակներին ամենաշատը ենթարկվող ոլորտն է: Գրեթե բոլոր տեսանկյուններից, ներառյալ պարենային անվտանգության, զբաղվածության, սոցիալական, սպառողական, և այլն, գյուղատնտեսությունը կարելի է Հայաստանի համար ամենակարևոր ոլորտներից մեկը համարել: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ապահովել նրա կայուն զարգացումը և այն պաշտպանել ռիսկերից: Սույն հոդվածում կբացահայտենք Հայաստանին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը, դրանց զսպման մեխանիզմները, և կքննարկենք ապահովագրության դերը այդ ռիսկերի մեղմման մեջ:

Բանալի բառեր. ապահովագրություն, գյուղատնտեսություն, ռիսկեր, մշակաբույս, աղետ:

Համաձայն արտադրողների, փորձագետների և գյուղատնտեսների ներկայացրած նախնական տվյալների՝ Հայաստանում հիմնական ընկալվող ռիսկերն են կարկուտը, ցրտահարությունը, սառը հոսանքները և երաշտը:

Համաձայն ՄԱԿ Չարգացման Ծրագրի կողմից կատարված հետազոտության և ուսումնասիրության՝ ցրտահարության ժամանակ վեգետացիոն շրջանի ընթացքում օդի ջերմաստիճանը երկրի մակերևույթին մոտ կամ երկրի մակերևույթին իջնում է մինչև սառեցման վիճակի (0°C) կամ ավելի ցածր: Եղյամային ցրտահարության ժամանակ սառցաբյուրեղներ են հայտնվում օբյեկտների վրա՝ օդից ջրային գոլորշու ուղղակի սուբլիմացիայի միջոցով: «Մև ցրտահարությունը», որը տեղի է ունենում ցածր խոնավության և ցածր ջերմաստիճանի պայմաններում, սակայն առանց սառույցի ակնհայտ առաջացման, հանգեցնում է որոշ օրգանիզմների և հյուսվածքների տեսանելի մեռուկացման (նեկրոզի): Գարնանը ցրտահարությունը վնասում է նուրբ հյուսվածքները: Բազմամյա բույսերի համար ձմեռային ցրտահարությունը վնասում է բոլոր օրգանները, այդ թվում՝ արմատները - դա «սպանող ցրտահարությունն» է:

Ցրտահարությունը կամ սառչելը հանգեցնում են մշակաբույսի վնասման, որովհետև ջերմաստիճանը նվազում է բույսի դիմացկունության աստիճանից ցածր: Այս երևույթը

1. https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf

2. Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար, Պատվիրատու՝ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում» ՄԱԶԾ-ՃԿՎԲ Ծրագիր, Հեղինակ՝ Կեմանու Տատեն-ժալերան:

հիմնականում տեղի է ունենում, երբ ջերմաստիճանը իջնում է մինչև 0°C-ին մոտ կամ գիշերային սառցակալման դեպքում (ռադիացիոն ցրտահարություն) կամ՝ ավելի սառն օդային զանգվածների տեղաշարժման և ազդեցության դեպքում: Կլիմայական այսպիսի «աղետների» ի հայտ գալը այնպիսի ժամանակահատվածում, երբ բույսերը դիմացկուն չեն (վաղ կամ ուշ ձմռանը և վաղ գարնանը, վաղ աշնանը), և բույսերի հյուսվածքները կարող են վնասվել ցրտահարությունից, պատճառում են ահռելի վնասներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ոչ միայն տվյալ տարվա բերքի, այլև հետագա 2-3 տարիներին սպասվելիք բերքի վրա: Բույսերի բջիջները սառչում են և անդամալիորեն վնասվում:

Ցրտահարության դեմ հնարավոր է պայքարել ակտիվ և պասիվ եղանակով: Ըստ ՄԱՁԾ հետազոտության՝ մինչև ակտիվ միջոցները (տաքացուցիչների կամ ցնցուղների կիրառում) պահանջում են էներգիայի սպառում և կարող են ծախսատար լինել, պասիվ մեթոդները կարող են կիրառության և հարմարեցման առումով լինել ավելի ծախսարդյունավետ և դիտարկվել որպես ապահովագրության հետ համադրաբար կիրառելի միջոցներ: Պասիվ միջոցները ներառում են տեսակների ընտրությունը՝ ֆենոլոգիական դիտարկումների ժամանակի համաձայնեցման համար, բերքի տարածքի ընտրությունը, լանդշաֆտի և միկրոկլիմայի փոփոխությունը, սնուցման կարգավիճակի վերահսկումը և հողերի կառավարման զարգացման խթանումը ռիսկի մեղմման նպատակով: Այսպիսով՝ ցրտահարության որոշ երևույթներ կարող են կանխատեսվել և ակնկալելի լինել:

Հաշվի առնելով ցրտահարության հնարավոր երևույթի և ազդեցության բազմազանությունը՝ ապահովագրության նպատակով ցրտահարության սահմանումը կարող է խնդրահարույց լինել: Ապահովագրության ծածկույթի, հնարավոր ծախսերի և պրոդուկտի տեսակի առումով կարիքները գնահատելու նպատակով անհրաժեշտ են ցրտահարման ռիսկերի վերաբերյալ հավելյալ տվյալներ և քարտեզագրում՝ ըստ մարզերի ու բերքի տեսակի:

Որպես կանոն՝ ցրտահարության ապահովագրությունը ամենադժվար և ամենաթանկն է՝ ի տարբերություն կարկուտի և վնասների այլ տեսակների: Ցրտահարությունը հիմնականում ընդգրկում է ավելի մեծ տարածքներ, պատճառում է ավելի մասշտաբային վնասներ, իսկ գյուղացին և ապահովագրական ընկերությունները հայտնվում են ավելի խոցելի վիճակում: Ցրտահարության ռիսկերի ապահովագրության ամենապրակտիկ ռիսկը «Գարնանային ցրտահարություն» ռիսկն է, քանի որ ձմռան ցրտահարությունը դուրս է ապահովագրության սկզբունքներից՝ կանխատեսելի լինելու պատճառով: Ցրտահարությունը ավելի անկանխատեսելի է և ավելի շատ վնասներ է հասցնում գարնանը, հետևաբար, ակտուալ է հենց գարնանային ցրտահարության ռիսկը:

Կարկուտը ի հայտ է գալիս ամպրոպաբեր ամպերի առկայության պայմաններում, ամպրոպների և մթնոլորտային անկայունության ժամանակ: Երբ օդը խոնավ է և անկայուն՝ օդի դեպի վեր շարժման առկայությամբ, ջրի կաթիլները, բախվելով տաք շերտերին, սառչում են և կազմավորում կարկտահատիկներ: Կարկտի հատիկները չափով կարող են լինել մի քանի մմ կամ մի քանի սմ, սովորաբար՝ 5-ից մինչև 50 մմ: Որքան մրրիկի ժամանակ ավելի ուժեղ է օդի շարժը դեպի վեր, այնքան ավելի խոշոր են կարկտահատիկները: Երբ դրանք թափվում են ամպերից, կարող են հասնել վայրկյանում ինը մետր արագությունից (մ/վ) (մեկ սմ կարկտահատիկ) մինչև 48 մ/վ արագության (ութ սմ կարկտահատիկներ):

Կարկուտի ազդեցությունը բերքի վրա կարող է ավերիչ լինել: Բերքը կարող է ամբողջովին (100%-ով) վնասվել: Վնասի աստիճանը կախված է ուժգնությունից և այն բանից, թե արտադրության ցիկլի որ փուլում է կարկուտը տեղում:

- վաղ սեզոնին որոշ մրգեր կարող են թափվել կամ հարվածներ ստանալ. այդուհան-

դերձ, եթե որոշ մրգեր վնասվում են, որոշ բողբոջներ հնարավոր է դեռևս կարողանան ստեղծել այլ պտուղներ (փոխհատուցող ան): Այդ դեպքում բերքը կարող է լինել սպասվածից ցածր.

- վաղ ամռանը, երբ միրգն ու բանջարեղենը դեռ հավաքված չեն, ամբողջ բերքը կարող է կորսվել.

- ուշ ամառային փոթորիկների ժամանակ շատ խոցելի են նաև խաղողի այգիները:

Եթե մրգերն ու բանջարեղենը վնասվում են կարկուտից, դրանց որակը և, հետևաբար, զինը, հնարավոր է ավելի ցածր լինի՝ նվազեցնելով արտադրողի եկամուտը: Ավելին, կարկուտի հարվածած ծառերը կարող են ավելի ենթակա լինել վնասատուների և հիվանդությունների, քանի որ կարկուտի ծեծած կետերը կարող են հիվանդությունների ներթափանցման ուղիներ դառնալ: Կարկուտի ազդեցությունը կարող է գնահատվել տեսողական ճանապարհով, եթե ազդեցության գործոնները փաստաթղթերով արձանագրված են մասնագետ գյուղատնտեսների կողմից:

Հայաստանում կարկտահողմերը տեղի են ունենում շոգ սեզոնին՝ մայիսից օգոստոսը նկատ ժամանակահատվածում: Կարկուտ առավել հաճախ դիտարկվում է մայիս-հունիս ժամանակահատվածում, իսկ խոշոր հատիկներով՝ հուլիս-օգոստոսին: Կարկուտներն առավել հաճախակի են Ծիրակում, Լոռիում, Տավուշում, Արագածոտնի բարձրադիր գոտիներում, Գեղարքունիքում և Կոտայքի լեռնային գոտիներում, միջինը՝ տարեկան 4-5 դեպք: Հովտային գոտիներում կարկուտի հաճախականությունն ավելի ցածր է՝ տարեկան 1-2 անգամ:

Կարկուտի կանխարգելման հարցում ամենակիրառելի ձևերը ամպերի ցրման և հակակարկտային կայանների կիրառումն է, սակայն դրանց արդյունավետության վերաբերյալ սպացուցված տվյալներ չկան: Արտադրողները կարող են կիրառել հակակարկտային ցանցեր, եթե պաշտպանության միջոցառումներում ներդրում կատարելը հանգեցնում է ավելի մեծ ծախսարդյունավետության, քան ժամանակակից պտղատու և խաղողի այգիների դեպքում ռիսկը փոխանցելը: Որակյալ ցանցերը շատ հաճախ կարկուտի ռիսկը նվազեցնում են մինչև 100% :

Կարկուտի ռիսկը ապահովագրության տեսանկյունից ամենապրակտիկն է և կիրառելի: Կարկուտի հետևանքներն ավելի հեշտ են երևում, կարկուտի վնասներն ավելի հեշտ են գնահատվում: Կարկուտը դիսկրետ է, տեսանելի և շոշափելի՝ ի տարբերություն ցրտահարության և երաշտի: Հետևաբար, այն ապահովագրողների կողմից ապահովագրության ենթակա ամենա «ցանկալի» ռիսկն է՝ չնայած դրա պատճառած ահռելի վնասների: Կարկուտի ապահովագրության սակագներն ավելի ցածր են, իսկ վնասների կարգավորման ծախսերը՝ մատչելի:

Գյուղատնտեսության դեպքում երաշտը հետևանք է օդերևութաբանական (կամ հիդրոլոգիական) տարբեր իրավիճակների՝ տեղումների սակավություն, փաստացի և հնարավոր գոլորշիացման ու տրանսպիրացիայի միջև տարբերություններ, հողի խոնավության դեֆիցիտ, ստորերկրյա ջրերի կամ ջրամբարների մակարդակի նվազում, և դրա ազդեցություններն անմիջապես չեն տեղի ունենում: ՀՕԿ զեկույցում փորձագետն ընդգծում է, որ. *«Երաշտը պետք է դիտարկվի կոնկրետ տարածքում տեղումների և գոլորշիացման ու տրանսպիրացիայի հավասարակշռության միջին երկարաժամկետ պայմանների հետ համեմատությամբ: Դա կապված է նաև ժամանակի հետ (ի հայտ գալու գլխավոր սեզոնը, անձրևների սեզոնի մեկնարկի ուշանալը, անձրևների հայտնվելը՝ կապված բերքի անի հիմնական փուլերի հետ) և անձ-*

րևների արդյունավետությունը (այն է՝ անձրևների ինտենսիվությունը, անձրևելու երևույթների քանակը)»:

ՀՀ-ում սովորաբար երաշտ է արձանագրվում հուլիս-սեպտեմբեր ամիսներին, բայց լինում են գարնանը և աշնանը: Մեծամասամբ երևույթը նկատվում է Արարատյան դաշտավայրում և երբեմն՝ Արարատի նախալեռնային հատվածում, Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում:

ՀՀ-ն վերջին շրջանում ականատես է եղել երաշտի 2 մասշտաբային դեպքի՝ 2000 և 2006 թվականներին երաշտ է գրանցվել Հայաստանի ողջ տարածքում՝ նույնիսկ ծովի մակերևույթից 3,000 մ բարձրությամբ տարածքներում: Երաշտի հաճախականությունը մոտավոր հաշվարկներով կարող է լինել 2-4 տարին մեկ անգամ. ավելի կոնկրետ տվյալների համար անհրաժեշտ են ավելի շատ մանրամասներ: Երաշտի սահմանումը ապահովագրության նպատակով կարող է, այսպիսով, խնդրահարույց լինել, և Հայաստանում այս ռիսկի վերաբերյալ տեղեկություններ և հետազոտություններ ավելի սակավ են հանդիպում, քան այլ ռիսկերի դեպքում:

Երաշտի ապահովագրությունը ավելի բարդ և համապարփակ միջոցառում է, քանի որ դժվար է հաստատել պատճառահետևանքային կապը վնասի և երաշտի միջև:

Որպես ամփոփում նշենք, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության հարցում կարևոր են հետևյալ 2 կետերը.

1. Հստակ բացահայտել վնասի առաջացման պատճառը՝ կարկուտ է, երաշտ, թե հիվանդություն, վարակ: Ծառ հաճախ ցրտահարության և վարակի ֆիզիկական ախտանիշները իրար նման են, և միայն պրոֆեսիոնալ գյուղատնտեսները կարող են դրանք տարանջատել:

2. Կախված հատուցման մեխանիզմից՝ որոշել վնասի հստակ չափը: Այստեղ կարևոր է իմանալ, թե որն ենք համարում վնաս՝ մինչև բերքի վնասը ծախսած գումարները, թե ապագայում վաճառվելիք բերքի շուկայական արժեքը, կամ հետագայում նմանատիպ բերք ստանալու համար անհրաժեշտ ծախսերը:

Ուսումնասիրելով ՀՀ կլիմային հատուկ գյուղատնտեսական ռիսկերը՝ կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը մեր երկրում ներդնելը բարդ և երկարաժամկետ պրոցես է՝ հաշվի առնելով ռիսկերի հաճախականությունը, կլիմայական բազմազանությունը, վնասների մեծ չափերը, մարդկանց մեջ ապահովագրական ընկերությունների նկատմամբ անվստահությունը, վիճակագրական տվյալների պակասը և անճշտությունը և այլն: Սակայն, դիտարկելով հարևան երկրների հաջող փորձը, միանշանակ հարկ է նշել, որ ՀՀ-ում նույնպես հնարավոր է ներդնել համապարփակ ապահովագրություն գյուղացիների պաշտպանության և ռիսկերի զսպման համար:

Օգտագործված գրականություն

1. Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար, ՄԱԶԾ-ՃԿՎԲ Ծրագիր, Հեղինակ՝ Կլեմանս Տատեն-Շալերան:

2. KWF Բանկի հետազոտություն՝ Consulting Services for the Programme, ‘Agricultural Insurance Implementation in Armenia, Հունվար 2019թ.

3. Hail cover for pilot in Armenia, October 29th 2018, Michael J. McCord

4. ՀՀ Պետական վիճակագրական ծառայության տվյալներ՝ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf

Левон Кочарян

*Кафедра АГЭУ банковского дела и страхования,
аспирант*

ОСОБЫЕ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ РИСКИ В АРМЕНИИ. СТРАХОВАНИЕ, КАК МЕХАНИЗМ СНИЖЕНИЯ ЭТИХ РИСКОВ

Аннотация: Сельское хозяйство является одной из важнейших сфер экономики Армении. ВВП Армении в 2018 году составил 6 002 747 800,00 драмов, из которых 926 360 500 000 драмов или 15,4% ВВП приходится на сельскохозяйственную деятельность. Эта сфера является наиболее уязвимой и хрупкой, а также наиболее подверженной влиянию силы. Почти со всех точек зрения, включая продовольственную безопасность, трудовое, социологическое, потребительское и т. Д. Сельское хозяйство, безусловно, является наиболее важной линией экономической и социологической жизни Армении. Следовательно, возникает необходимость заботиться о стабильном развитии и защищать его от различных опасностей. Эта статья раскрывает конкретные риски в сельском хозяйстве Армении, находит механизмы смягчения и обсуждает возможность страхования контролировать риски.

Ключевые слова: страхование, сельское хозяйство, риски, сельхозкультура, бедствие.

Levon Kocharyan

*Chair of Banking and Insurance, ASUE,
Graduate Student*

SPECIFIC AGRICULTURAL RISKS IN ARMENIA. INSURANCE, AS A RISK MITIGATION MECHANISM

Abstract: PAgriculture is one of the most important spheres of Armenian economy. The GDP of Armenia in 2018 2as AMD 6,002,747,800,00, out of which AMD 926,360,500,000, or the 15.4% of the GDP is from agricultural activities. This sphere is the most vulnerable and fragile, also the most affected by force major. Almost from all points of view, including the food security, labor, sociological, customer, etc, agriculture surely is the most important line of Armenian economical and sociological life. Hence, necessity emerges to take care of stable development and keep it safe from different hazards. This article discovers the specific risks in agriculture of Armenia, find mitigation mechanisms and discuss the possibility of insurance to control the risks.

Keywords: insurance, agriculture, risks, crops, disaster.

Սոնա Կարավարդանյան

*Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի,
մեխանիկա մեքենաշինական, տրանսպորտային համակարգերի
և դիզայնի ինստիտուտ, ստայիրանտ
sona.karavardanyan@ymail.com*

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԳՐՈՂԸ

ՈՐՊԵՍ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

Համառոտագիր. Դիտարկվում են ՀՀ ազգային փոխադրողների սնանկացման պատճառները և ազդեցությունը օդային փոխադրումների զարգացման վրա: Քննարկվում է Հայաստանում տեղական ավիաընկերությունների ստեղծման հարցը, որից գոնե մեկը լինի ազգային ավիափոխադրող: Ներկայացված է ազգային փոխադրող ունենալու նպատակահարմարությունը: Վերլուծության արդյունքում հիմնավորվում է ազգային փոխադրողի արդյունավետ գործունեությանը և խոշոր ավիաընկերությունների հետ մրցունակությանը նպաստող օժանդակության անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. Տեղական ավիաընկերություն, ազգային փոխադրող, երկնքի ազատականացում, օդային փոխադրումներ, օժանդակություն:

Անկախության ձեռք բերումից հետո մինչև 2003թ. Հայաստանի երկնքի բացարձակ առաջատարը «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ն էր: Սակայն 1998թ.-ից իրավիճակը փոխվեց, չստանալով պետական աջակցություն՝ ընկերությունն սկսեց սրընթաց անկում ապրել:

«Հայկական ավիաուղիների» սնանկացման գործընթացից հետո ոլորտը տրվեց «Արմավիա»-ին: Մի քանի տարի անց «Արմավիա»-ն ևս սնանկացավ: Հետո ստեղծվեց նոր ավիաընկերություն՝ «Էյր Արմենիա» 2013-ի հոկտեմբերի 23-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «ՀՀ-ում մրցունակ և շարունակական օդային փոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիր»-ը, որն առավել հայտնի դարձավ որպես «բաց երկնքի» ծրագիր:

Ընդունված ծրագիրն ազդարարում էր երկնքի ազատականացում և, հաշվի չառնելով սեփական փոխադրողի շահերը, այն ամբողջությամբ տրվեց օտարներին:

Արդյունքում, չդիմանալով ռուսական ընկերությունների վարած քաղաքականությանը, «Էյր Արմենիա»-ն անմիջապես սնանկացավ, և ներկայում չունենք սեփական ավիաընկերություն: Այսօր Հայաստանում ուղևորային կանոնավոր փոխադրումներ է կատարում միայն մեկ ընկերություն՝ «Ավիակոմպանիա Արմենիա»-ն:

Հայկական երեք ազգային փոխադրողներն էլ սնանկացան տարբեր պատճառներով, որոնցից, թերևս, հիմնականներն էին՝

- չհիմնավորված չվերթների բացումը;
- որոշակի չվերթներին եւ մեր տարածաշրջանին չհամապատասխանող օդանավերի շահագործումը;
- առանց լուրջ վերլուծության նոր շուկաներ գրավելու ձախողված քաղաքականությունը;
- ներքին ու արտաքին գործընկերների հետ շարունակական հակասությունները;
- ընդհանուր կառավարման ցածր մակարդակը:

Օդային փոխադրումների հիմնական խնդիրը Հայաստանում 2-3 ավիաընկերության ստեղծումն է, որից գոնե մեկը լինի ազգային ավիափոխադրող:

Սեփական ավիափոխադրողի բացակայությունը նպաստում է, որ օտարերկրյա փո-

խաղրողները հաճախ թելադրեն իրենց գները: Օրինակ, ռուսական ավիաընկերությունները գերիշխում են «Հ երկնքում» թելադրելով իրենց գնային քաղաքականությունը:

Ինչպես հայտնի է, ավիացիոն փոխադրումների գինն առաջանում է օդանավի վարձակալության, նավթի գնի, օդանավակայանի սպասարկման վարձերից: Իսկ մեզ մոտ վառելիքի գինը 2 անգամ ավելի բարձր է, քան Վրաստանում: Բնական է, որ եթե դրսի ընկերությունը գալիս է և այստեղից է նավթ լիցքավորում, ապա ինքը կրկնակի թանկ է վճարում, քան Թբիլիսիում կվճարեր: Մինչդեռ օդանավակայանը կարող է իր սպասարկման գումարը ավելացնել, իսկ վառելիքը վաճառել այն գնով, որով գնել է: Դրա համար էլ ավիատոմսերի գները Հայաստանում այդքան թանկ են: Օրինակ, վառելիքի մեկ տոննան Իրանում 200 դոլար է, Դոմոդեդովոյի օդանավակայանում՝ 700-800 դոլար: Փոխարենը մեզ մոտ 1 տոննայի դիմաց վճարը 1200 դոլարը գերազանցում է: Անգամ Փարիզի «Շառլ դե Գոլ»-ում 1200 դոլար չէ, այլ ընդամենը 800-900 դոլար: Բացի այս՝ օդանավը Երևանում մի քանի հարյուր դոլարով թանկ է կայանում, քան Թբիլիսիի կամ այլ օդանավակայաններում:

1944թ. Չիկագոյի կոնվենցիայի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն սուվերեն է իր օդային տարածքը կառավարելու հարցում և կարող է դրա համար ընդունել այնպիսի օրենքներ, որ չեն հակասում ԻԿԱՕ-ի նորմերին: Այս տեսանկյունից ՀՀ կառավարությունը կարող է իրականացնել օրենսդրական կարգավորումներ, որոնք կնպաստեն տեղական ավիաընկերությունների աճին: Խոսքը, մասնավորապես, դեմպինգի արգելման մասին է, որի վերաբերյալ առանձին անդրադարձ կա նաև ԻԿԱՕ-ի կողմից, որն առաջարկում է «գիշատիչ» գների դեմ պայքարելու միջոցներ:

Այստեղ խնդիրը ոչ միայն դրսի խոշոր ավիաընկերությունների հնարավոր դեմպինգը միանգամայն օրինական ճանապարհով արգելելն է (ռուսական օպերատորների նման քաղաքականության պատճառով հայկական մի շարք օպերատորներ վերջին տարիներին սնանկացան կամ հայտնվեցին դրա եզրին), այլև նոր ստեղծվող ընկերություններին որոշակի արտոնություններ տալը, ինչպես, օրինակ, հարկերի թեթևացումը որոշակի ժամանակով կամ արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը:

ՀՀ կառավարությունը կամ մասնավոր հատվածը ազգային փոխադրողին կարող է օժանդակել նաև այլ գործիքակազմով, օրինակ, տեղական ավիաընկերությունների համար օդանավերի վարձակալության երաշխիքների/ ավանդների ապահովում՝ չեզոքացնելու հայկական փոխադրողի հնարավոր ավելի բարձր վարկային ռիսկայնությունը: Կամ, փոխադրողին ֆինանսապես աջակցում այն սպասարկվող երթուղիներում, որոնք արտասահմանյան երթուղիները չեն սպասարկում, սակայն կարևորվում են դեպի Հայաստան լավ կապ ապահովելու տեսանկյունից: Սա կարող է իրականացվել միջազգային մրցույթների ընթացակարգով՝ հավասար հնարավորություն ընձեռելով տեղական և միջազգային փոխադրողներին: Մեկ այլ գործիք է Չվարթնոցում տեղակայված փոխադրողների համար օդանավակայանի ընդհանուր վճարների սանդղակի նվազեցումը, օրինակ, կայանման վճարները, վառելիքի գները: Աջակցման միջոց է նաև ՀՀ կառավարության կողմից տեղական փոխադրողին սուբսիդավորելը կամ շուկայի ուսումնասիրությանն աջակցությունը՝ Հայաստանում տեղակայված փոխադրողների շահերին համապատասխան²:

Ազգային փոխադրող ունենալու անհրաժեշտություն է առաջացնում նաև Հայաստանի

1. <https://armlur.am/>

2. http://armef.com/hy/news/meknabanutyun/article_1382548407

Հանրապետության աշխարհագրական դիրքը՝ թե՛ զբոսաշրջության զարգացման, թե՛ երկրի անվտանգության, թե՛ առհասարակ տնտեսության զարգացման տեսակետից: Մեր երկիրը հյուսիսում սահմանակից է Վրաստանին, արևելքում՝ Արցախի Հանրապետությանը, արևելքում և հարավ-արևմուտքում՝ Ադրբեջանին և նրա կազմի մեջ մտնող Նախիջևանի ինքնավար հանրապետությանը, հարավում՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը, արևմուտքում՝ Թուրքիային: Սակայն սահմաններից միայն երկուսն են բաց: Հատկանշական է նաև այն, որ ՀՀ-ն դեպի ծով ելք չունի: Հայաստանն ունի խիստ սահմանափակ թվով երկաթուղային գծեր և լայնածավալ ճանապարհային ցանց: Քանի որ արևելքից Ադրբեջանով, արևմուտքում Թուրքիայով Հայաստանի Հանրապետությունը կտրված է արտաքին աշխարհից, իսկ Վրաստանի և Իրանի հետ սահմանները ոչ լիարժեք վստահելի են՝ ելնելով իրենց հարևանների հետ ունեցած քաղաքական ոչ այնքան բարենպաստ հարաբերություններից, մեր երկիրը գրեթե հայտնվել է շրջափակման մեջ: Այդ ամենը հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը մեծապես կախված է տրանսպորտային ծախսերից և միջսահմանային հաղորդակցումից: Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը լուրջ խնդիր է հարուցում երկրի անվտանգության համար, և ազգային փոխադրողի առկայությունը կարող է անկայուն քաղաքական իրավիճակներում ապահովել երկրի անվտանգությունը, այդ առումով չափազանց կարևոր է ունենալ առավել զարգացած և դիվերսիֆիկացված տրանսպորտային կապեր:

Ինչպիսի դրական արդյունքներ կարելի է ակնկալել ազգային փոխադրող ունենալու դեպքում.

1. Մրցակցության ավելի բարձր մակարդակ

Հազվադեպ է լինում, երբ միևնույն կետից փոխադրումներ են կատարվում մի քանի օտարերկրյա փոխադրողների կողմից և այդ ուղղությամբ առկա է լինում իրական և արդյունավետ մրցակցություն: Ներկայումս նման իրավիճակ առկա է միայն երեք ուղղություններով՝ Մոսկվա (տարբեր օդանավակայաններ), Դուբայ (տարբեր օդանավակայաններ), Թեհրան: Ընդ որում, տարբեր օդանավակայաններից կատարվող չվերթները չեն կարող համարվել լիարժեք մրցակցության մեջ գտնվող:

Հարկ է նշել նաև, որ միևնույն չվուղու շահագործումը մեկից ավելի փոխադրողի կողմից կախված է ոչ միայն Հայաստանի, այլ նաև համապատասխան օտարերկրյա պետության քաղաքականությունից: Հայաստանում տիրող իրավիճակը, երբ չունենք ազգային փոխադրող, և միայն օտարերկրյա փոխադրողներն են թռիչքներ իրականացնում, չի կարող ապահովել արդյունավետ մրցակցություն այն ուղղություններում, որոնք սպասարկվում են միայն մեկ փոխադրողի կողմից: Նման քաղաքականությունը սահմանափակում է մրցակցությունը՝ այն զարգացնելու փոխարեն:

2. Փոխադրումների ավելի լայն աշխարհագրություն

Ազգային փոխադրողը կարող է շահագրգռված լինել փոխադրումներ կատարել այն ուղղություններով, որոնք հետաքրքրություն չեն ներկայացնում օտարերկրյա համապատասխան կետում առկա միակ փոխադրողի համար: Նման իրավիճակ գրեթե մշտապես առկա է եղել: Այն առկա է նաև ներկայումս: Օրինակ, «Արմենիա» ավիաընկերությունը ներկայումս միակ փոխադրողն է, որը Երևանից չվերթներ է կատարում Լիոն, Թել Ավիվ, Էրբիլ, Բաղդադ, Վորոնեժ: Ընդ որում, Վորոնեժից բացի, մնացած ուղղությունները նախկինում երբեք չեն շահագործվել:

3. Արտաքին շուկաների սպասարկման հնարավորություն

Աշխարհի խոշորագույն օդանավակայաններն իրենց զարգացմամբ պարտական են ոչ այնքան ազատական քաղաքականության կիրառմանը, որն սկսել է լայն տարածում ստանալ ընդամենը վերջին երկու տասնամյակների ընթացքում, այլ տարանցիկ փոխադրումներին: Գործնականում տարանցիկ ուղևորափոխադրումներին արավոր չէ կազմակերպել բացառապես օտարերկրյա փոխադրողների միջոցով: Հայաստանի Հանրապետությունն ունի հարմարավետ աշխարհագրական դիրք միջազգային տարանցիկ հոսքեր սպասարկելու համար: Այս տարածաշրջանում են գտնվում աշխարհի խոշորագույն միջազգային տարանցիկ օդանավակայաններից չորսը՝ Դուբայը, Դոհան, Ստամբուլը և Աբու Դաբին: Տարանցիկ փոխադրումները նպաստում են նաև աշխարհագրության ընդլայնմանը և զբոսաշրջության զարգացմանը:

4. Զբոսաշրջության և տնտեսության այլ ոլորտների զարգացում

Ինչպես հայտնի է, ազգային փոխադրողը միջազգային ճանաչում ձեռքբերման և միջազգային կապերի զարգացման կարևոր գործիք է: Ի տարբերություն օտարերկրյա փոխադրողների, որոնք փոխադրումներ են կատարում տարբեր երկրներ և գովազդում են Հայաստանը ի թիվս իրենց կողմից սպասարկվող այլ օտար ուղևորությունների, ազգային փոխադրողը միշտ շահագրգռված կլինի օտար երկրներում և միջազգային ցուցահանդեսներում ներկայացնել Հայաստանը: Արդյունքում ունենում ենք ոչ միայն ուղևորի, այլ նաև զբոսաշրջիկի հոսք:

5. Զբաղվածության ավելի բարձր մակարդակ

Յուրաքանչյուր փոխադրող, ըստ էության, խոշոր գործատու է: Այստեղ խոսքը գնում է թե օդաչուների, թե ավիացիոն տեխնիկների, թե սպասարկող անձնակազմի մասին:

6. Դեպի պետական բյուջե լրացուցիչ եկամուտների հոսք

Օտարերկրյա փոխադրողների մեծամասնության եկամուտները չեն հարկվում, ի տարբերություն ՀՀ փոխադրողների: Ազգային փոխադրողի գործունեությունը կարող է էապես նպաստել ՀՆԱ-ի ՀԱԵ-ի աճին:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ 2013թ. ՀՀ որդեգրած «բաց երկնքի» քաղաքականությունը ազատության բազմակողմանի իրավունքներ տրամադրեց բոլոր հետաքրքրված երկրներին՝ առանց փոխադրողների քանակի, թռիչքների հաճախականությունների, տարողությունների, նշանակման կետերի և սակագների սահմանափակումների: Մակայն տվյալ քաղաքականության պայմաններում անհրաժեշտ է ապահովել տեղական ավիաընկերությունների առկայությունը, որոնք կարող են որպես հայկական ընկերություն իրականացնել թռիչքներ և հավասարակշռություն հաստատել շուկայում: Միաժամանակ, ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ «բաց երկնքի» քաղաքականության պայմաններում նորաստեղծ հայկական ավիաընկերությունները, առանց որևէ արտոնության, չեն կարող մրցակցել միջազգային մի շարք խոշոր ավիաընկերությունների հետ և ապահովել արդյունավետ գործունեություն:

Գրականության ցանկ

1. <https://armlur.am/>
2. http://armef.com/hy/news/meknabanutyun/article_1382548407

Сона Караварданян

*Национальный Политехнический Университет Армении,
Институт машиностроения,
транспортных систем и проектирования,
аспирант*

НАЦИОНАЛЬНЫЙ ПЕРЕВОЗЧИК КАК ДВИЖУЩАЯ СИЛА ГРАЖДАНСКОЙ АВИАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация: Рассматриваются причины банкротства армянских национальных авиаперевозчиков и их влияние на развитие воздушного транспорта. Обсуждается вопрос создания местных авиакомпаний в Армении, по крайней мере, одна из которых должна быть национальным авиаперевозчиком. Представлена необходимость наличия национального перевозчика. В результате анализа обоснована необходимость государственного покровительства для эффективной деятельности и конкурентоспособности национального перевозчика.

Ключевые слова: Местная авиакомпания, национальный перевозчик, небесная либерализация, авиаперевозки, поддержка.

Sona Karavardanyan

*National Polytechnic University of Armenia,
Mechanical Engineering,
Transportation Systems and Design Institute,
Graduate Student*

FLAG CARRIER AS A MOVING POWER OF CIVIL AVIATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Abstract: The reasons for the bankruptcy of the Armenian national carriers and their impact on the development of air transport are considered. The issue of creating local airlines in Armenia is being discussed, at least one of which must be a flag carrier. It's presented the need of a flag carrier. As a result of the analysis, the necessity of government protection for the effective operation and competitiveness of the national carrier is substantiated.

Keywords: Local airline, flag carrier, sky liberalization, air transportation, support.

Նունե Պետրոսյան, Արմեն Նուրիջանյան, Աշոտ Սարգսյան

*Շուշիի տեխնոլոգիական համալսարան, գյուղատնտեսական ֆակուլտետ,
Ագրոբիզնես Գ.74 Մ, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Ա.Մարկոսյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
էլ. Հասցե nune.petrosyan.1994@mail.ru*

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Համառոտագիր. Հոդվածում քննարկվել է Արցախի Հանրապետության էներգետիկ անվտանգության համակարգը: Երկրի արտաքին տնտեսական գործունեության հիմնական նպատակը արտահանման ծավալների գերազանցումն է ներմուծման ծավալների նկատմամբ:

Արցախի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրության և արտահանման համեմատական վերլուծությունը վկայում է, որ այն կարող է դառնալ արտահանման ավելացման կարևոր ուղի, ինչը կնվազեցնի զուտ արտահանման բացասական մեծությունը և դրանով իսկ հնարավորություն կստեղծի արտաքին առևտրի բարելավման գործում:

Բանալի բառեր: Էներգետիկ անվտանգություն, անվտանգության համակարգ, Էներգետիկ ռեսուրս:

Էներգետիկան ժողովրդական տնտեսության հիմքն է: Էներգետիկան, որպես կա-րևորագույն ոլորտ, պետության կարիքների բավարարման համար ամենօրյա պայմաններում ապահովում է հնարավորին մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում:

Առանց էներգետիկայի անհնար է պատկերացնել որևէ երկրի տնտեսություն: Երկրների զարգացման մակարդակը կարելի է որոշել արտադրվող և օգտագործվող էներգիայի քանակով և որակով: Տնտեսության աշխարհագրությունը ուղիղ համեմատական է էներգիայի տեղաբաշխմանը: Էներգետիկան իր մեջ ընդգրկում է վառելիքաէներգետիկան, էլեկտրաէներգետիկան, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկան: Վառելիքային ռեսուրսներն են քարածուխը, գորշ ածուխը, նավթը, այրվող գազերը, այրվող թերթաքարերը, տորֆը, փայտը: Էներգետիկ ռեսուրս է համարվում նաև արևային էներգիան, երկրի ներքին էներգիան, հողմային էներգիան և այլն:

Արցախի Հանրապետության կառավարության վարած քաղաքականությունն Էներգետիկայի ոլորտում ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հիմնվելով էներգակիրների մատակարարման բազմազանեցման, տեղական էներգապաշարների ամբողջական, արդյունավետ օգտագործման և էներգաարդյունավետ ժամանակակից միջոցների իրականացման ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա:

Էներգետիկայի ոլորտի անկախությունը կարող է նույնացվել էներգետիկ անվտանգության հետ: Այն պահանջում է ոչ թե առանձնացում, մեկուսացում, այլ համագործակցություն տարբեր երկրների հետ, փոխկապվածություն տարբեր երկրներից, այդ թվում՝ էներգիայի սպառողներից ու արտադրողներից: Երկրի ներքին էներգետիկ բարեկեցությունը ուղղակիորեն կախված է այլ երկրներից և տարածաշրջանների հետ մեր կառուցած հարաբերություններից:

Էներգետիկան համաշխարհային տնտեսական առաջընթացի կարևորագույն շարժիչ

ուժն է և ուղղակիորեն ազդում է երկրագնդի միլիարդավոր բնակիչների բարեկեցության վրա: Գոյություն ունեն էներգետիկ անվտանգության բազմաթիվ գործոններ, սակայն ամբողջ աշխարհում ընդունված այս հասկացությանը դեռևս սահմանում չի տրված: Տարբեր երկրների միջև տարաձայնություններն այս հարցի շուրջ խորանում են, քանի որ էներգիա արտադրող և էներգիա սպառող երկրները տարբեր տեսանկյուններից են մոտենում էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներին ու դրանց լուծումներին:

Էներգետիկ անվտանգությունը բարդ և բազմաշերտ հասկացություն է: Նման գործընթացի կառավարմանը վերաբերող առաջին քայլը պետք է կապված լինի դրա գնահատման նույնպես բարդ և դժվարին մոտեցումների հետ: Վերջիններիս ձևավորումն ու դրանց հիման վրա համապատասխան հանձնարարականների ու միջոցառումների մշակումը և կիրառումը, ամենից առաջ, կապված են մի շարք մեթոդաբանական դժվարությունների հետ: Խնդիրն այն է, որ ներկայումս թեև տարբեր կազմակերպությունների ու հեղինակավոր միջազգային կառույցների կողմից գնահատվում և օգտագործվում են էներգետիկ ռեսուրսներին վերաբերող տարբեր ցուցանիշներ և դրանց համակարգեր, սակայն դրանք չեն կապակցվում էներգետիկ անվտանգության հասկացության հետ կամ էլ թույլ է էներգետիկ ռեսուրսների արդյունահանման և օգտագործման ու էներգետիկ անվտանգության միջև եղած կապը:

Ուսումնասիրելով «Էներգետիկ անվտանգություն և էներգետիկայի հիմնական խնդիրները» թեման՝ կարելի է ասել, որ նաև կարևոր է միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը կատարվել է բրիտանական հայտնի Բրիթիշ Փեթրոլիում (BP) ընկերության կողմից տրամադրված նյութերի և հաշվետվությունների միջոցով: Այն աշխարհի խոշորագույն նավթ և գազ արդյունահանող միջազգային կառույցն է, զբաղվում է էներգետիկ համաաշխարհային շուկայի ուսումնասիրությամբ:

Համաձայն ընկերության տվյալների՝ էներգետիկ սպառման ծավալներն ամբողջ աշխարհում այս պահին կազմում է մոտ 13 մլրդ տոննա նավթային համարժեք (տ.ն.հ.): Տ.ն.հ.-ն համարժեք է մոտ 7.3 բարել նավթի կամ 11.6 ՄՎտ/ժ էլեկտրաէներգիայի: Չափման նման միավորով ցույց է տրվում տվյալ պետությունում էներգակիրների ընդհանուր սպառումը, տվյալ դեպքում հաշվառվում է նավթի, գազի, ածխի, միջուկային էներգիայի, հիդրոկայանների, վերականգնողական էներգիայի սպառումը թե՛ առանձին պետություններում և թե՛ աշխարհում:

Աշխարհի թիվ մեկ սպառողը վերջին տարիներին շարունակում է մնալ Չինաստանը՝ 3 մլրդ 130 մլն տ.ն.հ. չափով, ինչն աշխարհում սպառվող էներգակիրների 23%-ն է: 2016թ. համեմատ Չինաստանում էներգակիրների պահանջարկի աճը կազմել է 3.1%, այն դեպքում, երբ նախորդ 10 տարիներին այդ երկրում էներգակիրների նկատմամբ պահանջարկն աճում էր միջինը 4.4%-ով: Նվազման նման միտման պատճառը Չինաստանում տնտեսական աճի շարունակական դանդաղումն է, որն էլ հանգեցնում է նաև էներգակիրների նկատմամբ պահանջարկի դանդաղմանը:

2 մլրդ 234 մլն տ.ն.հ. էներգակիրներ սպառող երկրորդ պետությունը ԱՄՆ-ն է, ինչն աշխարհում սպառվող էներգակիրների 16.5%-ն է: 2016թ. համեմատ էներգակիրների սպառման աճն այս երկրում կազմել է մոտ 0.6%, ինչը բացառիկ է այդ պետության համար, քանի որ նախորդ 10 տարիներին այստեղ էներգակիրների սպառման ծավալների կայուն նվազում էր գրանցվում տարեկան միջինը 0.3%-ով: Այս միտումները բացատրվում են ԱՄՆ տնտեսությունում վերջին տարիներին նկատվող լճացման երևույթներով և էներգախնայող հա-

մակարգերի ակտիվ ներգրավմամբ: Համեմատության համար ասենք, որ, օրինակ, 2007թ. ԱՄՆ-ում ավելի շատ էներգակիրներ էին սպառում, քան 2017թ.:

Սպառման ծավալներով երրորդ պետությունը Հնդկաստանն է, որը, սակայն, էականորեն զիջում է առաջին և երկրորդ տեղերն զբաղեցնող Չինաստանին և ԱՄՆ-ին, 753 մլն տոննա նավթ կամ համաշխարհային սպառման 5.6%-ը: Այստեղ ևս նկատվում է պահանջարկի կայուն աճ, ու եթե նախորդ 10 տարիներին այն կազմել էր միջինը 4.6%, ապա 2017թ. աճը եղել է արդեն 5.7%: Սա նշանակում է, որ հետագայում էներգակիրների պահանջարկի հիմնական շուկան կարող է դառնալ Հնդկաստանը:

Իսկ ինչ վերաբերվում է Արցախի Հանրապետությունում էներգետիկայի ոլորտին, այստեղ էլեկտրաէներգիայի մատակարարը «Արցախէլեկ» ԲԲԸ ընկերությունն է, որը հանրապետության էլեկտրաէներգիայի մատակարարման շուկայում զբաղեցնում է 99%-ը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է: Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

- Արժույթային ռիսկեր.
- Բնակլիմայական պայմանների ռիսկեր

Առաջին տեսակի ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև Հայաստանի և Արցախի հանրապետությունների դրամային կառույցների կողմից փոփոխությունների հնարավորությունը:

Երկրորդ՝ բնակլիմայական պայմանները նույնպես էական ազդեցություն ունեն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և, հետևաբար, ֆինանսական ցուցանիշները: Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է 1976թ. ԱՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա և համարվում է նախկին ԽՍՀՄ լավագույն սարքավորումներով առավելագույնս հազեցած ՀԷԿ-երից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ը հազեցած է երկու հիդրոտուրբիններով՝ յուրաքանչյուրը 25 ՄՎտ դրվածքային հզորությամբ և վայրկյանում 33.2 մ³ ջրի օգտագործման ծավալներով:

Սարսանգի ջրամբարը նախատեսված է Թարթառ ՀԷԿ-ի միջին բազմատարյան 558մլն մ³ ջրհոսքը կուտակելու համար: Ջրամբարի լրիվ ծավալը 565 մլն մ³ է, իսկ օգտատար ծավալը՝ 495 մլնմ³, հայելու մակերեսը՝ 14,2 կմ² Ջրամբարից հաշվարկային ջրթողը 840 մ³/վրկ. է, որից 740 մ³/վրկ-ը՝ վթարային ջրթողով, 70 մ³/վրկ-ը՝ դերիվացիոն համակարգով ու 30 մ³/վրկ-ը՝ ոռոգման փականներով: Ամբարտակի երկարությունը 550մ է, առավելագույն ճնշումը՝ 126 մ, իսկ հաշվարկային ճնշումը՝ 87,5մ: Ջրամբարի աջ ափին գետի հունի մակարդակին կառուցված է շինարարական թունել՝ 430մ:

Ուսումնասիրենք «Արցախէլեկ» ԲԲԸ-ը 2014-2017 թթ. ծավալած գործունեությունը:

2014թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը եղել է մոտ 166 416 583 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից, «Սարսանգ ՀԷԿ»՝ 103 718 080 կվտ/ժ, «Թրդի կասկադ»՝ 26

701 437 կվտ/ժ, «Մատաղիս կասկադ»՝ 35 997 066 կվտ/ժ, ինչը կազմում է մոտ 2 795 359 691 ՀՀ դրամ:

2015թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 140 280 018 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից, «Սարսանգ ՀԷԿ»՝ 81 927 800 կվտ/ժ, «Թրդի կասկադ»՝ 28 206 157 կվտ/ժ, «Մատաղիս կասկադ»՝ 30 146 061 կվտ/ժ, ինչը կազմում է 2 612 996 592 ՀՀ դրամ:

2016թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 191795311 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից, «Սարսանգ ՀԷԿ»՝ 104 313 560 կվտ/ժ, «Թրդի կասկադ»՝ 54180539 կվտ/ժ, «Մատաղիս կասկադ»՝ 33301212 կվտ/ժ, ինչը կազմում է 3 644 110 909 ՀՀ դրամ:

2017թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 181 377 803 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից, «Սարսանգ ՀԷԿ»՝ 101 801 080 կվտ/ժ, «Թրդի կասկադ»՝ 44 976 022 կվտ/ժ, «Մատաղիս կասկադ»՝ 34 600 701 կվտ/ժ, ինչը կազմում է 3 446 178 260 ՀՀ դրամ:

Ընդհանրացնելով՝ կարելի է եզրակացնել, որ «Արցախի էլեկտրաէներգետիկ» ԲԲԸ ընկերությունը շահույթով է աշխատել հատկապես 2016թ-ին: Արտադրության ծավալը 2015թ-ի համեմատ ավելացել է 13,6%-ով, «Սարսանգ ՀԷԿ»-ը՝ 12,7%-ով, Թրդի կասկադ՝ 19,2%-ով, «Մատաղիս կասկադ»-ը՝ 11%-ով:

2017թ-ին գրանցվել են ավելի ցածր ցուցանիշներ, արտադրության ծավալը նվազել է 9%-ով, որը կապված է սակագների փոփոխությունների և, ինչու չէ, նաև 2016թ-ի ապրիլյան պատերազմի հետ:

Արցախի Հանրապետության տարածքում փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորման և այդ ՀԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների սահմանման գործընթացն սկսվել է 2011 թվականից: Սակագների սահմանման համար հիմք է ընդունվել ՀՀ-ում գործող հաստատուն դրույքաչափը, որը կազմել է 18,274 դրամ/կիլովատտ/ժամ:

2018 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրված է 18 փոքր հիդրոէլեկտրակայանների, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 66.349 մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 379,671 մլն. կվտ/ժ: Կառուցման փուլում են գտնվում 16 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ ընդհանուր դրվածքային հզորությունը 73.879 մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 437,217 մլն. կվտ/ժ: Կանխատեսվող ՓՀԷԿ-երի քանակը՝ 6:

Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը լիցենզավորված փոքր հիդրոէլեկտրակայաններից (մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը կազմում է 25.4 դրամ/կիլովատտ/ժամ, ներառյալ ԱԱՀ՝ հաշվարկված Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 19-ի թիվ 15Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համապատասխան: Նշված մեթոդիկայով հաշվարկված սակագների հիմքում դրվում է անհրաժեշտ հասույթի (ԱՀ) ապահովման սկզբունքը, ըստ որի արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից էլեկտրական էներգիայի վաճառքից ստացված հասույթը պետք է բավարարի՝

• էլեկտրական էներգիայի հուսալի և անվտանգ արտադրության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի (ԾՊԾ) իրականացումը՝

- 1) հիմնական արդյունաբերաարտադրական անձնակազմի աշխատավարձ.
- 2) շահագործման համար անհրաժեշտ նյութական ծախսեր.
- 3) տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսեր.

4) իրացման ծախսեր.

5) վարչական ընդհանուր ծախսեր. էլեկտրական էներգիայի արտադրության համար օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության (Մ) հատուցումը,

• էլեկտրական էներգիայի արտադրության համար օգտակար և օգտագործվող ակտիվների դիմաց ողջամիտ շահույթի (Շ) ապահովումը:

ԱՀ -ն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = Շ \cdot \Gamma + Մ + \Delta$$

Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի համար սահմանվում են միադրույք (դրամ/կՎտժ) սակագներ, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Մ = ԱՀ / ԱԷ,$$

որտեղ՝ ԱԷ-ն առաքվող էլեկտրական էներգիայի քանակն է:

2017 թվականի հունվարի 1-ից հետո լիցենզավորված փոքր հիդրոէլեկտրակայաններից (մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը Հանձնաժողովի կողմից սահմանվել է 2017 թվականի մայիսի 25-ի N 28-Ն որոշմամբ և կազմում է 28,243 դրամ/կիլովատտ/ժամ ներառյալ ԱԱՀ: Սակագները սահմանվում և վերանայվում են Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ սահմանված մեթոդիկայի համաձայն: Սակագները հաշվարկվում են հետևյալ հաշվարկային բանաձևով՝ հիմք ընդունելով գործող 25.4 դրամ/կիլովատտ/ժամ սակագինը.

$$T = T1 [K1 * CPI/100 + K2 * R1/R2],$$

որտեղ՝

T-ն սահմանվող սակագնի մեծությունն է (դրամ/կիլովատտ ժամ),

T1-ը գործող սակագնի մեծությունն է (դրամ/կիլովատտ ժամ),

K1-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղանի տեմպով պայմանավորված և ընդունվում է հավասար 0,35-ի,

CPI-ն Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

K2-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխմամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0,65-ի,

R1-ը Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է ընթացիկ տարում՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից, R2-ը R1 մեծության որոշման համար ընդունված ամսվան համապատասխանող ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է նախորդ տարում՝ հրապարակված Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից:

Արցախի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումը կապված է նաև «Արցախիէկ» ԲԲԸ-ի մենաշնորհ լինելու հետ: Հանրապետության 99% էլեկտրա-

Էներգիան մատակարարում է «Արցախիէկ» ԲԲԸ-ն:

Ընդհանրացնելով նյութը՝ նշենք, որ առանց էներգետիկայի անհնար է պատկերացնել որևէ երկրի տնտեսություն: Կարելի է քայլեր ձեռնարկել փոքր հեկ-երին աջակցելու և մրցակցային պայքար հանելու համար, ինչը կխթանի էլեկտրաէներգիայի սակագների իջեցմանը, ինչու չէ՝ նաև բնակչության բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

Нуне Петросян, Армен Нуриджанян, Ашот Саргсян

*Шушский технологический университет,
факультет агрономии, магистратура*

ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Аннотация: В статье рассматривается система энергобезопасности Республики Арцах, основной целью внешнеэкономической деятельности страны является превышение объемов экспорта по сравнению с импортом. Сравнительный анализ выработки и экспорта электроэнергии показывает, что это может стать важным способом увеличения экспорта, что снизит отрицательную стоимость экспорта и, таким образом, позволит улучшить внешнюю торговлю.

Ключевые слова: Энергетическая безопасность, система безопасности, Энергетический ресурс.

Nune Petrosyan, Armen Nuridjanyan, Ashot Sargsyan

*Shushi University of Technology,
the Faculty of Agronomy, Post Graduated*

ENERGY SECURITY OF THE REPUBLIC OF ARTSAKH

Abstract: The article discusses energy security system of the Republic of Artsakh. The main objective of the country's foreign economic activity is to exceed export volumes for imports. Comparative analysis of electricity generation and export indicates that it can become an important way to increase export, which will reduce the negative export value and thus enable it to improve foreign trade.

Keywords: Energy security, security system, Energy resource.

Տնտեսագիտության և բիզնեսի ոլորտների ուսումնասիրողներ

ԷԿՈՆՈՄԻԿԱ ԳԻՏԱԿԱՆ պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը, ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ համապատասխան ամբիոնի (ստորաբաժանման) երաշխավորությունը՝ ստորագրված և հաստատված:

Հոդվածները պետք է ուղարկել info@economica.am, science@economica.am էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի Ֆորմատը՝ B5 (176×250 մմ), լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է իրենից ներկայացնի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Բանալի բառեր**» և նշել 7-10 բանալի բառեր:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր: Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի: Ցանկալի է հնարավորինս խուսափել գունավոր ձևավորումից:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, աճման կարգով՝ 10 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (Alignment: Justify): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (Bold), այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը:

Խմբագրության կողմից հոդվածն ընդունվելու դեպքում հեղինակը պետք է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վճարի հոդվածի տպագրության համար նախատեսված գումարը, իսկ վճարման անդորրագրի սկանավորված տարբերակն ուղարկի խմբագրության էլեկտրոնային փոստին: «ԷԿՈՆՈՄԻԿԱ ԳԻՏԱԿԱՆ» պարբերականում հոդվածի հրատարակման համար սահմանվել է 1 էջը 1500 ՀՀ դրամ: Փոխանցման հաշվեհամարն է Հ/Հ 24109000504200, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

«ԷԿՈՆՈՄԻԿԱ» և «ԷԿՈՆՈՄԻԿԱ ԳԻՏԱԿԱՆ» պարբերականները տեղադրվում են Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային գրադարանի կայքում (<http://tert.nla.am>):

Կոնտակտային Էլ. փոստի հասցեն է՝ info@economica.am, science@economica.am

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել ԷԿՈՆՈՄԻԿԱ պարբերականի գլխավոր, ԷԿՈՆՈՄԻԿԱ-ԳԻՏԱԿԱՆ-ի պատասխանատու խմբագիր Լուսյա Մեհրաբյանի հետ՝ գրելով economicalus@rambler.ru էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37491 565240 հեռախոսահամարին:

Հիմնադիր հրատարակիչ՝ «Լ.Մ.Մ.Ա.» ՍՊԸ
ԷԿՈՆՈՄԻԿԱ-ԳԻՏԱԿԱՆ/հրատարակության Ա տարի
Թողարկման խմբագիր ԼՈՒՍՅԱ ՄԵՀՐԱԲՅԱՆ
Ձևավորումը՝ ՆԱՐԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Վկայական 03Ա 071056: Գրանցված է Երևանի Մաշտոցի տ/բ կողմից:

Գրանցման համարը՝ 271.110.03050

Գրանցման տարին՝ 14.02.2006 թ.:

Արտատպման դեպքում հղումը պարտադիր է: Չափը 21X29.7: Ծավալը՝ 152 էջ:

Հանձնվել է տպագրության 18.06.2019 թ.: Տպաքանակը՝ 400:

Գինը՝ պայմանագրային: Տպագրվել է «ՏՊԱՐԱՆ» տպարանում: